2004

1312 Հանձն

Սրբազան Գրիգորիսին

Գրիգորիս Դպիր

Սանկտ, 19-12-1973

Հանձն. Հարգանքս արտահայտեմ
Ուղղագրի Նոր Հայերենագրության։

22
Ն-92
5123
1018-ՀԿՀ

ԿՐԻՍՏՈՆԵԱՅ ՍՅՈՒԼՈՒ

ԿԱՄ

Բացատրութիւն Սուրբ Գրոց երեսելի մասերուն, անոնց վերաբերեալ աղօթքներովը։

ԵՐԽԱՏԱՍԻՐԵԼ

Ի Վերապատուելի Մ. Ուխլամ Հովէդ քահանայէ Ընդդէմ Եպիսկոպոսական Եկեղեցւոյն։

ՍՈՒՐՈՒԿ - ՄԵՍՐՈՊԵԱՆ
Կ. ՊՈԼԻՍ
1877
ԱԶԳ. ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Ի ՀԱՄԻՒՐՆԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ Խ. Յ. ՄԷԼԻՔՍԷԼՈՒՄԵԱՆՑ
1847

5123 Ա.Հ.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ—Арм. ССР
Ա. Հայ. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

519-74

Ա Զ Դ

Այս պատուական գրքիս գիտուն և երկիւղած հեղինակը՝ յատկապէս աշխատասիրած է ան բարեպաշտ մարդոյը համար, որոնք Անգլիայի մէջ սովորաբար այցելութեան կ'երթան աղքատ ընտանիքներու, մանաւանդ հիւանդներուն, բանտարկեալներուն, և որ և իցէ նեղութեան և տրտմութեան մէջ գտնուողներուն. որպէս զի յիշեալ եղբայրաբար Այցելուները դիւրութիւն մը ունենան, առանց խղճալիները մխիթարելու Սուրբ Գրոց խրատական և մխիթարական քաղցր խօսքերովը. և ասոնց պատճառաւ՝ գրքիս անունն ալ ԳՐԻՍՏՈՆԵԱՑ ԱՑՑԵԼՈՒ գրած է։

Եւ որովհետև այսպիսի հոգեշահ գիրք մը ոչ միայն աղքատաց և տառապելոց՝ հապա ամէն ջերմեռանդ Քրիստոնէի շատ հարկաւոր և օգտակար է, վասնզի արժան համարեցանք անոր Առաջին մասը միայն, որ է "Դատաստանութիւն և աղօթք Մատթէոսի Աւետարանին ընտիր հատուածներուն վրայով", առ այժմ թարգմանութեամբ 'ի լոյս ընծայելու, աղէկ գիտնալով որ Հայոց ազգին ջերմեռանդ բարեպաշտութեանը և փոփոխելի դրդոյկ մը պիտի ըլլայ ասիկայ, և թէ այսպիսի Քրիստոնէայ Այցելու մը՝ անտարակոյս սիրով պիտի ընդունին ամէնքն ալ։

Վերջապէս՝ գործոյս Վերապատուելի Հեղինակին հետևելով, (ինչպէս որ կ'ըսէ իր յառաջաբանութեանը մէջ) մենք ալ ասոնց մեր թարգմանութիւնը խոնարհարար Աստուծոյ խընամոցը կը յանձնենք, որուն սուրբ խօսքը բացատրուած է հոս, և շարունակ Անոր օրհնութիւնը և օգնութիւնը խընդրուած՝ Աղօթքներուն մէջը. աղաչելով մեր Տէրոջը և Փրկչին Յիսուսի Քրիստոսի, որ նկատ "աղքատներուն Աւետարան քարոզելու", որպէս զի ասոնց դրդոյկը՝ Տգէտներուն Վարժութեանը Ջերմեռանդներուն Շինութեանը, նաև Դիմելութեան և Տրտմութեան մէջ գտնուող Աստուծոյ ծառաներուն՝ Մխիթարութեան և Փաստաբանութեան մէկ միջոց մը ըլլայ. Ամէն։

ՅԱՇԿ ԴԼԽՈՑ

ԳԼՈՒԽ		ԵՐԵՍ
Ա	Յիսուս Փրկիչ աշխարհի	1
Բ	Յիսուս Քրիստոսի փորձութիւնը Անապատին մէջ	6
Գ	Հոգւով Աղքատները	12
Դ	Սգաւորները	17
Ե	Հեզերը	21
Զ	Անօթութիւն և Ծարաւ Արդարութեան	28
Է	Ողորմածները	33
Ը	Սրտով Սուրբերը	40
Թ	Խաղաղութիւն ընողները	46
Ժ	Հալածեալները	52
ԺԱ	Մեր երկնաւոր Հայրը	58
ԺԲ	Աստուծոյ թագաւորութիւնը և կամքը	64
ԺԳ	Ամէն աւուր Հացը	70
ԺԴ	Մեղաց թողութիւնը	77
ԺԵ	Փորձութենէ Ազատութիւն	84
ԺԶ	» » » Շարունակութիւն	88
ԺԷ	Երկրպագութիւն և Փառք	94
ԺԸ	Աստուծոյ Նախախնամութիւնը	98
ԺԹ	Հունձի Պշտիներուն Նուազութիւնը	104
Ի	Յիսուս խաչեալ	110

ՔՐԻՍՏՈՆԵՐՈՅ ԸՆԹԵՂԻՆ

ՈՒՌԻԿ • ՄԵԼԻՔՍԵԹ
Ե. ՊՈՂՈՍ
1877
ԱՐՔԱ ԱՐԱՏԵՍԻ ՄԱՐԴԱՍԻՐԱՑ

ՅԻՍՈՒՍ ՓՐԿԻՉ ԱՇԽԱՐՀԻ

ՄԱՌ. Ը. 21.

"Ու անոր անունը Յիսուս դնես, որ անիկայ իր ժողովուրդը իրենց մեղքերէն պիտի խալըսէ" :

Այն անունները որ սուրբ Գիրքը կուտայ թէ անձանց և թէ տեղերու, հասարակօրէն մասնաւոր նշանակութիւն մը ունին : Այս ասոնց մէջ չկայ ուրիշ անուն մը աւելի գեղեցիկ և աւելի աղգու, քան որչափ ՓՐԿԻՉ անունը : Իր անունը ՅԻՍՈՒՍ՝ Փրկիչ կընշանակէ : Այրբ որ Տէրն մեր ծնաւ աս աշխարհիս մէջը՝ փոքրիկ տղու մը պէս, աս հրամանը եղաւ. "Ու անոր անունը Յիսուս դնես, որ անիկայ իր ժողովուրդը իրենց մեղքերէն պիտի խալըսէ" :

Մտածենք քիչ մը մեր Տէրոջը աս ուրախարար պաշտօնին վրայ. ու աղաչենք զՔոգին

սուրբ որ մեր սիրտերը պատրաստէ ընդունելու համար ան մեծ փրկութիւնը որ Աստուած խրրկեց, ու մեզի համար ստացաւ զանիկայ Յիսուս Քրիստոս իր սիրելի որդին։

1. Եթէ որ Փրկչի մը վրայով կըմոռցենք, բնականաբար կըմոռցենք անանկ մեկու մը վրայով՝ որ ՇՈՒՐ ԵՒ կարիքոցիներ ունի։ Քանզի ան մարդը որ ծովին ալիքներուն մէջ կըթաղուի իր ընկերը վտանգէ ազատելու համար, չէ՞ որ միայն գութ և կարեկցութիւն ունենայուն համար է։ Կամ որ ատեն տուն մը բըռընկելու ըլլայ ու տեսնես որ մէկը առանց վախնալու բոցերուն մէջ կընետուի, փոքրիկ տղայ մը կըրակէն ազատելու համար, չէ՞ս ըսեր թէ ասիկայ գթութեան մէկ գործ մըն է։ Ընդ՝ ի՞նչ պիտի ըսենք Յիսուսի համար, որ մեռնելու եկաւ որպէս զի մեզի մէջ կորսուած բոլոր աշխարհս ազատէ։ Մի՞թէ գթած չէ՞ Ան։ Ո՜հ, արդարև հիանալի գթութեան և սիրոյ գործ մըն էր ասիկայ։

2. Բայց սակայն՝ գթութեան մեծ գործքեր կատարող անձը, պէտք է որ Կարող մէկը ըլլայ և միանգամայն ողորմած. պէտք է որ ազատելու բաւականութիւնը ունենայ։ Ահա ասանկ է մեր Տէր Յիսուս Քրիստոսը։ "Ընիկայ կատարելապէս կարող է փրկելու անոնք որ իրմով առ Աստուած կըդիմեն"։ Եբր. է. 25։ "Ընիկայ Հզօր Աստուած է, և իշխան խաղա-

զութեան"։ Յհ. Թ. 6։ Ուստի (ինչպէս որ կրկարդանք աս գլխուն քսանուիրեք համարը) անիկայ նաև Յմմանուէլ կրկոչուի, որ կը թարգմանուի՝ Աստուած մեզի հետ. որ մեր մեղանչական մարմինը հագաւ, թէպէտև ինքը կատարեալ սուրբ էր։ Որդի մարդոյ էր ան, բայց նաև Աստուած ամենակարող։ Այսիկայ անանկ մէկ խորհուրդ մըն է, որ անհասանելի է մտաց։ Բայց երբ որ ասանկ Յմմանուէլ եղաւ ան, այսինքն Աստուած մեզի հետ, ան նոյն ատենը ցուցուց իր սէրը և կարողութիւնը, կորսուած աշխարհը փրկելով։

"Այս խօսքը ճշմարիտ է՝ ու բոլորովին ընդունելութեան արժանի. որ Քրիստոս Յիսուս աշխարհ եկաւ մեղաւորները փրկելու. որոնց գլուխը ես եմ"։ ա Տիմ. ա. 15։ Իւրաքանչիւր Ադամայ որդի մեղքի մէջ ծնած է. և ասոր համար բարկութեան որդի է։ Իւրաքանչիւր ոք մեղմէ յանցաւոր եղած է անթիւ մեղքերով, որոնց համար յաւիտենական պատիժ կրելու արժանի ենք. և մէկ կերպով մը չենք կրնար ազատիլ անկից, բայց միայն Յիսուսի դիմելով որ գալու բարկութենէն կ'ազատէ մեզ։

Բայց ո՞վ են ասոնք որ իր [illegible] կրկոչուին, որոնք կը փրկէ ան։ Անոնք են որ մեղքը կ'ատեն, կը զղջան և մեղքէ կը հրաժարին։ Անոնք են որ առ Քրիստոս կը դառնան իբրև իրենց մէկ հատիկ ապաստանարանը, և կը հա-

ւատան անոր՝ իրենց հոգիները փրկելու համար։ Ան ժողովուրդը՝ որն որ Յիսուս կը ճանչնայ հիմա, և որ վերջին դատաստանի օրը իր ժողովուրդը պիտի անուանէ, անոնք սուրբ Հոգիով նորէն ծնած են, ու զԲրիստոս հագեր են։ Անեղքէն ազատելով ու Աստուծոյ ծառայ ըլլալով՝ անոնք իրենց պտուղը ունին սրբութիւնով, և վերջապէս յաւիտենական կեանքը պիտի ժառանգեն։

Սիրելի՛ ընթերցող՝ զգուշութեամբ հարցուր դուն քեզի, թէ արդեօք դուն ալ աս ժողովուրդին կը վերաբերի՞ս, անոնց մէկն ալ դուն ես։ Դիտնէ զքեզ որ իմանաս թէ ունի՞ս զըղջում, հաւատք և սրբութիւն. քանզի ասոնք են էր ժողովուրդին նշանները։ Թէ որ ասոնց մէկն ալ չունիս նէ, աղօթք ըրէ որ դուն ալ ստանաս զանոնք Յիսուս Քրիստոսով. որովհետև ասոնք իր Հոգիին պարգևներն են։ Ո՞հ, անդադար աղօթք ըրէ մինչև որ ձեռք բերես աս շնորհքները։ Զբլլայ որ յուսաս թէ քու յատուկ գործքերովդ կարնաս պիտի փրկուիլ, չէ՞. Յիսուս է մի միայն Փրկիչը։ Անիկայ կըսէ, "Լոյս եմ ճամբան ու ճշմարտութիւնը ու կեանքը"։ ու նաբը՝ թէ "մէկը Հօրը քով չի գար, թէ չէ ինծմով"։ Յհ. ԺԴ. 6։

ԵՂՕԹՔ

Ով Տէր Աստուած մեր, բարձրեալ, սուրբ, արդար և բարեգութ. ահա քու առջևդ կուգանք իբրև յանցաւոր և ողորմելի արարածներ, քու շնորհդ խնդրելով։ Մենք մեր ծնած վայրկեանէն մեղաւոր ենք, ու մեր կեանքին ամէն օրուանը մէջ շատցուցեր ենք մեր մեղքերը քեզի դէմ։ Մեր ամէն արդարութիւնները ուրիշ բան չեն քու առջևը, եթէ ոչ՝ իբրև աղտեղի հանդերձ մը. ու մեր վրայ ամենևին ողջ տեղ մը չկայ։

Բայց օրհնեալ ըլլայ քու անունդ, ով Տէր՝ որ դուն կատարեալ փրկութիւն ունիս. փառք՝ յաւիտեան փառք Յիսուսի, որ փնտրելու և փրկելու եկաւ ան որ կորսուած էր։ Ով Աստուած և Փրկիչ մեր՝ քու Անունդ համար բարկութենէ փրկէ մեզ, և մեր մեղքին շղթաներէն ազատէ մեզ։ Քու սուրբ Հոգիովդ մտիր մեր սրտերուն մէջ, ու բոլորովին տիրէ անոնց։ Այսպէս՝ մենք քու ժողովուրդդ և քու արօտիդ ոչխարները, յաւիտեանս յաւիտենից շնորհակալ պիտի ըլլանք քեզմէ, քու անբաւ շնորհքիդ՝ և քու ճշմարտութեանդ համար Քրիստոսիս մեր Տէրոջմով. Ամէն։

ԳԼՈՒԽ · Բ ։

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՓՈՐՁՈՒԻԼԸ ԱՆԱՊԱՏԻՆ ՄԻՋ

Մ-ՌԴ · Դ · 1—11 ։

Անատենը Յիսուս անապատը տարուեցաւ սատանէն՝ Հոգիէն՝ Սատանային փորձուելու համար ։

Եւ քառասուն ցորեկ ու քառասուն գիշեր ծոմ պահեցին եւ՝ անօթեցաւ ։

Եւ փորձողը եկաւ իրեն ըսաւ · Թէ որ դուն Աստուծոյ որդին ես՝ ըսէ որ սա քարերս հաց ըլլան ։

Անիկայ պատասխան տուաւ ու ըսաւ · Գրուած է որ · չէ թէ հացով միայն մարդ կ'ապրի · հապա՝ ան բոլոր խօսքերովը որ Աստուծոյ բերանէն կ'ելլայ ։

Անատենը Սատանան առաւ տարաւ անիկա սուրբ քաղաքը · և կայնեցուց անիկա տաճարին աշտարակին վրայ ։

Ու ըսաւ իրեն · Թէ որ Աստուծոյ որդին ես նէ՝ դուն քեզ ասիկոր վար ձգէ · Բնչու որ՝ գրուած է · թէ իր հրեշտակներուն ապապրիսի է քեզի համար · որ քեզ ձեռքի վրայ պահի կրեն · որ բնաւ քու ոտքդ քարի չիզարնես ։

Յիսուս նորէն ըսաւ անոր · Գրուած է թէ՝ քու Տէր Աստուածդ չի փորձես ։

Սատանան նորէն առաւ հանեց անիկա շատ բարձր լեռան մը վրայ · և ցուցուց անոր բոլոր աշխարհքին թագաւորութիւնները · ու անոնց փառքերը ։

Ու ըսաւ իրեն՝ Ասոնք ամէնը քեզի կուտամ թէ որ ինծաս ինծի երկիրպագութիւն ընես ։

Անատենը Յիսուս ըսաւ անոր · Երթա դնա Սատանա · Բնչու որ գրուած է · Քու Տէր Աստուածդ երկիրպագութիւն ընես · ու միայն անիկայ պաշտես ։

Ապա թէ Սատանան ինքը թողուց · և ահա հրեշտակները եկան ու իրեն ծառայութիւն կրնէին ։

ՓՈՐՁՈՒԹԻՒՆԸ եղաւ Սատանային առաջին գործը երկրի վրայ ։ Անիկայ Դրախտին մէջ

Ադամը և Լուսն փորձեց որ չհաւատան և չընդունգանին Աստուծոյ. ինչպէս որ ասանկ ըրին անոնք։ Այսպէս "Մէկ մարդէ մը մեղքը աշխարհք մտաւ, և ան մեղքէն՝ մահը"։ Հռոմ. և. 12։

Վերջապէս Յիսուս Քրիստոս աշխարհս եկաւ։ Նիկայ երկրորդ Ադամ կոչուեցաւ, Տէրը՝ երկինքէն։ Սատանան կ'ուզէր որ անոր ալ տիրէ, ինչպէս որ առաջին Ադամայ տիրեր էր։ Ընեցնելք ուրեմն Սատանային իրեք կերպով փորձելը զՅիսուս անապատին մէջը. և աղաչենք սուրբ Հոգին որ Յիսուս Քրիստոսի օրինակին միջոցովը իմաստութիւն տայ մեզի։

1. Յիսուս քառասուն ցորեկ ու քառասուն գիշեր ծոմ պահելէն ետքը՝ Սատանան խորհուրդ տուաւ իրեն որ հրաշք մը ընէ, ու իր փորը կշտացընէ։ "Ըսէ որ աս քարերը հաց ըլլան"։ Կերևայ թէ այնպէս կըկարծէր որ Քրիստոս ծոմ պահելէն ձանձրացեր ու Աստուծոյ սպասելէն յոգներ էր։ Բայց Յիսուս պատասխան տուաւ սուրբ Գրքին ընտիր խօսքերովը. "Չէ թէ հացով միայն մարդ կ'ապրի. հապա ան բոլոր խօսքերովը որ Աստուծոյ բերանէն կ'ելլայ"։ Որ ըսել է. Աստուած զիս պահեց ինչուան հիմա իր բերանին խօսքովը. և անշուշտ կրնամ անոր ապաւինիլ ասկից ետքն ալ։

Մի թէ ասիկայ մէկ դաս մը չէ՞ աղքատ մար-

դուն, և ամէն անոնց որ տրտմալի պարագաներու մէջ կըգտնուին, նաև անոնց՝ որ կըվախնան թէ չըլլայ որ յետին խղճութեան մէջ իյնան։ Սիրելի՛ ընթերցող՝ արդեօք Սատանան կըփորձէ՞ քեզ տրտունջ ընելու Աստուծոյ դէմ, ինչու որ չքաւորութիւն կամ հիւանդութիւն կըքաշես դուն, կամ բարեկամներդ կորսնցուցեր ես։ Կըզգաս որ մինակ ես, և առանձնութեան մէջ երեսի վրայ մնացած. արդեօք փորձութիւն եկած է քեզի որ ջանք ընես ապօրինաւոր միջոցներով քու նեղութիւններէդ ազատելու։ Թէ որ ասանկ է, ազէ՝ Քրիստոսի օրինակին հետևէ. միշտ Աստուծոյ ապաւինէ։ Թէ որ Սատանան կըփորձէ քեզ որ Աստուծոյ դէմ դէշ խորհուրդներ միտքդ բերես, դուն անմիջապէս փառք տուր Աստուծոյ, և միտքդ բեր աս խօսքը՝ "Հու բեռդ Տէրոջը վրայ ձգէ, ու ան թիկունք պիտի ըլլայ քեզի"։ Ս-ը՝ Ցե. 22։

2. Երկրորդ անգամի փորձութեանը մէջ՝ Սատանան սուրբ քաջաքը տարաւ մէր Տէրը, և կայնեցուց անիկայ տաճարին աշտարակին վրայ, ու ըսաւ իրեն, որ զինքը անկից վար ձգէ, ու թոքը (ստուգեամբ ինններորդ առաջին սաղմոսը վկայութիւն բերելով) ապահովեց զանիկայ թէ Աստուած իր հրեշտակներուն պատուիրեր է քեզի համար որ ձեռքի վրայ կրեն քեզ, որ բնաւ ոտքդ քարի չզարնուի։ Տես որ Սա-

տանան զանց կընէ ան խօսքը՝ «Դ-ոնէ բոլոր համ-բանէրուդ մէջ, այսինքն՝ քու պարտաւորութեանդ ամէն ճամբաներուն մէջ։ Սատանան կը փորձէր զՅիսուս որ մէկ դի ձգէ պարտաւորութեանը շիտակ ճամբան։ Թէ որ հարկ ըլլար որ Տէրն մեր ինքզինքը վար ձգէ, կարող էր ան բանս ընել առանց վնաս մը կրելու. բայց ան դիպուածիս մէջ ամենեին ասանկ պարտաւորութիւն մը չկար։ Ինչու որ՝ Աստուծոյ մեղի ցուցուցած ամէն ճամբաներուն մէջ պէտք է որ առաջ երթանք առիւծի պէս համարձակ։ Բայց մեր յատուկ ընտրութեանը վտանգներուն մէջ՝ Աստուած մեզի օգնելու բնաւ խօսք տուած չէ։ Ուրիշ բան է հաւատալը՝ և ուրիշ բան յանդուգն համարձակութիւնը։

Երբ որ փորձութիւն կունենաս, յանդուգն՝ անխորհուրդ և կամակոր ըլլալու, անատենը պարտիս Սատանայէն վախնալ. քանզի անատենը կը ջանայ ան մեր սրտերուն տիրելու։ Երբէք խիստ մեծ վտանգի մէջ չենք ըլլար՝ բայց ան ժամանակը միայն որ մեր բնութենէն դրդուած կրտեսնենք մեզ։ Երբ որ բանի մը յօժարութիւն կը ցուցնենք մեր յատուկ կամքին բուռն զօրութենէն, պէտք է որ կանգ առնենք մէյմը՝ ու հարցնենք ինքզինքնուս, թէ՝ "Արդեօք ասիկայ է Աստուծոյ ճամբան, թէ ինծի հաճելի երևցած իմ յատուկ ճամբաս"։

3. Դարձեալ. Սատանան փորձեց մեր Տէ-

ը , ցուցընելով անոր աշխարհիս ամէն թագաւորութիւնները և անոնց փառքերը . խոստանալով անոնց ամէնը իրեն տալ՝ թէ որ իյնայ ու երկրպագութիւն ընէ անոր : Այսպէս խոստմունքը կարող է մեղանչական մարդ մը մոլորցընել . բայց սուրբն Յիսուս խսկոյն բարկութեամբ մերժեց զանիկայ , ըսելով . "Անտիս գնա Սատանայ , ինչու որ գրուած է , "ԶՏէր Աստուծուդ երկրպագութիւն ընես , ու միայն անիկայ պաշտես" ։

Այսիկայ ալ մեծ օրինակ մըն է մեզի . որ եթէ ամբարտաւան ըլլալու փորձութիւն մը դայ վրանիս , ըսենք անատենը . Անտիս գնա ամբարտաւանութեան Սատանայ , ինչու որ գրուած է . "Աստուած ամբարտաւաններուն դէմ կրկենայ , խոնարհներուն շնորհք կուտայ" ա Պետ . ե . 5 ։ Թէ որ աշխարհային բաներու սէր ձգելու փորձութիւնը դայ մտքերիս , անատենը յիշենք ան խօսքը՝ թէ "Ան որ կ'ուզէ աշխարհը սիրել՝ ինքզինքը Աստուծոյ թշնամի կընէ" ։ Յակ . գ . 4 ։

Ո՜հ , ինչ մխիթարութիւն է գիտանալը , թէ ինքն Յիսուս փորձութիւն կրողին օգնութիւն կընէ ։ Հաւատացեալներուն ամենէն տկարը՝ բանէ մը վախ չունի , քանի որ սրտանց միացած է Քրիստոսի հետ ։ Քու փրկութենդ զօրագլուխը քովդ ունենալով՝ դէմ կեցիր Սատանային , ու անիկայ կըփախչի քեզմէ ։ Հաւա-

տոյ վահանը ձեռքդ առ , որով կարենաս մա-
րել չարին կրակ դարձած նետերը ։

Ուրեմն ամէն անգամ որ փորձութիւն կ'ու-
նենաս մեղք գործելու , աղօթքով Քրիստոսի
դիմէ , և ըսէ անոր քու վտանգդ ։ Թէ որ հո-
գերով կընեղես դուն՝ պատմէ անոր բոլոր քու
նեղութիւններդ ։ Ընիկայ կընայ կարեկից ըլլալ
և օգնել քեզի ։ Ինչու որ չէ թէ քահանայա-
պետ մը ունինք՝ որ կարող չըլլայ մեր տկա-
րութեանը հետ մէկտեղ չարչարվիլ . հապա
ինքը ամէն կերպով փորձը առած է մեզ նման ,
բայց առանց մեղքի ։ Ուստի ալ համարձակու-
թիւնով մտտիկնանք անոր շնորհացը ամոռին
առջևը . որ ողորմութիւն ընդունինք՝ ու շնորհք
գտնանք պէտք եղած ատենը օգնելու . Եբր .
գ . 15 , 16 ։

ԵՊՕԹՔ

Տէր Աստուած , մեր ապաւէնը , զօրութիւնը
և մի միայն օգնութիւնը՝ մեր նեղութեան ժա-
մանակին մէջ . դուն պահպանէ մեզ և առաջնոր-
դէ ամէն ատեն , քանի որ աս մեղաց և տառա-
պանաց աշխարհի մէջն ենք ։ Մենք ամենևին
կարող չենք աս ոխերիմ թշնամիներուն յաղ-
թելու , որոնք մեր հոգիին դէմ կըպատերազմին ։
Տկարութիւնը պատեր պաշարեր է մեզ , ինչու
որ շատ անգամ վախկոտութիւն մը կունենանք ,

կամ ունայն վստահութեամբ կը հպարտանանք։ Քու շնորհդ միայն, Տէր, կրնայ զօրացնել և խոնարհութեան մէջ պահել մեզ։ Աղքէ մեր հոգիները քու սուրբ Հոգիովդ. լուսաւորէ մեզ որ խաւարի մէջն ենք՝ քու սիրելի Ձայնովդ։ Կերկայ եղիր մեզի մեր նեղութեան, հիւանդութեան և մահուան ժամանակին. և վերջապէս ընդունէ մեզ՝ որ քեզի հետ բնակինք յաւիտենական փառքին մէջ, Յիսուս Քրիստոսի համար. Ամէն։

ԴԻԼՈՒԽ · Գ։

ՀՈԳԻՈՎ ԱՂՔԱՏՆԵՐԸ

Մարդ · Ա · 3։

Երանի հոգւով աղքատներուն, ինչու որ երկնից թագաւորութիւնը անոնցն է։

"Երջանի՞կ էք"։ Այս հարցմունքը կ'ընէր ամէն մէկուն, Քրիստոսի Նախանձաւոր պաշտօնեաներէն մէկը, երբ որ իր ժողովրդոցը այցելութիւն կ'ներթար տնէ տուն։ Կերեցէք ինծի ուրեմն, որ ես ալ նոյն հարցմունքը ընեմ ձեզի. "Երջանի՞կ էք"։ Ամենևին երկբայութիւն մը չկայ որ կ'ուզէք երջանիկ ըլլալ. բայց սորվեցա՞ք Երանելի ըլլալ ինչպէս որ մեր Փրկիչը կ'ըսէ։

Թէ որ դուն կը քալես "արձակ ճամբուն մէջ" ան մեղաւոր և անմիտ բաղմութիւնը ունենալով բոլորտիքդ , ստոյգ է որ՝ ինչպէս սուրբ Գիրքը կ'իմացընէ մեզի , դուն երջանիկ չես : Գուցէ ատ ընկերութիւնը ատեն ատեն կ'ուրախացընէ քեզ , կամ այնքան զբաղանք ունիս որ ընաւ չես կրնար աս նիւթիս վրայով խորհիլ : Բայց թէ որ դուն աւետարանական քաղաք միութիւններուն համը առած չես , ընաւ չես կրնար հանդարտ և մտադիր եղած ատենդ՝ ձեռքդ կուրծքիդ վրայ դնել և ըսել . Երանելի եմ ես :

Երբ որ դուն Քրիստոսի դպրատանը մէջ աշակերտ մը ես , արդէն սկսած ես երջանիկ ըլլալու : Բայց աւաղ , Յիսուսի տուած դասերը ո՞րչափ տարբեր են անոնցմէ որ աշխարհս կուտայ : Աշխարհը՝ երջանիկ կ'անուանէ ան մարդը որ հարուստ և հպարտ է : Աղօթք ընենք ուրեմն որ Յիսուսի Հոգին պատրաստէ մեզ գլխովին տարբեր ճամբայ մը սորվելու . որ Անիկայ սորվեցնէ մեզի խոնարհութեան երանութիւնը :

Ի՞նչ կընշանակէ Հոգւով աղքատ ըլլալը : Ուրիշ բան չնշանակեր ան՝ եթէ ոչ մեր մեղքերը և թշուառութիւնը զգալ Աստուծոյ առջին : Հոգւով աղքատ ըլլալը գրեթէ մի և նոյն բան է խոնարհութեան հետ . և սրտին մէկ հատիկ վիճակն է ան՝ որ մեղաւորներուն կը վայլէ : Ա-

նիկայ է հարկաւոր եղած պատրաստութիւնը սրտի՝ երկնից արքայութեանը մէջ մտնելու. այսինքն՝ աւետարանին օրհնութիւնը վայելելու։

Մէկ մարդ մը որ կատարեալ աղքատ է, բան մը չունի. ահա ասանկ են մեղաւորները. անոնք բան մը չունին, այսինքն՝ բնաւ բարի բան մը չունին իրենց մէջը, որ անով կարենան Աստուծոյ հաճոյ ըլլալու. չէ, խիստ փոքրիկ բարութիւն մըն ալ չունին, և ոչ բարի ըլլալու կարողութիւնը։

Անոնք բոլորովին աղքատ վիճակի մը մէջ ենք. ահ, քիչ մարդիկ կան որ գիտեն իրենց որչափ յանցաւոր ըլլալը։ Մենք ալ բնութեամբ կատարեալ անիրաւ և ատելի ենք Աստուծոյ։ Մարդիկներուն մեծ մասը՝ երբ որ կրօնքին կրօնքին վրայով խորհելու, այնպէս կ'երևակայեն որ քիչ մը արդար են. կամ գոնէ կրկարծեն թէ կարող են արդարութիւն մը գործելու. քիչ մը արդարութիւն՝ որ Աստուծոյ հաճելի է։ Բայց ասիկայ է ամենէն մեծ մոլորութիւնը։ Անոնք որ կ'ուզեն առ Աստուած գալ, պէտք է որ գան անանկ պարտապաններու պէս, որ բան մը չունին վճարելու. մանաւանդ թէ պիտի գան անոնք՝ անանկ մուրացկաններու պէս, որոնք սովամահ ըլլալու վրայ են։ Պարտին գալ՝ ձրի շնորհք մը խնդրելու Յիսուս Քրիստոսի միջնորդութեամբը։

Երբոր Աստուծոյ առջևը գան հոգիին աղքա-

տութեամբը, և խոստովանին թէ բանի մը արժանաւորութիւն չունին, և միանգամայն յիշեն իր մեծամեծ խոստմունքները Քրիստոսով, անատնը կըսէ անոնց. կրբանայ իր գանձերը, իր պատուական գանձերը։ Մենէն աղքատ մեղաւորը խոնարհութեամբ և հաւատով Յիսուսի գալով՝ պիտի ընդունի ինչ որ հազարաւոր ուկիէն և արծաթէն պատուական է։ Քանզի Անով միայն մեր ամէն մեղքերուն թողութիւն կ'ըլլայ։ Անթիւ մեղքերը, խիստ սև գոյն ունեցող մեղքերը՝ Յիսուսի արիւնովը կըլուացուին. Անով միայն խաղաղութիւն կ'ըլլայ Աստուծոյ հետ։ Խաչմոնանքը Յիսուսի արիւնովը կըսրսկուի. Անով միայն նոր սրտի պարգևը կ'առնուի։ Անոր Հոգիովը կըփոխուի սիրտը՝ մեղքը սիրելէն սրբութիւն սիրելու։ Քրիստոսով կըստանանք նաև յաւիտենական կենաց ժառանգութիւնը։ Թէև բոլորովին պիղծ ենք, բայց Քրիստոսի հաւատալով՝ արդար կըսեպուինք։ Անով և անոր մէջը ամէն օր կըզարգանանք ամէն բարի գործերուն մէջ. ինչու որ անիկայ աւելի մեծ շնորհք կուտայ։

Երանի թէ աս խոնարհութեան հոգին մեծ մասը ունենայինք. երանի թէ աւելի խորունկ զգայինք մեր պակասութիւնը և անարժանութիւնը. անատնը օրչափ բաղձանքով Յիսուսի կը դիմէինք, ընդունելու անկից իր հարստութիւնները, մանաւանդ թէ շնորհք շնորհքի տեղ։

Լկիր ուրեմն , աղքատ հոգի , որ բան մը չունիս . եկիր , դուն որ բարկութենէն ուրիշ բանի արժանաւոր չես ։ թէ որ հաւատք ունիս՝ ան ամէնը որ Յիսուս իր արիւնովը գնեց քեզի համար , քուկդ է ։ թէ որ յիրաւի աղքատ ես հոգիով՝ իրօք հարուստ ես , ինչու որ երկնից թագաւորութիւնը քուկդ է ։

ԱՂՕԹՔ

Խարձրեալ ամենամեծդ Աստուած , որ յաւիտենականութեան մէջ կը բնակիս , և սուրբ է քու անունդ ։ Գոհութիւն կը մատուցանենք քեզի որ մեզի պէս աղքատ և մեղանչական արարածները կը հրաւիրես որ Քեզի մօտիկնան ։ Ահա քու սիրելի որդւոյդ Յիսուս Քրիստոսի արդիւնքները կը յիշենք , "Որ թէպը մեզի համար աղքատ եղաւ՝ ան որ հարուստ էր , որ մենք անոր աղքատանալովը հարուստ ըլլանք" . բ Կորնթ . ը . 9 ։ "Վասն զի անիկայ որ մեղք չէր գիտեր , մեզի համար մեղաւոր սեպեց . որ մենք անոր ձեռքովը Աստուծոյ արդարները եղած ըլլանք" . բ Կորնթ . ե . 21 ։ Անիկայ եղաւ մեզի Իմաստութիւն՝ արդարութիւն , ու սրբութիւն և փրկութիւն ։

Օրհնեալ ըլլայ քու անունդ որ Յիսուս Քրիստոսի վրայ ունեցած քու առատ ողորմութեամբդ՝ կրնանք համարձակութեամբ ընդունիլ

շնորհք շնորհքի տեղ ։

Ո՜հ, առատօրէն տուր մեզի քու սուրբ Հոգիդ պարգևը, որ հարստանանք հոգևորական իմաստութեամբ և քու կամքդ գիտնալով, և բաւական ըլլանք ընելու ինչ որ հաճոյ է քեզի ։ Քու շնորհքովդ անանկ լեցուր մեզ աս աշխարհիս մէջ, որ արժանի ըլլանք ան անպատմելի ուրախութիւններուն որ պատրաստեր ես երկնից մէջ՝ ամէն անոնց որ քեզ կըսիրեն և քեզի կըծառայեն, մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի միջնորդութեամբը. Ամէն ։

ԳԼՈՒԽ. Դ.

ՍԳԱՒՈՐՆԵՐԸ

ՄԱՏԹ. Լ. 4.

Երանի սգաւորներուն, ինչու որ անոնք պիտի մխիթարուին ։

Սգաւորները որոնց համար կըխօսուի հոս, անոնք են որ Աստուծոյ ուղածին պէս սուգ կըբռնեն. չէ թէ անոնք որ յուսակտուր եղած են, ու մխիթարութիւն չեն ընդունիր. ինչու որ աշխարհի տրտմութիւնը մահ կըծնանի ։ Բայց Տէրն մեր կըխօսի հոս Աստուծոյ ուզած տրտմութեանը վրայով որ ապաշխարու-

ՀՍՍՀ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՌ-Արա.ՍՍՌ
Ա. Հա. Ա. Մասնիկեան
Ա. ՄԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
519-74

թիւն կը գործէ փրկութեան համար , որ զզջալու բան մը չէ : Խրատի անոնց որ կը տարտմին և սուգ կը բռնեն , թէ երեց յատուկ մեղքերուն և փորձութիւններուն համար , և թէ «ոչինչերուն» մեղքին և թշուառութիւններուն համար : Խրատի թէ դուք ալ ու ես ալ սուգ բռնէինք և ցաւէինք աս բանիս համար . և սուրբ Հոգին որ մխիթարիչ է , անատնը մեր տարտմութիւնը ուրախութեան կը դարձնէ :

1 . Տեսնենք թէ որչափ իրաւունք ունինք մեր յատուկ մեղքերուն համար սուգը մտնելու : Ընթիւ անգամ զԱստուած վշտացուցեր ենք , և շարունակ իր սուրբ Հոգին կը տարտմեցընենք : Տես ինչպէս սուրբ Դաւիթը մեր սիրտերը կը-տոորագրէ . "Ընենք խարերայ են , կ'ըսէ , ամէն բաներն աւելի , և անարժշկելի են" Երեմ . ԺԷ . 9 : Ընենցմէ կ'ելլան ամէն տեսակ չար խորհուրդները , անոնցմէ առաջ կուգան մեղանչական խօսքերը և գործքերը : Ընենք կընտանին խորունկ լուռիքի մը , որ անդադար աղաղուլթեան հեղեղներ դուրս կուտայ : Կրնանք արդեօք անոնց մէջը նայիլ առանց տարտմելու : Մ'իթէ մեր խշճմտանքը բաւական չխօսիր մեզի որ երեսնիս կարմրի կրակ կտրի , և աչքերնիս դառն արցունք թափէ :

Բոկից զատ՝ ան նեղ ճամբուն մէջ որ դէպի կեանքը կը տանի , այնքան որոգայթներու և փորձութիւններու կը հանդիպինք , որ շատ ան-

գամ պասՃոռ կ'ու�նանք տրտմութեան մէջ ըլլալու։ Օգտմանք չէ ուրեմն՝ թէ որ պատրաստ ես աղաղակելու թէ՝ ինչ կերպով պիտի յաղթեմ ես իմ սրտիս ապականութիւններուն, որ վերջապէս անվտանգ երկինքը հասնիմ։

2. Ա՛նՃ իրաւունք ունինք նաև տրտմելու, երբ որ կըտեսնենք ուրիշներուն մեղքերը և նեղութիւնները. երբ որ կըտեսնենք որ այնքան անձինք դեռ արմնցած ու դարձի եկած չեն. գուցէ անոնց մէկ քանին ալ մեր սիրելի բարեկամներն են։ Երբ որ կըմտածենք թէ որչափ մարդիկ առանց Աստուծոյ կ'ապրին, և անյոյս կըմեռնին. ստոյգ է որ բաւական են ասոնք բարեպաշտ մարդու մը սիրտը սաստիկ վշտացընելու,

Ո՜հ, որչափ կըպարտաւորինք հառաչել և լալ, ան ամէն դարշելի մեղքերուն համար որ աշխարհիս վրայ կըգործուին։

Ո՜հ, ինչ թշուառութիւն կըբերեն իրենց՝ հաղարաւոր մարդիկ, իրենց մեղքերովը։ Այլ անգամ մը գինեմոլներուն որ կ'երերտրկին ու դէպի իրենց գերեզմանը կ'երթան. նայէ՛ ան բազմաթիւ երիտասարդներուն որ մոլութեան և հիւանդութեան մէջ կըհալին կըմաշին։ Տես կիրակի օրը սուրբ չպահողներուն ան բազմութեանը, որ երբէք չեն գիտեր թէ ինչ է հանգիստը. մաքուր, քաղցր և սուրբ հանգիստը՝ մարմնին և հոգիին։ Երբիք չէ՞ որ ես

ամենը բարեպաշտ մարդու մը սիրտը տրտմեցընեն։ Լու՛ ոչչափ որբևարիներ կան տրտմած սրտով, ոչչափ մանկունք որ կուլան անօգնութենէ և գրեթէ մահուան դուռը հասած են։ Մրչափ մարդիկ ծածուկ նեղութեան և տրտմութեան մէջ են, որոնք բնաւ մխիթարող մը չունին։

Սակայն միթէ Աստուծոյ որդիներուն համար մխիթարութիւն մը չկայ. ստոյգ է որ շատ և մեծ մխիթարութիւններ կան, որոնք բաւական են ամէն նեղութիւնը փարատելու։ Մենէն առաջ մէկ սուրբ մխիթարութիւն մը ունինք, երբ որ Աստուծոյ առջևը կրնստովանինք մեր օրինազանցութիւնը, ու երբ որ կրլսենք մեր փրկչին խօսքերը, թէ՝ "Քու մեղքերդ թողուած են քեզի, գնա խաղաղութեամբ"։ Մը-խիթարութիւն մը՛ ալ ունինք, երբ որ խընդիրքնիս կրկատարվի ու երբոր կրյաջողենք մեղքին։ Կաև խոստացուած է մեզի՝ թէ սուրբ Հոգին, որ "մխիթարիչ" է, մեզի հետ պիտի բնակի յաւիտեան։

Մրչափ ուրախութիւն կրզգանք, մտածելով որ Յիսուս մեր հիւանդութեանը համար Ի գութ կրշարժի ու կարեկից կ'ըլլայ մեզի։ Ամէն տրտմութիւններուն համար անիկայ ալ կրտրտմի. իր երեսին հրեշտակը պատրաստ է մեզի փրկելու։

Մէկ զուարճութիւն մըն ալ կայ սիրիներուն

կարեկից ըլլալու տեսնենք , երբ որ մեր կարեկցութիւնը անոնց բարւոյն և մանաւանդ անոնց փրկութեանը համար կ'աշխատցունէ մեզ ։ Երբ որ մեկ անձ մը կըսկսի իր հոգին վայով հոգ տանիլ , մանաւորապէս անանկ մեկը՝ որուն համար մենք աշխատեր և աղօթք ըներ ենք , ո՞հ , ինչ ուրախութիւն կ'ունենանք ան ապաշխարող մեղաւորին համար ։

Եւ ան որ Յիսուսի կըհաւատայ , վերջապէս կըվայելէ երկնից լուսաւոր յոյսը . հոն պիտի սրբէ Աստուած ան ամէն արցունքը և պիտի տանի իր ժողովուրդը ան կենդանի ուղղութիւն , ուր որ ուրախութեան առատութիւն կայ , և խնդութիւն յաւիտանս յաւիտենից ։

Աշխարհս բնաւ տեղեկութիւն մը չունի սա հաստատուն մխիթարութեանցը վրայով ։ Անոնք որ "հեշտութիւնը Աստուծմէ աւելի կըսիրեն" , ոչինչ բաները երջանկութիւն կ'անուանեն , և կրնքը կեղծաւորութեան և մեքամաղձութեան տեղ դրած են ։ Բայց Յիսուս անանկներուն համար կ'ըսէ . "վայ ձեզի որ հիմա կըծիծաղիք , ինչու որ դուք պիտի սուգ մընաք և լար" ։ Աստի շնախանձինք անոնց . հապա Յիսուսի խոնարհ և երջանիկ ծառաներուն հետ երթանք միարանինք . որ "ինքը հարուածներ քաշեց , ուցաւերու համբերեց" Լուկ . Ծգ . 3 ։ Մտքերնիս բերենք ան խօսքը , "Անոնք որ արցունքով կըցանեն , ցնծութիւնով կըհնձեն" Սաղ . ՃԻԶ . 5 ։

ԱՂՕԹՔ

Ո՛վ Հայր գթութեանց և Աստուած ամենայն մխիթարութեան, քեզի կ'աղաչենք որ ողորմութեամբ նայիս մեր վրայ որ քու անարժան ծառաներդ ենք. օգնէ մեզի ասս աշխարհիս մէջ մեր ամէն տրտմութիւններուն առնենք, որ մենք մեր բովանդակ վստահութիւնը և յոյսը՝ քու խնամութեանդ սիրոյդ և կարողութեանդ վրայ դնենք։

"Լաւ ինչու համար, ով Տէր, պիտի գանգատի մարդը իր մեղքերուն վրայով" ՈՒԲԻ. գ. 39։ Ինչ կրնանք ըսել քեզի ով պահպանող մարդոց։ Իրաւ մենք մեղանչեցինք, բայց դուն արդար ես քու ամէն գործքերուդ մէջ, և սուրբ՝ քու ամէն ճամբաներուդ մէջ։

Մեր մեղքերուն թողութիւն շնորհէ, Տէր, և ջնջէ մեր ամէն անօրէնութիւնները։ Վերցուր մեզմէն ասս ծանր բեռը. սրբէ մեր ամէն արտմութիւնները, ու միշտ մեր քովը կեցիր որ օգնես պահպանես և օրհնես մեզ։

Կարող ըլլ մեզ՝ սրտանց կարեկից ըլլալու ամէն անոնց որ սուդի մէջ են. մանաւանդ պէս անոնց որ իրենց մեղքերուն համար կը ցաւին, կամ շատ կերպ փորձութիւններու մէջ կրտաուպին։ Քեզի դարձուր մեր սէրը և յոժարութիւնները, անանկ որ կարենանք փնտրել և ձեռք բերել խոստացեալ պարգևը

մխիթարիչ սուրբ Հոգին։ Որովհետև մեզի նաև՝ երկրիս վրայ քու սուրբերուդ քաշած ամէն նեղութիւններուն մէջ, թէ ինչպէս պարտինք մխիթարել ուրիշները՝ ան մխիթարութիւնովը որ մենք մխիթարուած ենք Քրիստոսէ։

Կը խնդրենք սա շնորհքները մեզի համար և ուրիշներուն համար, Ընով՝ որ սիրեց մեզ և զինքը առաւ մեզի համար, Յիսուս Քրիստոս մեր Տէրը։ Ամէն։

ԳԼՈՒԽ Ա։

ՀԵԶԵՐԸ

ՅՈՎՀ. Ա. 5։

Երանի՛ հեզերուն, ինչու որ անոնք պիտի ժառանգեն աշխարհքը։

ՀԵԶԵՐԸ անոնք են՝ որոնց սիրտը և կեանքը հնազանդութեամբ և խոնարհութեամբ լեցուն են Աստուծոյ առջևը, և ազնուութեամբ կըվարուին ամէնուն հետ։ Անոնք քաղցր բարքմը կըցուցընեն ոչ միայն բարի մարդիկներուն, այլ նաև անոնց՝ որ տմարդութեամբ և խստութեամբ կըվարուին իրենց հետ։ Խոնարհութիւնը՝ հեզութեան ճամբան կըպատրաստէ, ասոնց

երկուքն ալ ցանկալի շնորհքներ են , և մեծ վարձք խոստացուած է անոնց Աստուծմէ ։

1 . Հեղութեան նշան մըն է Աստուծոյ առջեւը՝ թէ որ մեր նեղութիւններուն մէջ խոնարհինք իր ամենակարող ձեռքին տակը ։ Արդկային սիրտը յօժար է արտունջ ընելու , բայց զինքը կը ղատէ ։ Յորի կամ Դաւթի պէս գըլուխնիս ծունկ և երկրպագութիւն ընենք ըսելով . "Ունձ եղայ . ու բերանս չի բացի , վասն զի դուն ըրիր" Սաղ . ղթ . 9 ։

Աստուծոյ առջեւը հեղութիւն կը ցուցընեն մարդիկ՝ երբ որ իր սուրբ խօսքը դիւրանաց սրտով կ'ընդունին առանց դէմ դնելու մեր հպարտութեան կարծիքները ։ Յակոբոս առաքեալը կը պատուիրէ մեզի ըսելով . "Հեղութիւնով ընդունեցէք ան յէր ձէջը ցանված խօսքը". Յակ . ա . 21 . և ասոր համար անիկայ կը յորդորէ մեզ "Մէկ դի ձգել չարութիւններուն էվլցուքները" ։ Ինչպէս որ անհաւատներուն ըսածին առկանջ կը դնեն , և Աստուծոյ դէմ եղած դիրքերը կը կարդան , յայտնի կը ցուցընեն թէ ապրստամբ սիրտ մը ունին ։ Եւ Աստուած՝ իր արդար բարկութեամբը թող կուտայ որ անանկ շատերը կորսուին յիմարական չարութեան և յուսահատութեան մէջ ։ Բայց անիկայ՝ "Դատաստանի մէջ պիտի առաջնորդէ հեղերուն , ու իր ճամբան հեղերուն պիտի սորվեցունէ" . Սաղ . իե . 9 ։

2 . Մարդոյ առջևը հեղութիւն կը ցուցուի , երբ որ չենք ուզեր բռնութեամբ յարատևել մեր իրաւունքին մէջ , այլ շատ անգամ պատրաստ կ'ըլլանք շնորհելու ան բանը որ մերն է : Իրաւ որ եթէ մեաս մը կրած ենք նէ , կրնանք վայելուչ կերպով մը մեր իրաւունքը վերստին ձեռք բերել . բայց պէտք չէ որ շատ սիրտ հատցուենք աս բանիս համար : Հեղերը գոհ են՝ շատ անգամ անիրաւութիւն կրելով . ամէն բանի համբերելով , և ամէն բան քաշելով :

Տէրն մեր Յիսուս Քրիստոս կ'ըսէ , թէ հեղերը երանելի են . և ան՝ որ զարմանալի է , կը խոստանայ , թէ "անոնք պիտի ժառանգեն աշխարհը" : Շատերը կը կարծեն թէ հեղերը անանկ վախկոտ և տկարամիտ են , որ ամէն մարդ կրնայ խաբել զանոնք . իրաւ թէ որ հեղերուն աչքերեսին ապտակ մը զարնէ մէկը , մէկալն ալ կը դարձուցնեն անոր . թէ որ մէկը անոնց շապիկը առնէ , պատրաստ են վերարկուն ալ թող տալու անոր : Անոնք այնպէս հանդարտ և դէմ չը-կեցող են , որ կարծես թէ դիւրաւ ոտքի տակ պիտի կոխկրտուին : Բայց այսու ամենայնիւ՝ "անոնք կը ժառանգեն աշխարհը" : Խիստ աղէկ կենաք մը կը վարեն անոնք , և աշխարհիս ամենէն երջանիկ մարդիկն են :

Երջանիկ են անոնք՝ ինչու որ ստացեր են Քրիստոսի Հոգին . խաղաղութեան հոգի մը , զուարթ և գոհ : Անոր պէս քիչ բանով կը բա-

ական ան աշխարհքիս մէջը, ինչու որ ներքին կատարեալ խաղաղութիւն մը կը էյնելն։ Յիսուսի միջնորդութեամբը բարկութիւնէն ազատեալով՝ կրզգան որ արժանի չեն իրեն ամենափոքր շնորհացը, և ասանկով՝ գոհ են թէ որ ան փոքրիկ շնորհքը ընդունելու ըլլան, ու պինա ատորին վիճակի մէջ ալ ուրախ են։

Դէշ բնութեան տէր եղողները՝ իրենց առողջութեանը կրվնասին. ընդ հակառակն՝ անոնք որ մտաց հանգարտութիւնը կրվայելեն, ընդհանրապէս երկայնակեաց կ'ըլլան։ Ինչ հանդարտութեամբ կ'անցնին կ'երթան անոնք աս կեանքին բոլոր նեղութիւններուն մէջէն. իրենց օրերը հանգստութեամբ կ'անցունեն, և գիշերը անոյշ կրքնանան. չեն թողուր որ արևը իրենց բարկութեանը վրայ մարը մտնայ։ Ահա կրտեսնես որ հեզութիւնը օգտակար է մարմինին առողջութեանը, ինչպէս և հոգիին ալ։ Վաղցը և ազնիւ բարքը՝ աղէկ հանդերձի մը պէս շատ կրգիմանայ. բայց կիրքը կրհալէ կրմաշեցունէ մարդը։

Հարցուր հիմա, թէ ինչպէս պիտի ձեռք բերես դուն աս հեզութեան ոգին։ Լսեն բանէն առաջ աչքիդ առջևը ունեցիր մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի օրինակը. տես ինչ կ'ըսէ ան. "Եմ լուծս ձեր վրայ առէք, և ինձմէ սորվէցէք որ՝ հեզ եմ ու սրտով խոնարհ. որ ձեր անձերուն հանգստութիւն պիտի գտնաք". Մատթ. ժա. 29։

Նոքը շարունակ միտքդ բեր իր մեծ ողորմութիւնը՝ որով քու մեղքերուդ թողութիւն կընորհէ. ու ինչպէս անիկայ իրրև Աստուած կըգթայ քեզի, ասանկ ալ դուն ուրիշներուն վրայ դութ ունեցիր։ Համբերէ և մէկ դի քաշուէ. զգոյշ եղիր մէկէնիմէկ բարկանալէն. նոյն ինքն Մովսէս՝ ամենէն հեզ մարդը երկրի վրայ, սաստիկ պատժուեցաւ Աստուծմէ, մէկ անգամ անզգոյշ խօսք մը իր բերնէն հանելուն համար (Թուոց. ԺԲ. 3։ Բ. 7—12։ Սաղմ. ՃԶ. 33)։ Մէկ դի քաշուէ հաւատոյ վրայ չափէ դուրս վիճաբանութիւններէն. որոնք խիստ կըզայրացընեն մարդը։ Հուսկ ուրեմն, որովհետև խաղաղութիւնը՝ քաղցր բարքը և հեզութիւնը՝ Հոգիին պտուղներն են, աղօթք ըրէ որ սուրբ Հոգին, ան մաքուր և երկնային աղաւնին իջնայ և հանգչի քու Հոգիիդ վրայ։

ԵՊՕԹՔ

Ով Տէր, Հայր մեր երկնաւոր, ահա քեզի կըսօսրիկնանք, քու սիրելի որդւոյդ Յիսուս Քրիստոսի անունովը։ Նոր արժանաւորութեանը համար՝ մեր մեղքերուն թողութիւն շընորհէ, և նորոգէ մեր սրտերը անոր Հոգիովը։ Անիկայ հեզ էր և մարդասէր ամենուն հետ. "Անիկայ ոչխարի մը պէս մորթուելու առաքեցաւ, ու մունջ գառնուկի մը պէս ինքը խու-

զողին առջևը անանկ իր բերանը չի բանար"։ Մեզի ալ անոր պէս կարողութիւն տուր որ համբերութիւն ընենք տմարդութեան, բարկութիւնը մեկ դի ձգենք, և չարի փոխարէն բարի հատուցանենք։ Թէզի կ'ապաւինինք, ով Տէր, որ արդարութեամբ կը դատես, և աղքատին իրաւունքը չես մոռնար։ Յօժարեցուր մեզ՝ որ մեր ամէն նեղութիւններուն մէջ քու ամենակարող ձեռքիդ հպատակինք։ Դուն մեր բաժինը եղիր, Տէր, աս աշխարհիս մէջը և յաւիտեանս յաւիտենից, քու որդւոյդ Յիսուս Քրիստոսի միջնորդութեամբը. Ամէն։

ԳԼՈՒԽ. Զ.

ԱՆՕԹՈՒԹԻՒՆ ԵՒ ԾԱՐԱՒ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ

ՄԱՏԹ. Լ. 6։

Երանի՛ անոնց՝ որ անօթի ու ծարաւ են արդարութեան, ինչու որ անոնք պիտի կշտանան։

Պէտք է որ արդարութիւնը ըլլայ մեր գլխաւոր բաղձանքը. բայց մեր երկրաւոր ընթացքին սկզբնաւորութեանը՝ աս բանիս համար բնաւ իրձ մը կամ յօժարութիւն մը չունինք։

Բոլոր ուրիշ բաղձանքները բնականաբար կուգան մեզի . սակայն սրբութեան փափագ չենք կրնար ունենալ , մինչև որ Աստուծոյ Հոգին մեր մեղանչական սրտերը չփոխէ :

Այո՛ , սիրելի՛ բարեկամ , թէ որ ատեն մէկուն սրտին մէջը արմատանալու ըլլայ նէ երկնային բաներուն սէրը , աս սուրբ բաղձանքը ինչպէս անոր Հոգին ուղղակի առ Աստուած կըտանի : Ուստի՝ ահա պիտի ցուցընեմ քեզի , թէ ինչ ներգործութիւն ունենալու է ան բաղձանքը , թէ որ ձեռք բերելու ըլլաս նէ :

Ամէն բանէն առաջ՝ մեղաւոր ըլլալուդ համար , պիտի զգաս որ Փրկչի մը կարօտ ես . Յիսուսի պիտի դիմես . և հաւատքով արդարացած , խաղաղութիւն ունենալու ես Աստուծոյ հետ , մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի ձեռքով :

Բայց քեզի հարկաւոր եղածը՝ չէ թէ միայն թողութիւնը և խաղաղութիւնն է : Պէտք է քեզի որ աղատիս մեղքին իշխանութենէն , ինչպէս և անոր պատիժէն ալ : Ա՞ն փափագիր որ սուրբ ըլլաս . չ՞ես բաղձար որ վերայէդ մէկ դի հանես հին մարդը խաբեայ ցանկութիւնով ապականեալը . և նոր մարդը վրադ հագնիս , ան որ Աստուծոյ պատկերին պէս ստեղծուած է , արդարութիւնով ու ճշմարիտ սրբութիւնով . (Եփես . դ . 22) : Ահա աս է ան բաղձանքը՝ որ արդարութեան հոգի ունիցի և

Դ-ա ըլլալ։ Էական մասը կրկազմէ։

Ընդամ մը որ զգանք հոգևորական կենաց քաղցրութիւնը մեր սրտին մէջը, նախ և առաջ ոչ միայն սրբութեան կրփափագինք, այլ միշտ եմ կրփափագինք։ Աղէկ ախորժակը քաջառողջութեան նշան է. վասնորոյ թէ որ հոգիդ առողջ է՝ արդարութեան համար պիտի անօթենաս ու ծարաւ ունենաս։ Ասիկայ է ան վիճակը որ Յիսուս Խրատել կ'անուանէ։

Հոգին ճշմարիտ կերակուրը՝ Աստուծոյ խօսքն է, մանաւանդ թէ ինքը Յիսուս Քրիստոս է, որն որ ան խօսքը կընտրեկայացընէ մեզի։ Տես ինչ կ'ըսէ Ան. "Ես եմ կենաց հացը" Յհ. զ. 35։ Թէ որ աս խօսքին վերայով աղօթք ընենք, և բոլոր մեկալ պատուէրները ու շնորհաց միջոցները գործածենք, ան ատենը մեր հոգիները կրզարգանան, կրհշտանան ճարպով և պարարտութիւնով. (Սաղ. կգ. 5)։

Թէ որ կրսիրենք զՅիսուս, պիտի պատուենք իր բերանին խօսքերը՝ մեր ամէն օրուան կերակուրէն աւելի։ Ընօթութեան նեղութիւնը մարդը կրմաշեցընէ. իսկ ծարաւը՝ կ'այրէ կրտուչորէ։ Թէ որ անօթութեան և ծարաւին առջին չառնուի, նեղութիւնը հետզհետէ կ'էվեղնայ, և չդադարիր մինչև որ մեզի հարկաւոր եղածը ձեռք չբերենք։ Ուրեմն, թող մեր հոգիները փափագին, անձկան և աղաղակեն

արդարութեան համար։

Անօթութիւնը և ծարաւը՝ շարունակ կրգառնան կուգան մեր վրայ։ Այսանկ ալ պէտք է որ արդարութեան փափագը միշտ դառնայ մեզի գայ։ Իրը որ հոգինիս չփափագիր հոգևորական բաներու, յայտնի է որ հոգևորական աֆորժանիս պակսեր է։ Օգոյշ կենանք ուրեմն որ չըլլայ թէ ասանկ հոգևորապէս նուազինք։ Թէ որ կըզգանք որ Աստուծոյ խօսքին համար ունեցած ախորժանիս պակսելու վրայ է, անմիջապէս աղօթք ընենք, որ Նորին արդարութեան անօթութիւնը և ծարաւը ունենանք։

Վուցէ կրցուիս դուն, ինչու որ երկար ժամանակ արդարութիւն փնտռած ես, և տակաւին ուզածիդ չափ սուրբ եղած չես։ Ա՛յ, երբէք կատարեալ սուրբ պիտի չըլլաս աշխարհիս մէջը։ Իրանի որ մարմնի մէջ ես, մեացած ապականութիւնները խիստ կրխանգարեն քու շնորհքներդ և մխիթարութիւններդ։ Բայց վեր վերցուր աչուընեարդ, նայէ քու Փրկչիդ։ Ընիկայ կատարեալ թողութիւն և էվելի շնորհք կուտայ։ Այմանապէս յոյս ունեցիր էվելի փառաւոր աշխարհի մը։ Հաստատ գիտցիր որ սուրբերը երկինքին մէջ պիտի կըշտանան արդարութեամբ։ Հոն մեր երկրպագելի Փրկիչը՝ մեր խնդրածէն կամ մտքերնէս անցածէն էվելի բարիքներ առատօրէն պիտի տայ մեզի։ Այո՛, թէ որ անոր կանչէն երթանք

հիմա, գիմացէ գիմաց հոն պիտի տեսնենք զա-
նիկայ. և իրեն նման պիտի ըլլանք, պիտի
ճանչնանք զինքը, ինչպէս որ մենք ճանչցուած
ենք անկից։ Կենաց աղբիւրէն ջուր պիտի խը-
մենք, ու կշտանանք իմաստութեամբ և սրբու-
թեամբ, սիրով և անպատմելի ուրախութեամբ
յաւիտեանս յաւիտենից։

ԸՂՕԹՔ

Ով Տէր, Դուն՝ որ քու սուրբ ուխտա-
բանովդ բարի բաներու կոչունք մը ներկայա-
ցուցիր մեզի, և քու ծառաներդ խրկեցիր որ
հրաւիրեն մեզ՝ ըսելով, "ամէն բան պատրաստ
է", շնորհէ մեզի աստիկ բաղձանք մը ան օրհ-
նութիւններուն, որ Յիսուս Քրիստոսով կը-
տրուի մեզի։ Մի թողուր որ մեր աշխատանքը
անանկ բանի մը վատնենք, որ չկրնար կշտաց-
ցընել, ծակոտ ջուրի գուբեր փորելով՝ որ
չեն կրնար ջուր բռնել. Երէմ. Բ. 13։ Թող-
ութիւն շնորհէ, Տէր, մեր անցած աշխար-
հային մտածմունքներուն, ու յաջաբեցուր մեզ
ընդունելու ան շնորհքը՝ որ ձրիապէս կըտրուի
մեզի։

Քու սուրբ խօսքդ և քու տանդ ամէն բա-
րեկարգութիւնները, մեր հոգիներուն օգտա-
կար ըլլ. որպէս զի զարդանանք մեր Տէրոջմ
և Փրկչին Յիսուս Քրիստոսի շնորհացը և գի-

տուշեանը մէջ։ Օգնէ մեր հոգեւորական խոկ-
մունքներուն և աղօթքներուն . մենք քեզի կու-
գանք , քու սուրբ Հոգիիդ խոստացուած պար-
գևին համար։ Ո՜հ , թող տուր մեզի որ ու-
րախութեամբ կենաց աղբիւրէն ջուր առնենք ,
առաջ տար մեզ զօրութենէ 'ի զօրութիւն .
կենաց ճամբան ցուցուր մեզի . և վերջապէս
ընդունէ մեզ քու երեսիդ առջևը , ուր որ լե-
ցուն ուրախութիւն կայ . և դիր մեզ քու աջ
կողմդ , ուր անդ միշտ հաճութիւններ կան .
(Սաղ . ԺԶ . 11 ։) յաւիտեանս յաւիտենից ,
Յիսուս Քրիստոսի միջնորդութեամբը . Ամէն ։

ԳԼՈՒԽ . Ի ։

ՈՂՈՐՄԱԾՆԵՐԸ

Մատթ . Ի . 7 ։

Երանի ողորմածներուն , ինչու որ անոնք ողորմութիւն պիտի գտնան ։

Քիչ մարդիկ կան որ մտածեն թէ ո՞րչափ անպիտութիւն և թշուառութիւն կայ աս աշխարհիս մէջը . նմանապէս քիչ են անոնք որ գիտեն թէ ի՞նչ է ճշմարիտ ողորմած ըլլալը ։ Բայց սուրբ Գիրքը՝ աս երկու հակառակ բա-

ներուն , այսինքն անդթութեան և ողորմութեան օրինակները կուտայ մեզի ։

Երբ որ կըկարդանք՝ թէ Ադոնիբեզէկ եօթանասուն թագաւորաց ձեռքերուն և ոտքերուն բթամատը կտրեց , (Դատ . ա . 6) թէ՝ Նաբուդոդոնոսոր՝ Սեդեկիա թագաւորին աչքերը կուրցընել տուաւ , անոր զաւակները սպաննել տալէն ետև անոր առջին , (Դ Թագ . իե . 7) թէ Հերովդէս խրկեց ջարդեց բոլոր Բեթլեհէմի մանր տղաքը երկու տարեկանէն վար , (Մատ . բ . 16) թէ Հերովդիային աղջիկը՝ Յովհաննէս Մկրտիչին գլուխը խնդրեց , և շուտ մը բանտին մէջ գլխատուեցաւ ան , (Մատ . զ . 25) երբ որ կըկարդանք որ մեր Փրկչին ձեռքերը և ոտքերը բեւեռներով գամեցաւ , և թէ ասանկ վեց ժամ խաչին վրայ կախուած մնաց և մեռաւ մահուան տագնապներու մէջ . երբ որ կըկարդանք , կ'ըսեմ , աս բաները՝ կը տեսնենք մէկ մասը , մէկ փոքրիկ մասը ան անգթութիւններուն , որով կրնան մարդիկ մէկզմէկ տանջել ։

Որչափ սոսկալի անդթութիւններ կ'ընեն մեղսալից հեշտութիւններ սիրողները . Որչափ մարդիկ կան որոնք թէպէտ զուարթներես կ'երևնան , բայց արիւնաշաղախ սիրտ մը ունին , մանաւանդ թէ չարաչար խոցուած ։ Երբեցողները՝ որ իրենց վաստակը խմելիքներու կուտան , գուցէ ուրախ ընկերներ կարծուին . բայց ի՞նչ կը

քաշեն արդեօք անոնց տունը եղած կնիկները և որդիքը՝ անօթի երեսի վրայ մնացած։ Ասա ուրախութիւն ունեցող անձինքը՝ ամենէն աւելի անգութ մարդիկներն են, անողորմ են անոնք ու երբէք մէկու մը գութ և կարեկցութիւն չունին։

Սոսկալի անգթութիւն մըն ալ յատկապէս կրտեսնուի անոնց վրայ, որոնք կ'ատեն կ'անարգեն բարեպաշտ մարդիկները։ Ասիկայ էր առաջին մարդասպանութեան պատճառը. "Կայէն՝ որ չարէն էր, և իր եղբայրը սպաննեց. և ինչու համար անիկայ սպաննեց, անոր համար որ իր գործքերը չար էին, ու եղբօրը՝ բարի". ա Յովհ. գ. 12։ Ասոր պէս ալ աշխարհասէրները՝ արդար մարդուն դէմ կրխօսին անգթութեամբ, ու կ'արհամարհեն և կընախատեն զանիկայ։ Կան շատերը՝ որոնք սովորաբար ըստ բաւականին քաղցրաբարոյ են, այսու ամենայնիւ երբ որ կրտեսնեն կամ կրլսեն որ մէկը բարեպաշտ է, իսկոյն սաստիկ կրկատղին. երբեմն գէշ վարմունքով մը տմարդութիւն կ'ընեն անոր, և երբեմն ծուռ աչքով կրնայեն։ Ասանկ մարդիկը որ բարեպաշտները կրհալածեն, յիրաւի Սատանայի որդիք են։

Որոնք են ուրեմն ողորմածները։ Անոնք են որ իրենց ընկերին հոգւոյն և մարմնոյն վրայ գութ ունին, և ամէն կերպով կրջանան աղէկութիւն ընելու անոր։ Անոնք հիւանդներուն

տես կ'երթան, անօթիներուն ուտելիք կուտան, մերկերը կը հագվեցուցնեն, տգէտներուն բան կը սորվեցընեն, կորսուածները կը փնտրեն, բանտարկեալներուն և գերի ինկածներուն վրայ գութ ունին։ Լմեն բանէն աւելի կը ջանան որ իրենց մոլորեալ ընկերները դարձուցնեն բերեն Հիսուսի, մեղաւորաց մէկ հատիկ բարեկամին։ Լաւ աս ամենը ընելու համար անձերնին կ'ուրանան, ու աւելի յօժարութիւնով ծախք կ'ընեն ու ծախք կ'ըլլան ալ. (բ Կ-րնթ. ժբ. 15)։ Մրչափ թշուառ պիտի ըլլար արդեօք աս ողորմելի աշխարհին վիճակը, թէ որ ողորմած մարդիկ չգտնուէին։ Լրանի թէ ամենաբարին Լստուած՝ հաղարապատիկ և բիւրապատիկ շատցընէր անոնց թիւը։

Բայց մ՚ողջ, որ շատ պատճառներ կան ուրոնք արգելք կ'ըլլան և չեն թողուր մարդիկներուն որ ողորմած ըլլան։

1. Մանց արգելք կ'ըլլայ միայն իրենց շ-ա-ռ-ա-գ-ի-ն-ը որով հոգ չեն տանիր աղքատաց, իրենք հանգստութեան մէջ ըլլալով՝ տառապեալները մոքերնին չեն բերեր։

2. Մանք չեն ուզեր որ ա-ն-հ-ա-գ-ա-ր ըլլան, թէ որ ցաւալի պատմութիւն մը պիտի ընել՝ հազիւ թէ համբերութիւն կ'ունենան ծայրէ՝ ի ծայր մտիկ ընելու։ Շատ կը յօժարին ողորմած ըլլալու, բէ որ նեղութիւն մը պիտի չկրեն. բայց թէ որ շատ ցուրտ է կամ սաս-

տիկ անձրև կուգայ , կամ շատ տաք կ'ընէ , չեն կրնար անոնք խեղճերուն հոգ տանիլ . և ոչ իսկ կ'ուզեն որ իրենց ճաշը կիսատ թողուն , կամ իրենց ընկերութեանը անհանգստութիւն մը տրուի ։

3 . Ոմանց ողորմած ըլլալուն ալ արգելք կ'ըլլայ դրանէն մը վերը ։ Ինչպէս՝ Ալատաց (ինչպէս որ գրուած է Ղուկասու աւետարանին Ժ գլուխը) կրնորհէին որ եթէ կանչ առնեն և օգնութիւն մը ընելու ըլլան ան կիսամեռ մարդուն որ աւազակներէն վիրաւորուած էր , գուցէ իրենք ալ աւազակներուն ձեռքը պիտի իյնան ։ Այսպէս՝ թէ որ մէկ մարդ մը չուզէր վտանգի մը դէմ ելլելու , իր անհոգութեամբը շատ գէշ դիպուածներ երեսի վրայ կը թողու ։

4 . Ոմանք ալ [illegible] են , որ ուրիշներուն օգնելու [illegible] կրկորսընցընեն ։ Կարելի է որ բարեսիրտ ըլլան , բայց ասիկայ հերիք չէ ասանկ թշուառութեամբ լեցուն աշխարհի մը մէջ ։ Աշխարհս անանկ մարդոց կարօտ է՝ որ անելիւղ ձեռք զարնեն ողորմութեան գործքերուն ։

Տէրն մեր կըսոսանայ թէ՝ "ողորմածները ողորմութիւն պիտի գտնեն" ։ Բայց չէ թէ մէկ արժանաւորութիւն մը կայ մեր ողորմածութեանը մէջ ։ Անոնք որ աւելի աղէկութիւն կ'ընեն . աւելի խոնարհ համարում մը ունին իրենց վը-

բայ։ Ուստի մենք կ'ընդունինք Քրիստոսի խոստմունքը ձրի պարգևի մը պէս։ Քրիստոս ողորմած կ'ընէ մեզ իր Հոգիովը՝ որ մեր մէջը կը-բնակի. ու իր անդին արիւնովը որ թափեց՝ կ'ողորմի մեր մեղաւոր հոգիներուն, ու մեր մեղքերը և անօրէնութիւնները ալ չյիշեր։

Ողորմած մարդիկները՝ անթիւ ողորմութիւններ կ'ընդունին բարեպաշտ աղքաներուն աղօթքովը. նեղութեան մէջ եղողին օրհնութիւնը անոնց վրայ կուգայ։

Ողորմած է Տէրը՝ ողորմած մարդիկներուն իրենց նեղութեան օրը. իրենց հիւանդութեան և մահուան ատենը՝ Յիսուս խաղաղութիւն կուտայ անոնց. քանզի անատենը աւելի կարօտ են խաղաղութեան։ "Երանի անոր, որ աղքատին հոգ կրատնի. նեղութեան օրը՝ Տէրը պիտի փրկէ անիկայ։ Տկարութեան անկողնին մէջը անոր ուժ պիտի տայ Տէրը. անոր ամէն անկողինը պիտի դարձունէ անոր հիւանդութեան մէջը"։ Սաղմ. խա. 1, 3։

ԵՂՕԹՔ

Ո՛վ Աստուած սիրոյ, ուսկից կը ծագի մեր ամէն շնորհաց յոյսը. մեր բոլոր մեղքերուն թողութիւն տուր, և քաղցրութեամբ ընդունէ մեզ քու սիրելի որդիովդ Յիսուս Քրիստոսով։ Սիրոյ օրէնքը գրէ մեր սրտերուն վրայ քու

Հոգիովդ, գթած ըրէ մեզ ինչպէս որ դուն մեր երկնաւոր Հայրը՝ գթած ես։ Տուր մեզի նմանել քու օրհնեալ Յիսուս Քրիստոսի, որ պատեցաւ բարիք ընելու. (Գործ. Ժ. 38)։ Օրհնէ ամէն անոնք որ ուրիշներուն աղէկութիւն կ'ուզեն. օգնական եղիր աչքն անոնց՝ որ տես կ'ներեան որբերուն և այրիներուն անոնց նեղութեան ժամանակը, և որոնք աղքատներուն հիւանդներուն, ցաւագարներուն և խեղճերուն կրծառայեն։

Ով Տէր, վերցուր մեր սրտերէն չարութեան և անօրէնութեան հին խմորը։ Ի թողուր որ շահախնդրութեան և բարկութեան կիրքը մեր ներսիդին բնակի, այլ քաղցրութեամբ և խոնարհութեամբ լեցուր մեզ։

Տէր՝ որ քու ձեռքդ է ամէնուն սիրտը, քու գթութեամբդ զսպէ բռնութեան և անգթութեան որդիները. մասնաւորապէս ամէն հալածանք ընողին և քու աւետարանիդ թշնամիին զօրութիւնը խորտակէ։ Արդարութիւն և խաղաղութիւնը երկինքէն վար նային, և աշխարհս քու շնորհքովդ լեցուի, մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի միջնորդութեամբ. Ամէն։

ԳԼՈՒԽ · Ը ·

ՍՐՏՈՎ ՍՈՒՐԲԵՐԸ

Մատ · Լ · 8 ·

Երանի՛ անոնց որ սրտովին սուրբ են , քանզի որ անոնք պիտի տեսանեն Աստուած ։

ԱՐԴԿԱՅԻՆ սիրտը՝ բնականարար չարութիւններու լուսակը մըն է ։ Տէրն մեր Յիսուս Քրիստոս կ'ըսէ , թէ "մարդոց սրտէն կ'ելլան չարութեան խորհուրդները , շնութիւններ , պոռնկութիւններ , գողութիւններ , սպանութիւններ , ագահութիւններ , չարութիւններ , նենգութիւններ , գիծութիւն , գէշ աչք , հայհոյութիւն , հպարտութիւն , անզգամութիւն ։ Այս բոլոր չար բաները ներսէն կ'ելլան՝ և կը պղծեն մարդը" , Մատ · է · 22 , 23 ։

Բայց չէ թէ միայն բնութեամբ՝ այլ սովորութիւնով և վարժութիւնով ալ՝ անմաքուր կ'ըլլան մարդիկ ։ Այս որչափ աւելի մեզ գործեն՝ մարմնական ցանկութիւններու հետեւելով , այնքան աւելի կը հեռանան անոնք Աստուծմէ , որ ամենասուրբ է ։ Բուն իրենց հոգին և խիղճը ապականեալ են . ոչ միայն իրենք կը մեղանչեն , հապա կ'ուզեն որ ուրիշներն ալ մեզ գործելու գրգեն ։ Ինչպէս կ'ըսէ Պետրոս ա-

աքեալ . "Արմինին անառակ ցանկութիւններովը կրխարեն անոնք" . բ Պետ . բ . 18 : Ընանկով շատ խեղճ հոգիներ թակարդը կ'ինան ու յաւիտեանս յաւիտենից կրկորսուին :

Ինչպէս կրնայ ուրեմն մարդս՝ որ մեղանչական էակ մըն է , սուրբ ըլլալ :

1 . Առաջին բանը՝ որ հարկաւոր է մեզի , և անշուշտ ասիկայ է ամէն օրուան հարկաւոր եղածը , մեր մեղքերէն մաքրուիլն է , կատարեալ և շարունակ թողութիւնով մը : Մենք կարօտ ենք Քրիստոսի քաւիչ արիւնին որ հաւատքով մեր հոգիներուն կըմերձեցընենք : Քրիստոսի արիւնը՝ ան ատենը որ կըսկսինք հաւատալ անոր , կըմաքրէ մեզ մեր ամէն մեղքերէն , ու ետքն ալ մեր ամէն մեղքերը պարտին ան նոյն անգին արիւնովը լուացուիլ : Ու միայն աս կերպով մեր խղճմտանքը կրնայ մաքրուիլ ան մեռած գործքերէն , կենդանի Աստուածը պաշտելու . (Հբր . թ . 14) : Առանց աս հաշտեցուցիչ արիւնին՝ մեր հոգիները այնքան կրծանրաբեռնին մեղքին ամէն օրուան ապականութիւններէն , որ յուսահատութեան մէջ կրձգեն մեզ : Այլ հիմա ամենէն մեծ մեղաւորը , ամենէն շար ուրացողը կրնայ համարձակ Յիսուսի դիմել , որ գթութեամբ կ'ըսէ անոր , "Լուացուէ և մաքուր եղիր" : Ահա այսպէս՝ Աստուած կըմաքրէ մեր սրտերը հաւատքին միջոցովը :

2 . Երկրորդ հարկաւոր եղածը՝ Հոգւոյն

սրբոյ Նորոգող շնորհքն է։ Լերքին ան մեծ փոփոխութիւնը՝ որով կը մաքրուինք, սրտէն կը սկսի։ "Դրանի՛ սրտով սուրբ եղողներուն". և ոչ ոք կրնայ տալ մեզի աս նոր սիրտը, բայց միայն Աստուած։ Այս ուրեմն աղաչենք զԱստուած՝ ըսելով. "Իմ մէջս մաքուր սիրտ ըստեղծէ, և ուղիղ հոգի իմ մէջս նորոգէ". Սաղ. ծա. 10։ Լենդրենք Աստուծմէ որ իր Հոգիովը՝ սուրբ փափագներ, սուրբ խորհուրդներ, սուրբ և երկնային սէր շնորհէ մեզի։

3. Արտին սրբութիւնը հաստատ կը մնայ երբ որ աղօթքով Աստուծոյ հետ հաղորդութիւն կ'ունենանք. ինչու որ անատենը մեր հոգիին ներքին խորհուրդները կը սրբուին։ Անհնար է որ աղօթք ընենք և միանգամայն մեղքը սիրենք։ Հպարտութիւն և ցանկութիւն, և չար կիրքերը բնաջինջ կ'ըլլան մեր ներսի դին բնակող Աստուծոյ Հոգիին զորութեամբը. և անատենը կը ստանանք ան շնորհքը՝ աչ դիի աչուընիս հանելու, և աջ ձեռուընիս կտրելու։ Աղաքաւ եռանդներ մեր սրտին մէջը աղօթքով կը բորբոքին, ու մեր բնական ապականութիւնները ճնշուելով անհետ կ'ըլլան։ Ընդդադար աղօթքով՝ Հոգիին պտուղները կը շաւանան մեր մէջը, որոնք են. սէր, խնդութիւն, խաղաղութիւն, երկայնմտութիւն, քաղցրութիւն, բարութիւն, հաւատք, հեզութիւն և բարեխառնութիւն։

4. Արտերնիս և վարքերնիս մաքուր պահե-

լու համար , պարտինք մեղաց ամէն առիթներէն փախչիլ ։ Աս բանս շատ աղէկ կը սորվեցունէ երիտասարդներուն և ամէն մարդոց՝ Յովսէփ դեղեցիկին օրինակը ։ Միտգ բեր անգամ մը թէ ինչպէս դուրս փախաւ ան , երբ որ մեղք գործելու փորձութիւնը ունեցաւ նէ , աս խօսքը ըսելով . թէ՝ "Ինչպէս պիտի գործեմ աս մեծ չարութիւնը , Աստուծոյ դէմ մեղանչելով" ։ Երբոր չար մարդիկ կ'ուզեն որ մեղաց վտանգաւոր որոգայթին մէջը ձգեն մեզ , պարտինք խսկոյն փախչիլ անոնցմէ ։ Այո, պարտինք առաջուց ամէն հնարաւոր հոգողութիւնը ընել , անոնց հետ չընկերանալու համար ։ Մաքուր սիրտ ունեցող անձինքը մեկ դի կը ձգեն ամէն պղծութիւնը , ապիրատիզ խօսքերը , և կատակը որ չվայլեր իրենց ։ Մեր զգայարանքները անգամ պէտք է որ ըսկենք . աչքը պիտի ղսպուի չորս կողմը նայելէն . ականջը գոց պիտի պահուի որ անհամեստ խօսքեր չլսէ ։ Մի կարդար անպարկեշտ գիրքեր , ու երեսդդարձուր որևիցէ անմաքուր առարկայէ ։ Թու ախորժակդ ղսպէ , ու մարմնիդ խնամք մի տաներ ցանկութիւնով . (Հռոմ . Ժգ . 14) ։

5 . Թէ որ սրտի կատարեալ մաքրութեանը կը փափաքիս , միտգ բեր որ քու բարեպաշտութեանդ ամէն պատճառները սուրբ պիտի ըլլան ։

Երբեմն մեր սրտին մէջ անիրաւ պատճառ-

ներ կրմտնեն , ան նոյն ատենն ալ որ սուրբ ըլլալու կրփափագենք . ու երբ որ կրկարծենք որ Աստուծոյ ծառայելու փափագող ենք , կարելի է որ մարդոցմէ փառաւորուելու սէրը դրդած է մեզ . ինչու որ կրնաս փառասիրութիւն ունենալ որ ատեն ողորմութիւն կուտաս աղքատաց : Այս ան նոյն ատենը որ կրկարծես թէ երկնային բաներու փափագող միտք մը ունիս , գուցէ անարժան կերպով ստակ շահելու կիրքը տիրեր է քեզի . մանաւանդ թէ ազօթք ըրած ատենդ ալ կրնաս այնպիսի մտածութիւն մը ունենալ որ խիստ կրվնասցուն զԱստուած . վասնորոյ կրսէ Յակոբոս առաքեալ . "Աստուծոյ մօտեցէք , ու ան ձեզի կրմօտենայ , սրբեցէք ձեռքերդ , մեղաւորներ , և շիտակ ըրէք սրտերդիդ երկմիտներ" . գ . 8 ;

Արտաքս սուրբերը "զԱստուած պիտի տեսնեն": Ան հոգիները որ նորոգուած են ու սրբութեան կրփափագին , արդէն տեսած և միանգամայն սիրած են զԱնիկայ : Ինչու որ յայտնեան օրհնեալ Աստուածը՝ յայտնուած է մեզի Յէրն մեր Յիսուս Քրիստոսով . որ սուրբ էր , անմեղ և անարատ . (Եբր . է . 26) ամբիծ ու անարատ դառն . (ա Պետ . ա . 19) : Քրիստոսի հաւատացողները հիմա կրտեսնեն զՅիսուս հաւատոյ աչքովը . բայց երկնից մէջ՝ դիմացէ դիմաց պիտի տեսնեն զանիկայ : "Այս ամէն ոյ որ աս յոյսը իր անձին մէջը ունի՝

ինքզինքը կըմաքրէ , ինչպէս որ անիկայ մաքուր է" . ա Յհ . գ . 3 : Աղօթք ընենք ուրեմն մեր Հոգիին աս ներքին մաքրութեանը համար , ու դէպի երկինքը ճամբորդութիւն ընող մարդոց պէս ապրինք , մտքերնիս բերելով՝ որ հիմա ալ մեր կենցաղավարութիւնը երկինքն է . (Փիլ . գ . 20) :

ԱՂՕԹՔ

Ո՛վ ամենասուրբ Աստուած , որ ամենամաքուր աչքեր ունիս և չես կրնար չարութիւններու նայիլ , քեզի կ՚աղաչենք որ չնայիս մեր ներսի դին ինչպէս ըլլալուն , հապա քու սիրելի Որդիդ համար աւրէ մեր ամէն անօրէնութիւնները , (Ես . ծա . 9) . սրբէ և մաքրէ մեր սրտերը : Գիտենք ո՛վ Տէր , որ Դուն կըսիրես զանոնք որ ուղղութեամբ կ՚երթան , և գթած ես անոնց որ ուղիղ սիրտ ունին : Ընորհք տուր մեզի որ հաւատարիմ ըլլանք Քեզի և ընկերին , մեր ամէն գործքերուն մէջ . մեղքէն պահպանէ մեզ , մտքերնիս ձգելով որ դուն՝ Տէր Աստուած , կըտեսնես մեզ , մանաւանդ թէ մեր սրտերուն գաղտնի խորհուրդներն ալ գիտես : Օգնէ մեզի որ քու առջեւդ սիրելի զաւկներու պէս քալենք : Որովհետեւ մեզի որ քու փառքդ փնտրենք ամէն բանի մէջ , և եղբայրսիրութիւն ունենանք մաքուր սրտով և

բարի խղճմտանքով և անկեղծաւոր հաւատքով։ Դուն Տէր, յայտնէ մեզի, ան կերպովը որ աշխարհին չես յայտներ. և վերջապէս առաջնորդէ մեզի քու յաւիտենական թագաւորութեանդ լուսոյ, մաքրութեան և խնդութեան, Յիսուս Քրիստոսի միջնորդութեամբը. Ամէն։

ԴԻԼՈՒԽ · Թ ·

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԸՆՈՂՆԵՐԸ

ՄԱՏԹ · Լ · 9 ·

Երանի խաղաղութիւն ընողներուն, ինչու որ անոնք Աստուծոյ զաւակներ պիտի ըսուին։

ՈՐՔԱՓ երջանիկ կ'ըլլար աս աշխարհս, թէ որ ամէն տեղ խաղաղութիւնը թագաւորեր։ Խաղաղութիւն Աստուծոյ հետ՝ ան հաւատքովը որ ունինք մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի, առաջին երջանկութիւնն է՝ արժանի փափագելու. անկից ետև՝ խաղաղասէր բնութիւն մը սրտի մէջ, խաղաղութիւն տանը մէջ և դուրսը. խաղաղութիւն դրացիներուն հետ, և խաղաղութիւն աշխարհիս բոլոր ազգերուն հետ։ Ինչպէս կը թուի թէ դժուարին բաներ են ասոնք. բայց կան ոմանք որ խաղաղութեան

համար կ'աշխատին , ու խաղաղութեան Աստուածն ալ կ'օրհնէ զանոնք : Սանկները Աստուծոյ զաւկներ կըսուին , ինչու որ ասով Աստուծոյ կընմանին :

Ներէ ինծի ուրեմն որ ես քանի մը համառօտ խրատներ դնեմ հոս , թէ ինչպէս պիտի ընես դուն՝ երկու անմիաբան կողմերը մէկմէկու հետ հաշտեցընելու և խաղաղութիւն հաստատելու մէջերնին , վասն զի սոսկալի է մասնաւոր պաշտօնը խաղաղութիւն ընողին :

1 . Ամէն բանէն առաջ աղօթէ ըրէ անոնց համար . թէ որ աս բանը սրտանց ընես , կըտեսնէ Աստուած որ կըսիրես զանոնք , և հաւանական է կարծել թէ անանկ կընէ ան՝ որ անոնց ալ զգան քու զանոնք սիրելդ :

2 . Ապա՝ որ ատեն կըտեսնես որ խիստ շատ օտարացեր են անոնք իրարմէ , շատ բաներու մէկէն ձեռք մի զարներ : Կան ոմանք որ շատ դժուարութեամբ կըհամոզուին . Սողոմոն կ'ըսէ , "Աղբայր եղբօրմէն վշտացած , ամուր քաղաք մըն է" . վասնորոյ զգուշութեամբ ձեռք զարնելու է աս բանիս . իրարու դէմ բարկացած կողմերը մէկտեղ մի բերեր , մինչև որ չհամոզես զանոնք որ քիչ մը սէր ունենան մէկըզմէկու վրայ : Դաղցրութիւնը շուտով Ամբայ կըբանայ հաշտութեան :

3 . Անանկ ըրէ՝ որ կարելի եղածին չափ քիչ մարդիկ տեղեկութիւն ունենան մէկ կռիւի մը

վրայով։ Հոգ տար որ քանի մը անձանց մէջ մնայ անիկայ, և զգոյշ եղիր որ դուն չխառնուիս ան կռիւին մէջ։ Երբեմն կը հանդիպի որ մէկ բան մը ինքիրեն մնալով՝ աղէկ վախճան մը կ'ունենայ։ Խանսարկութիւն ընդդէն հեռացիր. ուրիշին գործոցը վրայով շատախօս մի ըլլար։ Լեզուն աւելի կռիւ հանող է քան թէ խաղաղութիւն ընող։

4. Ան մարդիկները որ մեկէն վիշտ մը կրած են, մի ջանար համոզելու զանոնք՝ թէ բան մը կրած չունին. վասն զի բարկացած մարդիկները դիւրաւ չեն խաբուիր։ Թէ որ անիրաւութիւն մը կրած են, ըսէ անոնց որ իրաւունքը իրենցն է. բայց աս ալ մտքերնին ձգէ՝ թէ քրիստոնեաները պարտին իրենց թըշնամիները անգամ սիրելու։

5. Թէ որ հնար ըլլար հպարտութիւնը և անձնասիրութիւնը բժշկելու, ամէն կռիւները շուտով կրնափանէին. մինակ հպարտութենէն առաջ կուգայ կռիւը։ Ո՜հ, որքան թշուառութիւններու պատճառ կ'ըլլայ անձնասիրութիւնը աս աշխարհիս մէջ։ Բայց իմաստութիւնը հեզերուն և մարդասէրներուն հետ կրընակի։

6. Անոնց՝ որ Աստուածաշունչին կը հաւատան, միտքերնին ձգէ ան կերպը որով սորված ենք աղօթք ընել մեր մեղքերուն թողութեանը համար, "Այս մեղ ներէ մեր պարտքերը, ինչպէս որ մենք ալ կը ներենք մեր պար-

տականներուն" ։ Մատ. զ. 12։

7. Ընցած գացած անհաճոյ բանները վերբոտին մի պատմեր. քանի հին վերբը պատուելով կամ մինակ անոր դպչելով ուրիշ բան չես ըներ, բայց յաւիտեան բաց կընգես զանիկայ, ու չես թողուր որ գոցուի։

8. Կրօնքի վրայ վէճեր ընելով՝ անմիաբանութիւնը մի էվելցուներ։ Կրօնքը անոր համար հաստատուած չէ որ վիճաբանութեան նիւթ մը ըլլայ։ Ալ երէն եղած իմաստութիւնը նախ մաքուր է, ու ետը խաղաղարար։ Բայց սաստիկ կրօնական վիճաբանութիւնները՝ սովորաբար տգիտութեամբ կըսկըսին, հպարտութեամբ կըշարունակուին, և շատ անգամ ատելութեամբ և յամառութեամբ կըվերջանան։ Ասիկայ է Սատանային վերջի հայուածը, որով կ'ուզէ ան կտոր կտոր ընել եկեղեցին։

Մինչդ բեր որ Սատանայի որդիքը՝ պատերազմ, վիճաբանութիւն, նախատինք, քսութիւն և զրպարտութիւն կըսիրեն։ Անոնք շարութեան և նախանձու մէջ կ'ապրին, ատելի են՝ ու մէկզմէկ կ'ատեն։ Սակայն Աստուծոյ որդիքը սիրելի են և մէկզմէկ կըսիրեն. անոնք քաղցրութեամբ կըվարվին ամէնուն հետ, խաղաղութիւն և երջանկութիւն փնտրելով ան նոյն տեղին համար՝ ուր որ իրենք կըբնակին, և անոր խաղաղութեամբը իրենք ալ խաղաղութիւն կ'ունենան։ Կամ թէ որ վէճ մը ալ ել-

լայ նէ իրենց դէմ , տակաւին քաղցր խաղաղութիւն մը կ'ունենան Աստուծոյ հետ ։ Անիկայ կարող է իրենց թշնամիներն ալ՝ խաղաղութեամբ իրենց հետը ապրեցունել . և վերջապէս անոնք պիտի մտնեն յաւիտենական քաղաքը խաղաղութեան , վերի երկնային Երուսաղէմը ։

Աս տեղս արժան կը համարիմ Աղանէոյ վերաբերեալ քանի մը խրատներ ալ դնել ։ Որը որ ընտանիքիդ մէջ խռովութիւն մը պատահելու ըլլայ , ամէն բանէն առաջ խաղաղութիւն խնդրէ Աստուծմէ Յիսուս Քրիստոսի միջնորդութեամբը որ Աշխան խաղաղութեան է ։ Օգնշ եղիր ան ամէն բաներէն որ խռովութիւն կը գրգռեն և կը որորոքեն ։ Ամէն բանի մէջ պարկեշտութիւն ունեցիր , զանկերդ բարեկիրթ մեծցուր . մի թողուր որ անոնք բարձրաձայն խօսին , և կամ մէկզմիկու համար գանգատ ընեն առանց հարկաւորութեան և բարկութիւնով ։ Սորվեցնուր անոնց իրարու հետ քաղցրութեամբ և սիրով վարուիլ ։ Հետևեալ տողերը՝ կ'արժէ որ բերան սորվին մարդիկ , և տեսպ կրկնեն զանոնք ընտանեաց մէջ ։

Քու բոլոր գործերդդ սիրով ցերմանան
Եւ անոյշ խօսքեր միշտ բերնէդ ելլան ,
Սուրբ Կոյսին որդւոյն Յիսուսի նման՝
Ադրէ՛ հեղ , խնայող , ալեհարհիս վրան ։

ԷՊՕԹՔ

Ով Տէր՝ Դուն միայն կարող ես ընել որ ամէն մարդ մէկ սիրտ և մէկ հոգի ըլլան, և եղբօր պէս մէկտեղ բնակին։ Կ՚աղաչենք քեզի՝ թափէ վերէն մեր վրայ, և քու բոլոր Եկեղեցիդ վրայ սիրոյ հոգին, և առատօրէն սփռէ մեր սրտերուն մէջը քու սուրբ Հոգիդ պարգևը, որպէս զի կարենանք ծառայել քեզի հանդարտ մտքով, և մեր բովանդակ կեանցը մէջ աղէկութիւն ընել և ոչ չարութիւն։

Հեռացուր մեզմէն ամէն նախանձ, հակառակութիւն, և սնապարծութիւն։ Որովհետուր մեզի խոնարհութեան հոգիով պատուել ուրիշները մեզմէ աւելի։ Եւ օգնէ մեզի որ մեր լեզուին սանձ դնենք, որ մեր խօսքը՝ Աստուծոյ փառքին ու մարդիկներուն օգտին համար ըլլայ։ Ով Տէր, ամէն տեղ խաղաղութիւն տուր մեզի, բժշկէ մեր ամէն երկպառակութիւնները, կարող ըլլա մեզ միութեան հոգին պահել խաղաղութեան կապովը։ Վերջացուր ամէն պատերազմը, խռովութիւնը և սնոտի վէճը, խաղաղութիւն և օրհնութիւն բնակի մեր վրայ, մեր ընտանեացը վրայ և բոլոր Եկեղեցիին վրայ։ Եւ վերջապէս շնորհէ մեզի՝ Տէր, մէկ տեղ մը ան խաղաղ բնակարանին մէջ, որն որ Տէրն մեր Յիսուս Քրիստոս պատրաստեց ամէն անոնց որ քեզ կը սիրեն։ Կը խնդրենք

բենք, տո՛ր մեզի աս բաները, քու որդւոյդ Յիսուս Քրիստոսի միջնորդութեամբը։ Ամէն։

ԴԼՈՒԽ Ժ.

ՀԱԼԱԾՎԱԾՆԵՐԸ

Մ-ՈՒ Լ. 10—12։

Երանի՛ անոնց որ հալածված են արդարութեան համար, թունու որ երկնից թագաւորութիւնը անոնցն է։

Երանի՛ է ձեզի՝ երբ որ կրնախատեն ձեզ և կը հալածեն, ու սուտ տեղը ամէն կերպ գէշ խօսքեր կը խօսին վրադիդ՝ ինձի համար։

Խնդացէք և ուրախ եղէք, թունու որ ձեր վարձը շատ է երկինքը։ քանզի աս կերպով հալածեցին ձեզմէ առաջ եկած մարգարէները։

Ասոնց որ աշխարհիս ճամբան կը թողուն և Աստուծոյ ծառայութեանը կընդիրեն զերծնիք, գիտնան որ մէկ հակառակութեան մը պիտի հանդիպին։ Աս բանը բացայայտ կը ցուցնուցի սուրբ Պրոց մէջ։ "Այս ամէնքն ալ որ կ'ուզեն աստուածապաշտութեամբ ապրիլ Քրիստոս Յիսուսով, հալածանքի մէջ պիտի կենան"։ բ Տիմ. գ. 12։

Աստոր պատճառը յայտնի է։ դարձի եկած մարդ մը՝ իր օրինակովը կը դատապարտէ զաշխարհը։ թէ որ հարցուցեն իրեն աս ունեցած

մեծ փոփոխութեան պատճառը, անիկայ հա-
մեստութեամբ կրպատասխանէ, թէ առաջ կը
քալէր ան համարձակ ճամբուն մէջ որ կորըս-
տեան կը տանի. (Մ-ԴՌ. է. 13): Այս հա-
ւատարմութիւնը կը վշտացընէ մեղաւոր և աշ-
խարհասէր մարդիկը. ու սատանան անոնց ըղ-
գայասէր սրտերը կը դրդէ որ ցուցընեն իրենց
թշնամութիւնը Աստուծոյ դէմ։ Իմա անոնք
կ'ատեն ան մարդը՝ որն որ ատեն մը կը սիրէին.
կը մտածեն թէ ալ անոր ընկերութիւնը բոլորո-
վին ձանձրալի և վշտացուցիչ է. թէ որ միայն
կրօնքի վրայով խօսիլը՝ և հոգևորական բաները
մէկ դի ձգելու ը լլար ան՝ հաճելի կ'ը լլար իրենց. բայց անիկայ չկրնար աս բանը ընելու,
ինչու որ անասունը իր հոգին վտանգի մէջ դը-
րած կ'ը լլայ։

Իրաւմամբ ոգին ասօրուան օրս շատ անգամ
ծաղրական բան մը կը դառնայ. ամբարիշտ մար-
դիկը խիստ խօսքեր կը ղրուցեն արդարներուն
դէմ. "Ի՞նչ է աս կ'ըսեն, որ ինքդինքդ ու-
րիշներէն աղէկ ը լլալ կը կարծես։ Ի՞նչ օգուտ
է այդքան խստութիւն ընելը. ինչու՞ չես զբօս-
նուր և քու բոլորտիքդ եղած մարդոցը պէս
ժամանակդ չես անցուներ։ Ինչու՞ կ'ելթաս կը
հետեւիս խելք մը մելամաղձոտ կեղծաւորներուն.
ի՞նչ իրաւունք ունիս սուրիշ մարդիկները վար
դարնելու. ուրիշ բան չէ քու միտքդ, բայց
եթէ անուն ստանալ անոնց մէջը"։

Արդարև դժուարին է՝ որ մէկ մարդ մը կարենայ շատերուն դէմ կենալ։ Արդեն Նոր Հետևող մարդոցը խիստ բան մըն է զԱրիստոս խոստովանիլ, երբ որ ասանկ ծաղը կ'ընեն զերենք. մանաւանդ որ ատեն ուրիշներէն կընախատուին իրենց ունեցած շատ մեղքերուն և պակսութիւններուն համար։ Այսու ամենայնիւ՝ անկեղծ հաւատացեալը իր սրտին մէջ անանկ համարձակութիւն մը ունի, որ երբէք չթուլնար. և ասիկայ ան սիրոյն պտուղն է, որով իր վարդապետը կըսիրէ։ "Այ՝ս պիտի ամշնամ Յիսուսէ" կըպոռայ ան. "անհնար է որ ասանկ ընեմ. ի՞նչպէս կրնամ ես ուրանալ կամ մէկ դի թողուլ ան Փրկիչը՝ որ ինծի համար այնքան ամօթ և չարչարանք կրեց. թող տուէք որ ես անոր հետևիմ բանտը դրուելով և անարկիւղ մեռնելու երթալով։ Այլ որովհետև ես անանկ անգութ տանջանքներ պիտի չկրեմ, թող տուէք որ ես իմ ընտանեացս մէջ և իմ օրական գործքերուս մէջ խոստովանիմ զՅիսուս՝ թէ իր բարեկամներուն և թէ իր թշնամիներուն առջևը։ Այրաեի թէ անանկ սաստիկ սէր ունենայի իմ Փրկչիս վրայ որ երբէք չզգայի ամբարիշտ մարդիկներուն ծաղրը։

Այսկից զատ՝ միթէ պարտաւորութիւն չունի՞նք ամբարիշտ մարդիկներուն համար աղօթք ընելու և յորդորելու զանոնք. թող անոնք մեզի գան, բայց մենք չդառնանք անոնց։

Յիսուս շատ կըսիրէ հալածվածները. որչափ որ անոնք սաստիկ անարգուած ըլլան աշխարհիս մէջը, և երբեմն փորձութիւն ունենան աներջանիկ կարծելու իրենց վիճակը, այսու ամենայնիւ Յիսուս յայտնապէս "Երանի" կուտայ անոնց։ Երանի նեղութիւն քաշողներուն. անոնք Յիսուսի կընմանին։

Տէրն մէր՝ ոչ միայն կըհրամայէ իր աշակերտներուն որ հալածանքէ չվախնան, այլ կ'ըսէ նաև. "Ցնդացէ՛ք և ուրախ եղէք". վասն զի չարչարանք կրելու արժանի ըլլալը՝ խիստ մեծ պատիւներուն մէկն է Քրիստոսի եկեղեցիին մէջը։

Հանգիստ կեանք վարող քրիստոնեաները հանդարտ ժամանակներու մէջ՝ պատուելի մարդիկ են. բայց հալածուած քարոզիչները և հաւատացեալները անիրաւութեամբ նեղութիւն կրելով, շատ աւելի պատուաւոր աստիճանի մը կըհասնին։ Սուրբ Ստեփաննոսի անագորուն մահը՝ շատ քարոզիչներէն աւելի մեծ վկայութիւն կուտայ Աւետարանին։ "Ընտիր բանակ մըն էր ան, մարտիրոսաց բանակը, որ իրենց կեանքը մահուան նուիրեցին, պատերազմին մեծ դաշտին մէջը". Դոբ. Ե. 18։

Թէ որ դուն կանչուած ես՝ սիրելի՛ բարեկամ, Յիսուսի Անունին համար նեղութիւն կրելու, մի՛ նստ քաշուիր, այլ մանաւանդ ըսպասէ անոր. կրէ ան նեղութիւնը հեղութիւ-

նով . մի ամէնաբ խաչէն , անով պարծենցիր . և աղօթէ անոնց համար որ կը հալածեն քեզ , ինչպէս որ աղօթեց Յիսուս ըսելով . "Հայր՝ թողութիւն տուր ատոնց . ինչու որ չեն գիտեր ինչ կ'ընեն" . Ղուկ . իդ . 34 : Վերջապէս միտդ բեր իր խօսքը՝ "Ինձ 'ի մահ հաւատարիմ եղիր , ու քեզի կենաց պսակը պիտի տամ" . Յայտ . բ . 10 :

ԸՊՕԹՔ

Ով Տէր՝ Հայր մեր երկնաւոր , գոհութիւն կը մատուցանենք քեզի , որ քու շնորհքովդ առաջնորդեցիր մեզ որ ճանչնանք զԱՐԵՎ՝ միայն ճշմարիտդ Աստուած , և որ դուն խրկեցիր՝ Յիսուս ԽՐԻՍՏՈՍը , որ է կենաց յաւիտենական : Կը փափագինք որ մեր վիճակը քու ժողովուրդդ վիճակին հետ միացուենք , լաւ համարելով տառապանք կրել անոնց հետ , քան թէ քիչ մը ատեն մեղաց հեշտութիւնը վայելել : Կարողութիւն տուր մեզի՝ քու ծառաներուդ , որ որ չարչարուած Աստուծոյ Գառնուկը փրկեց . որպէս զի ամէն օր մեր խաչը առնենք ու անոր ետևէն երթանք : Օգնէ մեզի՝ քու առջևդ անանկ վարուելու , որ ամէնուն հաճելի ըլլանք , որ վշտանալու իրաւացի պատճառ մը չտանք անոնց . ու մեր թշնամիներն ալ հաշտեցուր մեր հետը :

Այլ թէ որ տրուած է մեզի՝ ոչ միայն Քրիստոսի հաւատալ, այլ և անոր Անուանը համար նեղութիւն կրել՝ օգնէ մեզի. Տէր, որ աս բանիս համար ուրախ ըլլանք, մէկ նշան մը սեպելով զանիկայ որ քուկիններդ ենք։ Մի թողուր որ աս աշխարհիս սիրոյն համար, և վախնալով անկէ՝ որ մարդիկ կրնան ընել մեզի, ուրանանք Քէզ. հապա զօրացուր մեզ քու Հոգիդ զօրութեամբը, որ կարենանք հետևող ըլլալ անոնց որ շատ նեղութիւններով Աստուծոյ թագաւորութիւնը մտան. (Գործ. Ժդ, 21)։

Աղերսէ՝ քու ճշմարտութեանդ և քու ժողովուրդիդ ամէն հալածողներուն։ Ցուցուր անոնց իրենց մեծ մեղքը և վտանգը. դարձուր անոնց սրտերը և յօժարեցուր ընդունելու անՓրկիչը՝ որն որ հիմա կ'արհամարհեն։

Կ'աղաչենք քեզի, ով Տէր, որ առաջնորդես, կառավարես և պաշտպանես մինչև վերջը՝ քու հաւատարիմ ծառաներդ. և վերջապէս ժողուէ մեզ ցորենի պէս՝ շտեմարանիդ մէջը, քու մեծ Անունիդ փառքովը, մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի միջնորդութեամբը. Ամէն։

ԳԼՈՒԽ · ԺԸ ·

ՄԵՐ ԵՐԿՆԱՒՈՐ ՀԱՅՐԸ

ՍԱՂ · Ը · 9 ·

Ուստի ասանկ աղօթք ըրէք դուք · Ո՛վ Հայր մեր՝ որ երկինքն ես · քու անունդ սուրբ ըլլայ ։

ԱՐԵԼԻ բարեկամ · թէ որ կրփափագիս որ սիրես և հետևիս Տէրոջը · որպէսի որ տկար ըլլայ քու ունեցած փափագդ · անշուշտ պիտի ուրախանաս երբ որ կրսորպիս թէ ինչպէս աղօթք ընելու է անոր ։ Պէտք է Աստուծոյ դիմել · անոր հետ խօսիլ անոր պատասխանին սպասել և անոր ողորմութեանը ապաւինիլ · արդեօք ասիկայ հաճելի չէ՞ քեզի ։ Մեր հոգիները չեն կրնար առանց աղօթքի ապրիլ · աղօթքն է սիրելը և շարունակութիւնը հոգեւորական կեանաց ։ Երբ որ Յիսուս Տարսոնացին դարձի եկաւ · անոր նշանը աս իսօսքովս տրուեցաւ · "Ահիկայ դեռ աղօթք կ'ընէ" Գործ · Թ · 11 · ու նաքն այ աղօթքով անցուց ան իր կեանքը ։

Դայց մեղք · որ շատ անգամ չենք գիտեր թէ ինչ բանի համար ըստ արժանւոյն աղօթելու ենք · ինչպէս և ինչ խօսքերով (Հռոմ · Ը · 26) ։ Մեր Տէրոջը աշակերտները աս բանը զգալով՝ հարցուցին անոր և ըսին · "Տէր

մեզի աղօթք ընել սորվեցուր" Ղուկ. ԺԱ. 1. վասնորոյ Յիսուս սորվեցուց անոնց ան աղօթքը՝ որն որ սովորաբար Տէրունական աղօթք կ'անուանենք. և որ շատերնիս մեր տղայութեան ժամանակէն 'ի վեր սորված ենք։

Արդ՝ մանիկ ըրէ որ բացատրեմ քեզի աս աղօթքին զանազան մասերը։ Իմակուհիմա մինակ առջի խնդրուածքին վրայով խօսինք. "Ո՛վ Հայր մեր՝ որ երկինքն ես, քու Անունդ սուրբ ըլլայ"։ Եւ աղաչենք զսուրբ Հոգին՝ որ աս խօսքերը մտածելու ատեննիս՝ հեղու մեր վրայ շնորհաց և աղօթքի հոգին։

1. Աս աղօթքը՝ նախ սրտերնիս դէպի վեր կ'ուղղէ մեր երկնաւոր Հօրը։ Աստուած է մեր Հայրը. ինչու որ անիկայ ստեղծեց մեզ, անիկայ մեր ամէն օրուան հացը կուտայ մեզի, և մեր հոգիները ու մեր մարմինները իր ձեռքն են։ Ուրիշանդակ մարդոց որդիները իր ընտանիքն են. անիկայ է մեր ստեղծողը՝ չէ թէ մենք։

Ուայց յատկապէս՝ Անիկայ է Հայրը ամէն անոնց որ իր որդւոյն Յիսուս Քրիստոսի կը հաւատան, իրենց հոգիներուն փրկութեանը համար։ Ուանդի թէ բնութիւնով և թէ գործքով՝ ապստամբ և անհնազանդ որդիներ ենք. և Աստուած պիտի մերժեր մեզ, իր առջևէն պիտի վռընտեր, և դժոխքին անվախճան տանջանքներուն մէջը ձգեր։ Ուայց Յիսուսի վրայ եղած հաւատքովը՝ մեր հաշտութեանը ճամբայ

քացաւ . ասանկով վերսին հրաւիրուած ենք մեր Հօրը տունը , ուսկից որ հեռացած ենք ։

Սիրելի՛ ընթերցող , քանի որ տեսնես թէ դուն աս հաւատրը ունի՞ս արդեօք ։ Մտածէ թէ սորված ես շնորհաց աթոռին առջեւը երթալու , Քրիստոսով քու խնդրուածքներդ մատուցանելու , և քու սիրտդ ձեռքերովդ դէպի երկինքը բարձրացնելու , ցնծութիւն մը զգալով աս մտածութեանդ մէջ՝ թէ Աստուած՝ Քրիստոսով քու Հայրդ է , և քու բարեկամդ ։

2 . Թէ որ ստուգիւ կը սիրես աս երկնաւոր Հայրը՝ սուրբ պիտի ընես իր մեծ Անունը . "Սուրբ ըլլայ քու անունդ" . ասիկայ ըլլալու է քու սրտանց աղօթքդ ։

Աստուածաշունչին մէջ գանազան տեղուանք Աստուած յայտներ է թէ ինչ է իր անունը ։ Մովսէսի հետ կրկնօսի ըսելով . "Ես եմ որ Ես" . Ելք . գ . 14 ։ Ինկայ աս անունովը զինքը կը կոչէ . "Ես եմ" , և աս ալ կ'ըսէ . "Սիկայ է իմ յաւիտենական անունս , և ասիկայ է իմ յիշատակս ազգէ ազգ" ։ Եւ "Եհովա" կ'անուանէ զինքը . և կը հրամայէ մեզի որ "աս մեծ և փառաւոր Անունէն" վախնանք (ը Օրէն . իր . 58) ։ Հետագայ անուններովն ալ յայտնեց զինքը ։ Տէրը ամպով Սինա լեռը իջաւ , և Տէրոջը անունը կանչեց . "Տէր՝ Տէր Աստուած , ողորմած ու բարերար , երկայնամիտ և առատ ողորմութիւնով ու ճըշ-

մարտութիւնով հաղարներուն ոդորմութիւն ը-նող՝ չարութիւնը ու անօրէնութիւնը և մեղքը ներող՝ բայց յանցաւորը ամենևին անպարտ չթո-ղուր . հայրերուն անօրէնութիւնը որդիներուն վրայ՝ ու որդւոցը որդիներուն վրայ մինչև երեք ու չորս ցեղը հատուցանելով" Նեհ . ԼԴ . 5 , 6 , 7 :

"Սուրբ ընել Աստուծոյ անունը" կընշանակէ՝ մեր սրտին մէջ սուրբ տեղ մը տալ անոր , պատուել և երկրպագութիւն ընել անոր :

Ստածէ՛ ուրեմն , սիրելի՛ ընթերցող , թէ ով որ անպատուութիւն կրբերէ Աստուծոյ ա-նուանը՝ ամենևին չկրնար աս աղօթքը ըրած սեպուիլ , ընելու ալ ըլլայ նէ : Կրօնքի վրայ որ և իցէ ծաղրաբանութիւն ընելը , ինչպէս և սովորաբար երդում ընելը՝ մէկ մարդու մը ա-ռանց աղօթքի ապրելը կրցուցընէ : Անիկայ աս խնդրուածքը չմատուցաներ դէպի վեր՝ հոգւով և ճշմարտութեամբ :

Որչափ սոսկալի բան է որ երբեմն անանկ հայհոյիչներ կըգտնուին երկրի վրայ , որոնք դը-ժոխքին մէջը եղած սատանաներուն պէս ամբա-ռիշտ խօսքեր կըզրուցեն : Եւ ասոր հակառակ՝ ոչչափ բարեպաշտ հոգիներ կան՝ որ խիստ կը-փափագին սուրբերուն և հրեշտակներուն ընկե-ցութեանը երկնից մէջ , ուր տեղ գիշեր ցո-րեկ անդադար կ'աղաղակեն անոնք , "Սուրբ՝ Սուրբ՝ Սուրբ՝ Տէր Աստուած Ամենակալ . որ

էր՝ և է, և ան որ պիտի գայ»։ Յայտ. գ. 8։

Մեր Փրկչին, մեր Տէրոջը և մեր Աստուծոյն Յիսուսի Անունը՝ պէտք է որ երկրպագութիւն ընդունի, սիրուի, և փառաւորուի իր փրկած բոլոր ժողովուրդէն։ Վասնզի այսպէս հրաման եղած է որ ամէնքը պատուեն Որդին, ինչպէս որ Հայրը կը պատուեն (Յովհ. ե, 23)։ Բնոր պէս ալ պարտիմք փառաւորել Մխիթարիչ Սուրբ Հոգին Անունը։ Հայր, Որդի և Սուրբ Հոգի ամէնքն ալ մէկ Անուն ունին, և ասանց Անունովը միրտուած ենք։ Տէրը մէկ է, հաւատքը մէկ, միրտութիւնը մէկ։

Փառաւորենք զԱստուած՝ մեր սրտերուն մէջ. որ անատենը բերկրութիւն պիտի ունենանք մեր շրթունքներովը և մեր բարի օրինակովը պատուելով զանիկայ։ Եւ ասանկ պատրաստուինք պիտի՝ Քրիստոսի անբաւ շնորհքովը, փառաւորելու զԱնիկայ յաւիտեանս յաւիտենից երկինքին մէջը։

ԵՂՕԹՔ

Ով յաւիտենական երանութեամբ փառաւորեալ Եհովա, Հայր, Որդի, և Սուրբ Հոգի, Տէր և Աստուած մը, Դուն բարձր և սուրբ տեղը կը կենաս. Դուն յաւիտենականութեան մէջ կը բնակիս, սուրբ է քու Անունդ։ Եկա երկինք երկնից չեն կրնար բովանդա-

կել քեզ . և պիտի ընակին Աստուած մարդոց հետը երկրի վրայ (գ Մոր . ը , 27) : Որհնեալ ըլլայ քու Անունդ . դուն ըսիր թէ պիտի նայիս աս մարդիկներուն մանաւանդ թէ հեզերուն և խոնարհներուն , և անոր՝ որ կը դողայ քու խօսքէդ . (Եսայ . կզ , 2) :

Տէր , արժանի չենք որ դուն մեր երդիքին ներքևը մտնաս (Մատթ . ը , 8) . այսու ամենայնիւ կ'աղաչենք քեզի՝ քու խոստմունքիդ համեմատ , եկուր և բնակէ մեր սրտերուն մէջը : Մոռցուցիր մեր մեղքերուն , և Յիսուսի քաւիչ արիւնովը մաքրէ մեզ : Անոր մարմինները կենդանի տաճար ըրէ Հոգւոյն Սրբոյ . ամէն ատեն քու շնորհովդ օգնէ մեզի , որ հոգւով և ճշմարտութեամբ ծառայենք և երկրպագութիւն ընենք քեզի :

Պատրաստէ մեզ՝ քանի որ երկրի վրայ ենք , որ արժանի ըլլանք վայելել քու տեսութիւնդ յաւիտենական փառքին մէջ . ուր որ քու ծառաներդ քեզ կը պաշտեն , Աստուծոյ ու գառին անունը իրենց ճակատներուն վրայ գրուած (Յայտ . ԺԲ , 1) , և ուր որ խոնարհութեամբ կ'աղաչենք քեզի , որ վերջապէս գանուինք , Յիսուս Քրիստոսի մեր Միջնորդին և Փրկչին ձեռքովը . Ամէն :

ԳԼՈՒԽ • ԺԹ ։

ԱՍՏՈՒԾՈՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԱՄՔԸ

ՄԿՐ • Ը • 10 ։

Քու թագաւորութիւնդ գայ ։ քու կամքդ ըլլայ ։ ինչպէս որ երկինքը՝ անանկ ալ երկրիս վրայ ։

ԻՆՉ կրնդրենք արդեօք աս կարճ խօսքովը ։ Աղօթք կ՚ընենք որ Աստուծոյ շնորհքը մեր սրտերուն մէջը թագաւորէ . որ ամէն մարդիկ գան ու Աւետարանին փրկարար գիտութիւնը սորվին . և Աստուած իր շնորհաց գործը կատարէ , իր ամէն զաւակներուն համար՝ վերը երկնից փառքին մէջը ։

1 . Որպէս զի հասկընաս թէ ինչպէս շնորհքը սրտի մէջ կրթագաւորէ , մտածէ քիչ մը քու սրտիդ բուն վիճակին վրայով ։ Հարցուր դուն քեզի . "ինչ է ան որ իմ սրտիս մէջ կը թագաւորէ , մեղքը արդեօք թէ աստուածպաշտութիւնը . Պատասխան՝ թէ Աստուած ։ Հիսուս ստացեր է իմ հոգիս , թէ ես դեռ գերի եմ մեղաց , պէսպէս ցանկութիւններու և հեշտութիւններու հետևելով ։

Մինդգ բեր որ՝ կամ Հիսուս կամ մեղքը պիտի տիրէ մեր սրտերուն ։ Ասոնք չեն կրնար

մէկ տեղ թագաւորել. չեն կրնար երբէք միաբանիլ իրարու հետ. թէ որ մեղքը կը թագաւորէ՝ Յիսուս քու Տէրդ և Փրկիչդ չէ։ Թէ որ Յիսուս է տիրողը՝ անատենը ալ մեղքը իշխանութիւն չունենար քու վրադ։

Կարելի է որ քիչ մը փափագ ունիս սրբութեան. թէ որ ասանկ է նէ՝ ջանք ըրէ որ ատ փափագդ կատարելագործես. քանզի Յիսուս կը հրամայէ մեզի որ աղօ՞ք ընենք կատարեալ սուրբ ըլլալու համար. "Քու կամքդ ըլլայ"։ Ա՛յ ի՞մ կամքս, ոչ մարմնին կամքը, ոչ աշխարհի կամ Սատանայի կամքը. հապա Քո՛ կամքդ, ո՛վ ողորմած Աստուած և Հայր իմ։

Եւ ո՞րքան. որչափ որ քու կամքդ կ'ըլլայ երկինքի մէջ. այսինքն՝ անխափան, բոլորով սրտիւ, ամբողջապէս և շարունակ։ Գուցէ պիտի ըսես. "Հապա է ասիկայ՞. բայց ես կը հարցունեմ՝ կրնա՞ր արդեօք ասկէց քիչ պահանջել Յիսուս։ Կարծե՞ս որ անիկայ գոհ պիտի ըլլայ, կամ պարտաւոր է գոհ ըլլալ կէս սրտէ մը. անշուշտ ոչ։ Քանզի կ'ուզէ ան կամ ամբողջ սիրտը ստանալ կամ ոչ ուրիշ բան։

Բայց դուն պիտի ըսես. "Երբէք մէկը Աստուծոյ կամքը ըրած է երկրի վրայ, ինչպէս որ կ'ըլլայ երկինքը"։ Պատասխան կուտամ, թէ չէ, և ոչ մէկը։ Բայց Յիսուսի ճշմարիտ աշակերտը կը՞ղջայ ասանկ ընելու. և ասիկայ է աղօթքին միտքը։ Ան որ կը ջանայ վերը ելլե-

լու , կը հասնի ան բարձր տեղը . իսկ ան որ միայն կէս Ճամբան հասնիլ կ'ուզէ , բան մը ձեռք չկրնար բերելու : Ընդհակառակն՝ քանի մը տարկար բաղձանքներէն ետև , վերստին կը հեռանայ բոլորովին Աստուծոյ կամքէն , և անոր թագաւորութիւնը ձեռք չբերեր :

Յիսուս կարեկից կ'ըլլայ և թողութիւն կուտայ անոնց որ զանազան տկարութիւններու մէջ ինկած կը հառաչեն . Անիկայ անոնց մեղքերը կը ջնջուայ իր անդին արիւնովը . (Յոյ . ա . 5) կը հաստատէ անոնց նուաղեալ սրտերը , և անոնց առաջադրութիւնները կը զօրացուցնէ . Իվերջի շնորհք կուտայ անոնց (Յակ . դ . 6) : Ասոր համար է ուրեմն որ աղօթք կ'ընենք ըսելով . "Թողութիւն շնորհէ , Տէր , իմ ամէն օրուան մեղքերուս , և ամէն օրուան զանցառութիւններուս , ու միշտ թագաւորէ իմ վրաս , և քու Հոգիովդ՝ քու կամքդ իմն ըրէ" :

Երբ որ կ'աղօթես որ շնորհք ունենաս Աստուծոյ կամքը ընելու , աղօթք ըրէ նաև որ համբերութիւն ունենաս իր կամացը հաղանդելու : Ռանդի կարելի է թէ իր կամքը ան է որ դուն ենդութիւն քաշես կորուստներով , հիւանդութիւններով , աղքատութիւնով , աշխատանքով և տմարդութիւն կրելով , կամ թէ շատ տանջանքներ մէկմէկու վրայ : Այս բաները կուտայ քեզի Աստուած՝ քու հաւատքդ փորձելու համար . ուրեմն ընդունէ զանոնք սիրով

ինչպէս որ Աստուած սիրով կուտայ քեզի։ Եթէ որ գաւաղանը ծանրութեամբ իջնայ, և հազիւ թէ կարճ աղօթք մը կարենաս ընել, պէտք է որ միշտ ասանկ աղօթես. "Հայր, քու կամքդ թող ըլլայ"։ Մի՛տքդ բեր մեր Փրկչին խօսքերը՝ որ իր մահուան տագնապներուն մէջը ըսաւ. "Ո՛վ Հայր իմ՝ թէ որ կարելի է, թող աս գաւաթը ինծմէ անցնի. բայց ոչ թէ ինչպէս ես կ'ուզեմ, հապա՝ ինչպէս որ դուն". Մարկ, իզ. 39։

Զ. Ա՛ս խնդրուածքը ալ աւելի աղէկ հասկընալու համար, մտածէ թէ աշխարհիս մէջ շատ մարդիկ կան որ առանց Աստուծոյ կ'ապրին։ Ուստի աղօթք ըրէ որ Աստուծոյ թագաւորութիւնը գայ անոնց, որ յօժարութիւն ունենան Աստուծոյ ձրի շնորհքը ընդունելու։ Հաւատը պղծողները և հայհոյիչները, շնացողները և պակշռանները. գողերը, ագահները, գինոփները, նախատողները և ամէն տեսակ ամբարիշտները՝ որ և իցէ հասակի, հիմա բոլորն ալ դուրս են Աստուծոյ թագաւորութենէն։ Պարտինք բոլոր սրտով աղօթք ընել և խնդրել Աստուծմէ, որ զանոնք ալ ներս առնէ, քանի որ ատեն կայ։ Այթէ ոչ՝ դուրսի խաւարը պիտի նետուին անոնք, և յաւիտեան պիտի չտեսնան Աստուծոյ թագաւորութիւնը. (Մարկ. ը. 12)։

Ու երբ որ կըսենք կամ կըկարդանք թէ

ամբողջ ազգեր կռապաշտութեան մէջ կ'ապրին, որչափ պարտինք սիրել ան ամէն հաւատարիմ քարոզիչները որ ան հեռաւոր տեղուանքը կերթան աւետարանելու համար հեթանոսներուն մէջը Քրիստոսի անքննելի մեծութիւնը (Էֆես. գ. 8)։ Աղօթք ըրէ որ Աստուած օրհնէ զանոնք ինչպէս և անոնց գործքերը, որ հոգիներն զօրանայ և գործքերնին յաջողութիւն գտնայ, և բոլոր աշխարհ Յիսուս Քրիստոսով փրկութիւնը ճանչնայ։

3. Այլ ինչ երջանիկ օր մը պիտի ըլլայ ան, երբ որ մեր Հօրը թագաւորութիւնը կատարելապէս յայտնուելու ըլլայ վերը երկինքին մէջը։ Ինատենը՝ սուրբերուն փառաւորեալ մարմինները պիտի միանան իրենց փառաւորեալ հոգիներուն հետ, ու անոնք կատարեալ սրբութիւն և խնդութիւն պիտի ունենան։ Ինչպէս կրնանք ստորագրել յաւիտենական կենաց երանութիւնը երկնից մէջ. "Ան բաները որ աչք չէ տեսեր՝ և ականջ չէ լսեր, ու մարդու սիրտին մէջ չէ ինկեր, Աստուած իր սիրելիներուն պատրաստեց". ա Կորնթ. բ. 9։ Այսու ամենայնիւ երբեմն մտածականի և աղօթքի մէջ, կրնանք վայելել երկնային մեկ ճառագայթը. ու անանկ կրթուի մեզի որ փրկուածներուն օրհնութեանց ձայնը կըլսենք. և անատենը կըփափագինք անոնց հետ ըլլալու ան երջանիկ տեղը, ուր որ ազատ կ'ըլլանք յաւիտեան

մեղքէն և նեղութիւնէն։ Տէր Յիսուս շուտով հասցուր քու թագաւորութիւնդ. և մինչև անոր գալը՝ հաստատուն պահէ ոտքերնիս նեղ ճամբուն մէջը. ան մէկ հատիկ ճամբուն մէջը՝ որ երկնային փառացը կ'առաջնորդէ։

ԱՂՕԹՔ

Ով Տէր Աստուած ամենակարող. սրբութեան մէջ փառաւորեալ, օրհնութեան մէջ սքանչելի (Ելէց. ժե, 11). քու իշխանութիւնդ յաւիտենական իշխանութիւն է, և քու տէրութիւնդ ազգէ ազգ. (Դան. դ, 3, 34)։ Ամէն բան քեզի կը ծառայէ. քու սուրբերը՝ քեզ կ'օրհնեն, և ամբարիշտները՝ քու բարկութեանդ օրը պիտի չկրնան բարձրացընել զիրենք։

Լսէ, Տէր, մեր աղօթքը, հիմա որ ընդունելի ժամանակ է։ Ազատէ մեզ մեղքերէն, և փրկէ մեզ բարկութենէն՝ քու որդւոյդ Յիսուս Քրիստոսի քաւիչ արիւնովը։ Արժանի ըրէ մեզ՝ որ քու հնազանդ ծառաներդ ըլլանք, քու սուրբ Հոգիդ զօրութիւնովը։ Քու օրէնքդ դրոշմէ մեր ներսի դին. սորվեցուր մեզի քու կամքդ կատարելու, ինչու որ Դուն ես մեր Աստուածը. քու Հոգիդ բարի է. առաջնորդէ մեզի և պահէ մեզ քու ճամբուդ մէջը, որ մեր սրտերը ալ չհեռանան Քեզմէ։

Օրհնէ, Տէր, քու հաւատարիմ ծառաներդ, որ քու խօսքդ կը քարոզեն աշխարհիս ամէն կողմը։ Քու աւետարանիդ ձայնը ամէն երկրի մէջ լսելի՝ ըրէ, կործան։ Սատանային իշխանութիւնը, և խրկէ քու օրհնեալ Հոգիդ որ երկրի երեսը նորոգէ։ Շուտով հասցուր ան ժամանակը՝ որ աշխարհի թագաւորութիւնները, մեր Տէրոջը և իր Քրիստոսին թագաւորութիւնները պիտի ըլլան, ու անիկայ պիտի թագաւորէ յաւիտեան։

Այս բաները կը հենդրենք, Տէր, մեր Տէրոջը Քրիստոսի զօրաւոր Անունովը։ Ամէն։

ԳԼՈՒԽ · ԺԴ ։

ԱՄԷՆ ԱՒՈՒՐ ՀԱՑԸ

ՍԱՂՄ · Ը · 11 ։

Մեր ամէն աւուր հացը՝ տուր մեզի տուր։

ԱՐԴՈՒՍ ամէն աւուր մարմնական պիտոյքը բնաւ չեն պակիր · կերակուր, հանգերձ, բնակարան, դեղ, ճամբորդութիւն և ուրիշներուն օգնութիւն ընել · ասոնց ամէնը շատ ստակի կարօտ են · և աս ստակը շահելու համար շատ նեղութիւն և աշխատութիւն պէտք է։ Արդ՝ աս մարմնական պիտոյից ամէն մէկը

պարունակեալ է աս կարճ աղօթքին մէջը , որն որ Տէրն մեր Յիսուս Քրիստոս սորվեցուց մեզի . և ասիկայ է մի միայն աղօթքը մեր աշխարհային հարկաւոր եղած բաներուն համար . "Ամեն ամէն աւուր հացը՝ ասօր մեզի տուր" :

1 . Նախ և առաջ՝ հաց կըխնդրենք . վասն զի հացն է հարկաւոր և հասարակ կերակուրը մարդուն . բայց անիկայ խոտերու կամ պտուղներու նմանիր . որոնք կըբուսնին կ'աճին , և պատրաստ կերակուր մին են ուտողներուն . հապա ցանելու , հասցուցնելու , աղալու , թըրելու և եփելու աշխատութիւնը կըպահանջէ , նաև յաջողակութիւն և ջանք ուտելէն առաջ : Աս Հոգ բառովը՝ մարդկային մարմնոյ ամէն հարկաւոր եղածը կ'իմացուի . քանզի ուրիշ որ և իցէ բանին տեղը խիստ հարկաւորը դրուած է :

Հաց խնդրելով՝ նաև Աստուծոյ օրհնութիւնը կըխնդրենք անոր վրայ . վասն զի՝ "չէ թէ հացով միայն կ'ապրի մարդ . հապա՝ Աստուծոյ բերնէն ելած ամէն խօսքովը" ը Օրէն . ը . 3 : Կըխնդրենք որ Աստուած առողջութիւն տայ մեզի աշխատելու համար , որչափ ատեն որ կըհաճի աս շնորհքը ընելու : Ու երբ որ տկար և հիւանդ ալ ըլլանք՝ աս սոյն աղօթքովը կըխնդրենք Աստուծմէ որ օրհնէ մեզի տրուած դեղը կամ մեր բարեկամներուն ցուցուցած մարդասիրական խնամքը և հոգողութիւնը : Սանկով առաջ կ'երթանք , և քիչ քիչ մեր գաւառա-

նին կոթնելով կը քալենք . ապա հաղիւ թէ կրնանք շարժիլ , մինչև որ վերջապէս մահը կուգայ կը հասնի մեզի : Ընտանեաց ալ բանի մը հարկաւորութիւն չունենար մարմինը , բայց եթէ նեղ գերեզմանի մը , որ դիւրաւ ձեռք կրբերուի , և որ մեկը անհանգստութիւն չտար անոր :

2 . Տէրն մեր աս նշանաւոր խօսքն ալ կ'աւելցուցեր "Ամէն աւուր" : Աս օրուան համար միայն՝ որ անցնելու վրայ է , կերակրէ իս , ինծի յարմար եղած կերակուրովը : Արդ չկրնար մեկ օր մը ապրիլ՝ ու ըսել թէ երկու օր ապրեցայ . և որովհետև չենք կրնար երկու օրուան կերակուրը մեկէն ուտել առանց նեղացընելու մեզ , վասնորոյ միայն մեկ օրուան համար պարտինք հոգ տանիլ : Մեր աշխարհութեամբը կը բնանք գալու ատենին համար պաշարներ դիզել՝ մեզի և ուրիշներուն համար , մասնաւորապէս աղքատաց համար : Բայց մեր բաղձանքները և հոգերը պարտինք չափաւորել մինակ մեկ օրուան հարկաւոր եղածովը . և Աստուծոյ խնդրել չէ թէ վաղուանը :

3 . Աս աղօթքին մէջը՝ Տէր կ'ըսենք . ինչու որ ամէն բան Աստուծոյ պարգևն է : Թէ որ մեր կեանքը՝ հոգ ցորեն հասցուներէն կախեալ ըլլար , երբէք պիտի չկրնայինք պատառ մը հաց գտնելու : Վասանզի թէ որ ուզէ Աստուած երկինքը փակել անձրև չտալ , կարող է մեկէն

ոավ բերել ամենէն հարուստ աղգին , կամ բովանդակ աշխարհի ։ Սովորաբար մտքերնիս չենք բերեր աս բանը՝ մինչև որ կարօտութիւն, նեղութիւն կամ աղքատութիւն չկրենք ։ Բայց մեղք , որ ինչ ատեն Ղեղ-ի-ն մեջ կըմբռնի , իսկոյն կըսկսինք տրտունջ ընել Աստուծոյ դէմ . և կրնմանինք անատենը ճիշդ ապստամբ իսրայէլացիներուն , որոնք անապատին մէջ տրտունջ ըրին ։ Աղօթք ընենք ուրեմն խոնարհութեամբ՝ Աստուծոյ ձրի պարգևներուն համար . որոնք թէ տալու ըլլայ մեզի և թէ ոչ , շնորհակալ ըլլանք իրմէ միշտ՝ Քրիստոսով ։

Աս տեղս նշանակել կ'ուզեմ նաև քանի մը բան , որ աս աղօթքին բացատրութեանը կըվերաբերին ։

1 . Աս աղօթքը կ'արդիլէ նախ՝ ղեղ-ի-ն ։ Բան ոմանք որ բաղձանք մը ունին ձեռքերնին անցած հաճել բաները ուտելու , գէշ ցանկութիւններու հետևելով և փորերնին աստուած մը ընելով ։ Աղքատներն ալ որ հալիւ թէ ուսելիք մը կրնան ձեռք բերել իրենց ունեցած քիչ ստակովը , կ'երթան կըվատնեն զանիկայ ոգելից խմելիքներու . ու իրենց կոկորդը լեցընելով զանոնք՝ կ'այրեն կըտոչորեն ըղեղնին , ու իրենց կենսական ոգիները կրցամքեցուցեն ։ Արկրամոլութիւնը . և արբեցութիւնը՝ թէ հարուստին և թէ աղքատին , բոլորովին հակա-

ռակ են աս աղօթքին մտացը . "Ամեն հայը տուր մեզի" ։

2 . Աս աղօթքը կ'արդիւք խիստ մեծ հոգ ընելը հացի համար ։ Թէ որ հաւատքով կը-խնդրենք՝ Աստուած կը հոգայ մեզ . և ասիկայ է հաւատքին մխիթարութիւնը . և աս մխիթարութիւնը՝ շատերուն տրտմութեամբ լցուած սրտերը կ'ուրախացընէ , և շատերուն երեսի կնճիռը կը փարատէ ։ Աստուած խաղաղութիւն կը շնորհէ այն մարդուն՝ որ հաւատարիմ է և աղօթասէր . բայց նեղսիրտ մարդը իր մխիթարութիւնը և առողջութիւնը կը կորսընցընէ ։

3 . Աս աղօթքը կ'արդիւք ծուլութեան հացը ։ Աստուածաշունչին օրէնքը աս է , "Ան որ չուզեր գործ գործել , հաց ալ թող չուտէ" . բ Թես . գ . 10 ։ Ոչոչ մարդը տեսակ մը գող է . անիկայ իրաւունք չունի իր կերածին վրայ ։

4 . Կ'արդիւք նաև խարդախութեան հացը ։ Գողերը , խաղաստէրները , և ամէն տեսակ անառակ մարդիկը , զբաղած ըլլան կամ անզբաղ , երբէք աղօթք չեն ըներ ։ Սանկները շարունակ Աստուծոյ բացայայտ պատուիրանքներուն դէմ կը կենան . և թէպէտ Աստուած կը համբերէ որ անոնք աս կերպով իրենց հացը շահին , և երբեմն ալ քիչ մը ատեն հարստանան , այսու ամենայնիւ՝ անոնց ամէն մէկ վաստակը իրենց դէմ վկայութիւն պիտի տայ Աստուծոյ Օրը ։ Ինչ արժէք կ'ունենան

խարդախութեամբ ստացուած հարստութիւնները, թէ որ բաղդատես՝ մէկ օրուան հացի մը պատառին ու գաւաթ մը ջուրին հետ՝ որ մաքուր խղճմտանքով ձեռք կբերուի։

5. Կ'արդիլէ նաև շահինդրութեան հացը. քանզի երկրի արդիւնքը ամէնուն համար է։ Յոբ՝ որ հարուստ և արդար մարդ մըն էր, կըպատմէ թէ երբէք մինակ կերած չէ իր պատառը։ Յիսուս ալ մաքերնիս կըձգէ որ աղքատները միշտ մեր հետը ունինք (Մարկ. իզ. 11) թէ անոնց ինչ որ ընենք՝ Իրեն բրած կ'ըլլանք (Մարկ. իե. 40) և կ'ըսէ՝ թէ էվելօք երանելի է տալը՝ քան թէ առնելը. (Գործ. ի. 35)։ Ուստի Աստուծոյ դէմ կ'ըլլայ ասանկ աղօթք ընելը. "ՏԱ՛ՒՐ ԻՆՁԻ, ինձի միայն"։ Ուրեմն աղաչէ Աստուծոյ, որ սորվեցունէ քեզի ուրիշներուն տալու սրբազան արհեստը։ Եւ թէ որ ստակ չունիս նէ տալու, չե՞ս կրնար ժամանակէդ տալ, օգնութիւն կամ բարեկամութիւն մը ընել կարօտութեան մէջ գտնուողներուն։ Հրինակի աղագաւ, թէ որ քանի մը ժամ հիւանդ դրացիդ քովը կրնաս կենալ նէ, ստակէն աւելի արժողութիւն կ'ունենայ քու բրածդ։ Օգոյշ ըլլանք որ չըլլայ թէ միայն մեր օգուտը փնտրենք։

Միրելի՛ բարեկամ, Աստուծոյ առ երկու պարգևներուն վրայով ադէկ մտածէ. այսինքն նախ՝ իր փրկարար շնորհքին, ետքը՝ մարմնոյդ

առողջութեանը վրայով։ Թէ որ քեզի ամէն աւուր հացը տայ կամ չտայ, դուն մտադրութեամբ աշխատէ որ փրկարար շնորհքը ստանաս։ Ասիկայ է յաւիտենական կենաց հացը։ Քրիստոս է ան կենաց հացը։ Ո՞հ, ուտենք Անկից՝ որ կենդանի մնանք յաւիտեան։

ԱՂՕԹՔ

Ով Տէր, արարիչ, պահպանիչ և փրկիչ մեր. դու որոշեցիր որ մենք ժամանակ մը աս աշխարհիս վրայ բնակինք. ուստի քեզի կընայինք որ կերակրես մեզ քանի որ աս կեանքիս մէջ ենք, և մեր անմահ հոգիներուն ողորմիս, հիմա և յաւիտեանս յաւիտենից։

Ողորմէ մեզի՝ երբ որ մենք ճամբորդներու պէս աս արտասուաց ձորէն կ'անցնինք։ Կերակրէ մեզ՝ մեզի յարմար եղած կերակուրովը։ Կարողացուր մեզ՝ որ ամէն մէկներնիս արթնութեամբ աշխատի իր օրինաւոր կոչմանը մէջ։ Որչափ որ տրտմինք կամ ակարութեան և թշուառութեան մէջ իյնանք, և կամ սովու վտանգի մէջ, զօրացուր մեզ քու շնորհքովդ, որ Քեզի ապաւինինք։ Բարեկամներ տուր մեզի, Տէր, պէտք եղած ատենը. սորվեցուր մեզի նաև թէ ինչպէս պարտինք բարեկամութիւն ընել ուրիշներուն որ կարօտութեան և նեղութեան մէջ են։ Ասանկ առաջ տար մեզ՝

մեր կարՃ կեանքին մէջը։ Կերակրէ մեր հոգիները երկնային Մանանայովը, որ է մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի շնորհքը, և նորոգէ մեզ անոր սուրբ Հոգիովը։ Ու երբ որ մեր մեռնելու ատենը գայ, ո՜հ, գուն եղիր մեր սրտին զօրութիւնը, և մեր բաժինը յաւիտեանս յաւիտենից։ Աւրժանի ըլլ մեզ քու երկնային բնակարանիդ, որ նստինք հոն Աբրահամու, Իսահակայ և Յակոբայ հետ, քու սեղանիդ հացը ուտելու, քու տնտութեամբդ կշտանալու, և քեզի նման ըլլալու մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի միջնորդութեամբը. Ամէն։

ԳԼՈՒԽ. ԺԴ։

ՄԵՂԱՑ ԹՈՂՈՒԹԻՒՆԸ

ՄԱՐԿ. Ը. 12։

Եւ մեզի ներէ մեր պարտքերը, ինչպէս որ մենք ալ կը ներենք մեր պարտաքիչներուն։

ՂՈՒԿ. ԺԱ. 4։

Եւ մեր մեղքերը մեզի ներէ. ինչու որ մենք ալ մեր պարտաքիչներուն ամէնուն կը ներենք։

ԻՆՉՊԷՍ որ աղօթք կ'ընենք ամէն աւուր հացին համար, ասոր պէս ալ պարտինք աղօթք

ընել ամէն օր թողութիւն առնելու համար։ Մեր մեղքերուն թիւը՝ գլխուս մազերէն շատ եվելի է, անանկ որ լեթ անոնք չներուին՝ պիտի կորսուինք անոնցմով յաւիտեանս յաւիտենից։ Բ.սասիկ աս կարևոր նիւթը քու միտդ ձգելու և քու խղճմտանքդ արթնցուցնելու համար հետագայ խորհրդածութիւնները պիտի ընեմ։

1. Ասիկայ պիտի ըլլայ մեր աղօթքը՝ երբոր ասէ անդամ առ Աստուած կրկնելով. որովհետև անատենը ստոյգ կրգիտնանք կորսուած մեղաւորներ ըլլալնիս, երբ որ մեր հոգին մեղաց թմրութենէն կարթննայ։ Ես զգացումը ունեցած ես դուն. և հիմա ալ կըզգաս արդեօք։ Ամբարշտութեամբ և ունայնութեամբ անցուցած օրերդ, վշտալի՝ ամօթալից և վտանգաւոր ժամանակի մը տեղ գրած ես։ Խղճմտանքդ կըգողայ արդեօք թէ ան նոյն ատենները՝ դուն Աստուծոյ մէկ թշնամին էիր։ Աստուծոյ ողորմութիւնը զղջումի բերաւ քեզ. կըգողայ կը սարսափի՝ սիրտդ քու մեղքերուդ ծանրութեանը տակը, անտաներլի բեռ մը համարելով զանոնք։ Թէ որ աս ամէնը կրզգաս դուն՝ երանի քեզ. ուրեմն Յիսուսի դիմէ, գալու բարկութենէն ազատ մնալու համար։ Աստուծոյ ազաչէ ըսելով՝ "Ամ մեղքերէս երեսդ ծածկէ, ու ամէն անօրէնութիւններս ջնջէ"։ Սաղմ. ծա. 9։ Ասիկայ երբէք աս աղաչանքը չմերժեր։

Յիսուս է "Աստուծոյ Գառը՝ որ աշխարհի

մեղքը կըվերցունէ" Յհ. ա. 29. "Տէրը մեր ամէնուս անօրէնութիւնները անոր վրայ դրաւ". Եսայ. ծդ. 6։ Մօտիկցիր ուրեմն աս գթած Փրկչին. աղաղակէ առ Աստուած բարձր ձայնով և ըսէ. "Թողութիւն տուր իմ ամէն մեղքերուս՝ Քրիստոսի համար"։

2. Անկէ ետքը պարտիս ուշադրութիւն ընել որ ասիկայ պիտի ըլլայ մեր ամէն աղօթքը. ինչու որ ոչ մէկ օր՝ և ոչ մէկ ժամ մը կ'անցնի որ մեղք չգործենք։ Աստուծոյ որդիքը թէպէտև յոժարութեամբ մեղաց չեն ծառայեր, այսու ամենայնիւ շատ անգամ տկարութենէ և մեղքէ կը յաղթուին։ Իրաւ չեն ուզեր որ անոտի խորհուրդներ բնակի իրենց սրտին մէջը, սակայն անանկ խորհուրդները շատ անգամ իրենց սիրտը կըմտնեն, և քիչ ատենի մէջ մեծ վնաս կըհասցունեն. Աս բնական ապականութիւնը կըտառապեցընէ ան սուրբ Հոգին Աստուծոյ՝ որով կնքըվեցանք փրկութեան օրը. (Եփես. ա. 13։ դ. 30)։

Ո՜հ, երբ որ ծածուկ աղօթք կ'ընենք, աշխարհը մարմինը և Սատանան մեզ փորձելու կ'աշխատին. և կըսկսինք անանկ բաներ ընել ըսել և խորհիլ, որոնցմէ պէտք էր որ զգուշանայինք. և ոչչափ բաներ բոլորովին զանց կ'ընենք, որոնք պարտաւոր էինք ընելու։ Ահա ասոնք են խոնարհեցընող մտածմունքները՝ խոնարհ հոգիներուն։

3. Լսելից զատ՝ երբեմն ալ ասիկայ հանուր աղօթք մըն է. քանզի երբ որ մեծ մեղք մը մոլորեալ մարդուն խղճմտանքը տանջելու ըլլայ, կըսորընցունէ անոր թէ ուր երթալ և ինչ ընել պէտք է։ Վնաս շուտով, գնա՛ շիտակ Պրիստոսի խաչին և վերնայէ. և թէ որ կ'ամրշնաս վերնայելու, կուրծքդ ծեծէ և ըսէ. "Տէր թողութիւն տուր ինծի"։ Յիսուս կըլսէ առ հաւաչանքը. ասիկայ ընդունելի է իր ականջներուն։ Լու աղէկ դիտցիր թէ հազարաւոր տարտմածներ կան, որոնք քեզի պէս կ'աղաղակեն և արցունք կըթափեն թողութեան համար։ Հեծեծանքները՝ անհաճոյ ձայներ կը թուին, բայց քաղցր են անոնք զօրութեանց Տէրոջը ականջին. որ պատրաստ է պատասխանել և ասանկ ըսել անոնց. "Լաւ կընէիր, կընէիր քու մեղքերդ. բաւական է որ ինծի դառնաս։

Լորը որ մեր մեղքերուն ասանկ թողութիւն կ'ընէայ, մենք ալ պարտինք յօժարակամ ուրիշներուն թողութիւն տալ։ Այսպէս ինչ կ'ըսէ Յիսուս խաչին վրայ. ըսէ թէ ինչպէս աղօթք կ'ընէ զինքը խաչը հանողներուն համար. "Հայր թողութիւն տուր անոնց"։ Մտածէ թէ որչափ աղղու է աս օրինակը. "Վնա՛ս թողութիւն գտած մեղաւոր. քու բոլոր պարտքդ ես կը նեռեմ քեզի. հիմա գնա՛ և աղորմէ քու ընկեր ծառայիդ, ինչպէս որ ես քեզի աղորմեցայ"։

Ահա աս հրամանը մեր ամէն աւուր աղօթքին հետ կըխառնէ, որ մենք թողութիւն առնելու համար աղօթք ըրած ատեննիս՝ միշտ յիշենք թէ մեր պարտաւորութիւնն է ամէն ատեն սիրով ներողամիտ ըլլալու ուրիշներուն։

Մտածէ՝ որ Տէրն մեր չըսեր թէ, "Ձեր մեղքերը պիտի թողուին, ինչ-որ ուրիշներուն թողութիւն կուտաք". որովհետև մեր թողութեան մի միայն պատճառը Քրիստոսի արիւնն է, և չէ թէ մեր ունեցած մէկ բարեբաւութիւնը։ Կարծես թէ ասանկ կ'ըսէ ան. "Որովհետև թողութիւն տուի ձեզի, դուք ալ ուրիշներուն թողութիւն տուէք"։ "Ինչպէս եղիք, ինչպէս որ է, ալ գթած եմ". Ղուկ. զ. 36։

Իմա դուն ալ աս գթութեան կանոնը գործածէ. թէ որ ընտանիքիդ մէկը անքաղաքավարութիւն մը ըլաւ քեզի, կամ վէճ մը ունի քու հետդ. թէ որ դրացիներդ մէկը նախատեց քեզ. թէ որ թշնամի մը կըբարկացընէ կամ կընեղէ քեզ. թէ որ մէկը խարդախութիւն կ'ընէ քեզի և իր խոստմունքը չկատարեր. թէ որ մէկը արդարութեան համար քեզ կըհալածէ, ներէ ասոնց ամէնուն ալ. ներէ միշտ յօժար կամքով, և բոլոր սրտով. մտածելով՝ թէ կարող էր Աստուած խիստ ծանր հաշիւ մը պահանջել քեզմէ։ Ներէ ուրեմն, ինչպէս որ դուն կըյուսաս ներումն գտնել։ Արտանց ներէ։

Սիրելի՛ բարեկամ, պէտք է որ մեր սրտերը

նորոգուին , որպէս զի կարենանք սորվիլ աս խնդրուածքը ընել մեզի համար՝, և մեր թշնամիները սիրել ։ Աղաչենք ուրեմն Յիսուսի , որ շնորհք տայ մեզի՝ ապաշխարող , հաւատացող ու եղբայրասէր ըլլալու ։

ԵՂՕԹՔ

Տէր Աստուած ամենակալ , ամենասուրբ և ամենափառաւորեալ , ով՝ և ինչ ենք որ համարձակինք քու առջևդ գալու ։ Հոգ և մոխիր ենք մենք , անմաքուր բաներու պէս ենք , և իրաւունք ունինք ամշնալու մեր անօրէնութեանը համար՝ որ մեր խիստ աղէկ ծառայութիւններուն անգամ կիցց է ։ Բնաւ յոյս մը չունինք մեզմէ , ինչու որ մեր վրայ ամենեին ողջ բան մը չկայ ։

Բայց Դուն՝ որ քու մեկ հատիկ Որդիդ տուիր որ մեռնի մեր մեղքերուն համար , գթութիւնեան աչքով վար նայէ և ողորմէ մեզի ։ Մի մերժեր մեզ քու առջևէդ , մի վերցուներ մեզմէ քու սուրբ Հոգիդ , հապա Յիսուսի համար ընդունէ մեզ ողորմութեամբ , և սիրէ մեզ՝ թէև արժանի չենք քու սիրոյդ ։

Տէր՝ շնորհէ մեզի զղջմանն և ապաշխարութեան հոգիին պարգևը որ հաճելի է քեզի ։ Որքերնիս ձգէ ամէն տեղ և ամէն ժամանակ քու ներող սիրոյդ կարօտ ըլլալնիս , որ քու

աղօրմութեանդ խոստմունքներուն ապաւինինք հաստատուն հաւատքով։ Եթէ միանակ ըլլանք և թէ ընկերութեան մէջ, մեր սրտերը աղաղակեն ըսելով՝ Տէր, թողութիւն շնորհէ մեզի։ Մեր զբաղմունքներուն մէջ՝ կամ գիշերը արթընցած ատենիս, թող մեր հոգիները շարունակ աղաղակեն ու թողութիւն խնդրեն։ Երբ որ հիւրընդնանք և մեռնելու մօտիկնանք, ՈՏ, ան ատենը ասիկայ ըլլայ մեր աղօթքը. Լնայէ մեզ քու ողորմութեամբդ. ընդունէ մեզ քու սիրելի Որդւոյդ համար, և պատրաստէ մեզ պարզերես կենալու Քրիստոսի ահաւոր ատեանին առջևը, իր արժանաւորութիւնը յառաջ բերելով՝ մեր կատարեալ արդարութեանը և մեր յաւիտենական փրկութեանը համար։

Եւ որովհետև շատ անգամ թողութիւն առած ենք, սորվեցուր մեզի, Տէր, ջերմեռանդութեամբ սիրել ուրիշները, և թողութիւն տալ ամէնուն որ կրկնտացունեն մեզ։ Այլ երկնաւոր՝ քու բոլոր զաւակներուդ սրտին մէջը լեցուր եղբայրական սիրոյ հոգին։ Պատրաստէ մեզ սուրբերուն երանելի մասնակցութեանը լուսոյ մէջ, ուր տեղ կատարեալ խաղաղութիւն, մաքրութիւն և սէր կայ փառքի մէջ. ուր տեղ ոչ մեղք, ոչ կռիւ և ոչ նեղութիւն կայ. ուր տեղ առջի բաները անցած պիտի ըլլան, և Ան՝ ամէն բան պիտի նորոգես։

Լսէ մեր աղաչանքը՝ Տէր բարերար, ընդու-

Նէ , կատարէ , և օրհնէ քու ծառաներդ . Յիսուս Քրիստոսի միջնորդութեամբը . Ամէն :

ԴԼՈՒԽ · ԺԱ ·

ՓՈՐՁՈՒԹԵՆԷ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Մատ · Զ · 13 :

Ու մեզ փորձութեան մի՛ տանիր . հապա՝ չարէն մեզ ազատէ :

Փորձութեան վտանգները՝ և մեր բուն տկարութեան յիշատակը . պէտք է որ դողացընէ մեզ : Ուստի մեր մեղքերուն թողութիւն խնդրելէն ետև , Տէրն մեր Յիսուս Քրիստոս կը սորվեցունէ մեզի աղօթք ընել որ շնորհք առնենք գալու փորձութիւններէն պահպանուելու : Ասիկայ մեր պարագաներուն յարմար աղօթքն է : Մտածենք ուրեմն թէ ինչ է մեր վիճակը , և խնդրենք Աստուծմէ որ միշտ պահէ մեզ իր սուրբ Հոգիին շնորհացը մէջ :

1 . Փորձութեան պարտ–ութիւնը՝ գրեթէ մարդուս ստեղծուելուն պատմութեանը պէս հին է : Քանզի Աստուած Ադամը ու Եւան ստեղծելուն պէս՝ փորձիչը դրախտին մէջ մտնելու հնարը գտաւ : Նախ՝ իր խորամանկութեամբը

խաբեց Եւան, և ապա անոր ընկերը փորձեց։ Երկուքն ալ կերան արգելեալ պտուղը և գբաախտէն վրընտուեցան։ Ան աղետալի ժամանակէն 'ի վեր՝ անպակաս կըփորձուին բոլոր Ադամայ որդիքը։

2. Փորձութեան օգնութիւն ընելը՝ բուն մեր սրտին բնական ապականութիւնն է. ուստի ամբարշտութիւն է զԱստուած բամբասել աս բանիս համար և ըսել. "Ինչու համար իս ասանկ ըրիր"։ "Ընդլայ որ մէկը որ փորձութեան մէջ է՝ ըսէ թէ Աստուծմէ կըփորձուիմ. ինչու որ Աստուած չար բաներով չի փորձուիր. ոչ ալ ինքը մէկը կըփորձէ։ Ամէն մէկը կըփորձուի՝ իր ցանկութիւններէն քաշված ու խաբված. անկէ ետև ցանկութիւնը որ կըյղանայ՝ մեղք կըծնի. և մեղքը որ կատարվի՝ մահ կըծնի"։ Յակ. ա. 13—15։

Որչափ կ'օգնեն փորձութեան՝ նաև մեր մարմինին անդամները. օրինակի աղագաւ՝ ինչպէս շուտով կըպատաղի աչքը մեղանչական առարկաներուն վրայ, որ յանցաւոր կիրքեր կըգրգռեն սրտին մէջը։ Եւ որ ուխտ չընենք մեր աչքերուն հետ, այսինքն թէ որ չդսպենք աչքերնիս, հազարաւոր ցանկական մեղքերու դուռ մը կ'ըլլան անոնք։

3. Փորձութեան գլխաւոր դռները՝ Սատանան է, մեր ծածուկ թշնամին. որ մեր յայտնի թշնամիին աշխարհին հետ մէկ եղած կըփոր-

ձէ մեղ։ Աստանան՝ մեր սրտին ապականութիւնը կը դրդէ աշխարհիս բաներովը, մարմնի ցանկութիւններով, աչքի ցանկութիւններով և կենաց հպարտութիւնովը։ Ասանկով՝ ամէն բան որոգայթ մը կ'ըլլայ զգայասէր սրտին։ Մարդիկ կը փորձուին՝ թէ առողջութենէ թէ հիւանդութենէ. թէ յաջողութենէ և թէ ձախորդութենէ. թէ հարստութենէ և թէ աղքատութենէ։ Մեր ամէն մէկ հասակին ալ յարմար փորձութիւններ կան։ Տղայութիւնը՝ անհոգութիւն ունի. երիտասարդութիւնը՝ ինքզինքը զբօսանքներու կուտայ. այրական հասակը՝ յաժարութիւն մը ունի ստակ շահելու, և աշխարհային պատիւ և բերկրութիւն. ծերութիւնը՝ նեղսրտութիւն և ագահութիւն ունի, և կրցածին չափ աշխարհիս կապուիլ մը։ Ընկերութեան մէջ ուրիշ տեսակ փորձութիւն կայ, և առանձնութեան մէջ ուրիշ տեսակ։

Հիրաւի՝ Աստուծոյ ողորմութեամբն է միայն մեր բոլորովին չկործանիլը, հոգիով և մարմնով։ Ինչու որ Աստուած գթալով մեր վրայ երբեմն մեղք գործելու յաժարութիւնը փարատեր է մեզմէ, որ ատեն ատիթ ունեցեր ենք մեղանչելու. կամ երբեմն ատիթը խափաներ է, որ ատեն մեղք գործելու սաստիկ յաժարութիւն մը ունեցած ենք սրտերնուս մէջը։ Մի՞շտ միտքդ բեր որ Աստանայի սահմանին մէջն ենք, փորձութիւններով պաշարուած, որոնք կրնան

մեր անկումը և կործանումը պատճառել ։

Ահա տեսանք հիմա մեր վտանգաւոր վիճակը՝ ան բազմաթիւ որոգայթներուն համար որ չորս կողմերնիս առած են . ուրիշ անգամ առիթ պիտի ունենանք քսելու թէ ինչ ընել պէտք է որ անոնցմէ ազատինք ։ Հիմակուհիմա երկրպագութիւն ընենք Աստուծոյ ողորմութեանը՝ որ մինչև ցայսօր պահպանեց մեզ . և աղօթք ընենք որ միշտ պահպանէ և առաջնորդէ մեզ անվտանգ մինչև 'ի վախճան ։

ԱՂՕԹՔ

Ով Տէր՝ Հայր մեր երկնաւոր, որ կը տեսնես մեր մեղսալից սրտերը, և շարունակ մեծ վտանգներու մէջ ը՛ալնիս . հրաշալի՛ է արդարև քու մեղի ըրած համբերութիւնդ մինչև հիմա ։ Դուն՝ արթնցուր մեղի երբ որ անհոգութեան մէջ կը գտնուինք . օգնէ մեղի երբ որ փորձութեան մէջ կ'ը՛ալնանք . և թող մի տար որ չար իշխանութիւն մը՝ աշխարհի կամ դըժոխքի , յաղթէ մեղի ։ Միշտ մտքերնիս բեր մեր սրտերուն խարդախութիւնը . և քո Հոգիովդ պահպանէ մեզ որ չհեռանանք Քենէմէ ։ Յօժարեցուր մեզ որ ունայնութիւններէն աչքերնիս դարձուننք , և ամէն գեշ խորհուրդներուն դէմ ականջնիս գոցենք . և մեր հոգիները շարժէ քու սուրբ Յոգիդ խրատներովը

և մխիթարութիւններովը, որ քաջալերութիւն ունենանք քու ճամբուդ մէջ կենալու, մեր Տէրոջը Հիսուս Քրիստոսի միջնորդութեամբը. Ամէն։

ԳԼՈՒԽ · ԺԱ։

ՓՈՐՁՈՒԹԵՆԷ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

(ՀՐԱՆՈՒՆԻՆ։)

ՄԱՐ · Ա · 16։

Ու մեզ փորձութեան մի՛ տանիր, հապա՝ չարէն մեզ ազատէ։

ԱՆԽԸՆԹԱՑ գլխոյն մէջ տեսանք թէ որչափ մեծ վտանգի մէջ կը գտնուինք խիստ շատ փորձութիւններ ունենալով մեր կենացը ճամբուն մէջը։ Պէտք է հիմա որ քանի մը կանոններ տամ քեզի՝ քու հոգիիդ փրկութեանը համար։

Փորձութենէ ազատ մնալու ճամբան՝ անդադար աղօթք ընելն է։

1. Նախ՝ աղօթք ըրէ ՀՐԱՆՈՒՆԻՆԷՆ ԱՆՈՒՆԸ։ Օգուշութիւն ունեցիր քու վտանգիդ և տկարութեանդ վրայ։ "Մի՛ հպարտանար, հապա վախցիր"· Հռոմ. ԺԱ. 20։ "Ուստի ան որ

կ'ըսէ թէ հաստատուն կեցած է , թող զգուշանայ որ չըլլայ թէ իյնայ". ա Կորնթ . ժ . 12 :
Այլ՝ ինչ աղետալի ճամբայ ունիս քու առջևըդ , և ինչ նենգաւոր սիրտ կըբնակի քու ներսըդ : Աղէկ գիտցիր որ Սատանան և աշխարհը կ'աշխատին որ քեզ մեղքի մէջ ձգեն : Ուշադրութիւն ըրէ քու մասնաւոր մոլութեանդ վրայ , յատկապէս ան մեղքին համար՝ որ դիւրաւ կըպաշարէ քեզ : Ճանչցիր ինքզինքդ . ճանչցիր աշխարհը և Սատանային խարէութիւնները : Ասոնց ամէնը աչքիդ առջին ունենալէդ ետև՝ ի՞նչպէս ծնկան վրայ չես գար աղօթք չես ըներ , թէ որ սրտանց կըփափագիս չարէն ազատուելու համար :

Փորձութիւնները չենկած աղօթք ընելը , ընդհանրապէս կ'օգնէ մեզի որ անոնցմէ ազատ մնանք : Քու աղօթքդ լսելի պիտի ըլլայ՝ որ փորձութեան մէջ չինես . կամ թէ որ երբեմն յանկարծ մեղք գործելու փորձութիւն մը ունենաս՝ աղօթքը պատրաստական զէնք մը պիտի ըլլայ քեզի որ դէմ կենաս անոր :

2 . Երկրորդ՝ աղօթք ըրէ որ ատեն ֆրիրեն դէջ կըգտնուիս : Եհա Տէրն մեր կըսորվեցունէ մեզի որ Ազատութիւն խնդրենք . "Ազատէ մեզ" : Մենք ամենևին չենք կրնար ինքզինքնիս ազատել . թէ որ Յիսուս մեր փրկութեան զօրագլուխը չօգնէ մեզի՝ անպիտի իյնանք : Ասոնց Ինոր բան մը չենք

կրնար ընել , բայց անոր օգնութիւնովը քաջութիւն կ'ընենք . Յհ . կ . 12) :

Մի կարծեր թէ ... փորձութիւններդ ուրիշ մէկը առաջուց քաշած չըլլայ . վասն զի քեզի եկած փորձութիւնները ամէն մարդուալ հասարակ բան մըն է : Թէ որ Քրիստոսի կըհետևինք՝ ճիշդ ան ճամբայէն երթանք ուսկից որ Աբրահամ, Մովսէս , Յոբ , Դաւիթ , Պետրոս , Պօղոս և Յոհաննէս գացին : Ասոնց ամէնքն ալ քաշեցին ան բաները՝ որն որ մենք կըքաշենք , և Յիսուս ամենէն աւելի փորձուեցաւ : Անիկայ միայն առանց մեղաց էր . բայց նախնի սուրբերը մեղի պէս պակասաւոր մարդիկ էին : Յիսուս իր աջ ձեռքովը յաղթեց փորձութեանց . անոնք ալ Յիսուսի դիմադրութիւնը յաղթեցին : Իսկ մենք անոնց ունեցած կարողութիւնը ունենալով՝ էվելօք կը յաղթենք անով որ սիրեց մեզ (Հռ . ը . 37) :

Ընդհանրապէս Աստուած երկու միջոց գործ կ'ածէ փորձութիւն ունեցողներուն օգնելու համար : Պօղոս առաքեալ կ'ըսէ՝ "Աստուած հաւատարիմ է , ձեզ փորձութեան մէջ չի ձգեր ձեր կարողութենէն էվելի . հապա ան փորձութեանը հետ հնարքն ալ կ'ընէ , որ կարող ըլլաք համբերել" . ա Կորնթ . ժ . 13 : Այսինքն՝ կամ փորձութիւնը կըպզտիկցունէ կամ մեր ոյժը կ'էվելցունէ որ համբերենք կամ դէմ կենանք անոր , թէպէտև երկար ատեն

քշելու ըլլայ ան : Երբեմն թէ մէկը և թէ մէ-
կալը միանգամայն կ'ընէ Աստուած : Օրինակի
աղագաւ Յովսէփ գեղեցիկը՝ շնորհքի առաւե-
լութեամբ մը կարող եղաւ դէմ դնել վտան-
գաւոր փորձութեան . ետքը բանտը դրուելով
բոլորովին վտանգէ ազատեցաւ :

Աս դիպուածը կըսորվեցունէ մեզի՝ թէ Ա-
ստուծոյ մեր հետը վարուելուն մէջ շատ բա-
ներ կան որոնք խիստ կրթուին մեզի , բայց
իրօք մեր աղէկութեանը համար են : Որ և ի-
ցէ բան՝ որ փորձութենէ հեռու կըպահէ մեզ ,
Աստուծոյ մէկ ողորմութիւն է ան : Ամէն բան
կրենք՝ բայց մեղքէն զգոյշ կենանք . ինչ որ
պատահելու ըլլայ մեզի , նեղութիւն կամ սաս-
տիկ հիւանդութիւն գուցէ մեր հոգւոյն օգուտ
մըն է . ուստի ասիկայ ըլլայ մեր աղօթքը .
բարերար Տէր՝ միայն չարէն ազատէ մեզ . և
անատենը ամէն բան մեզի օգտակար է :

3 . Դաւ հարկաւոր է [illegible] աղօթք ընել : Մտածենք անգամ մը , թէ յաղ-
թե՞ց մեզի փորձութիւնը , ու մեզաց բռնու-
թեան տակը ինկանք : Թէ որ ասանկ է նէ՝
ոչչափ խոնարհելու պատճառ մը ունինք , ոչ-
չափ թողութեան կարօտութիւն : Ամենեին մը-
խիթարութիւն մը չենք կրնար ունենալ , մին-
չև որ հաւատքով աղօթք չընենք և ըսենք .
"Իմ մեղքերէս երեսդ ծածկէ , ու ամէն անօ-
րէնութիւններս արէ" . Սաղմ . ծա . 9 : Ան-

թէ որ բոլորովին մեղաց մէջ ինկած ալ չենք նէ, միթէ մեղքին արատը մեզ աղտոտած չէ՝, հաղիւ երբէք կը պատահի որ ասանկ չըլլայ։ Մտքերնիս բերենք մեղքէն փախչելնիս, կասկածելով թէ գուցէ աս բանը սրտանց ըրած չենք, և մինչ Յիսուսի նայելով՝ աղաչենք որ մեր վրայ գտնուած մեղքին ամէն արատը մաքրէ, և ինքը ըլլայ մեր կատարեալ արդարութիւնը. կամ թէ որ փորձութեան ատենը կրցանք դէմ դնել մեղքին, և յաղթօղ ըլլալ, անատենը փառք տանք Աստուծոյ ըսելով. "Գոհութիւն Աստուծոյ որ մեզի յաղթութիւն տուաւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռքով". ա Կորնթ. ժե. 57։ Այսու ամենայնիւ՝ դողալով հեծարենք. (Սաղ. բ. 11)։

ԵԳՕԹՐ

Ամենակալ և ամենողորմած Հայր՝ միակ Որդւէն և Օգնութիւն մեր. կ'աղաչենք՝ Դուն առաջնորդէ, օգնէ և աղատէ մեզ՝ աս ցաւալի աշխարհէն անցած ատեննիս, որ չըլլայ թէ՝ յաւիտենական կեանքէն զրկուինք։ Այո՛ ծանրաբեռնեալ ենք մեղքերով. բայց Յիսուսի կընայինք, և կրյուսանք որ անիկայ պիտի լուայ մեր ամէն մեղքերը իր անգին արիւնովը։ Մենք տկար ենք և կարող չենք ինքզինքնիս պահպանելու. վասնոյ կրխնդրենք խոստացեալ օգ-

նութիւնը քու սուրբ Հոգիդ, որ պաշտպանէ, զօրացընէ և սրբէ մեզ։ Մի թողուր, Տէր, որ մեր զօրութենէն աւելի փորձուինք. հապա անկից ազատուելու ճամբան ցուցուր մեզի, որ անօրէնութիւնը մեր կորսուելուն պատճառ չըլլայ։

Ով Տէր Աստուած ամենասուրբ, որ դուն կանչեցիր մեզ սուրբ ըլլալու. որ ատեն կը մեղանչենք՝ մի թողուր որ մեղքը յաղթէ մեզի. դարձուր մեզ անմիջապէս Յիսուսի, որ մեր Քարեխօսն է քու քովդ, որպէս զի ապաշխարելով և անոր հաւատալով՝ մեր մեղքերուն թողութիւն առնենք և զօրանանք։ Մի ձգեր մեզ քու երեսէդ. քու սուրբ Հոգիդ մեզմէ մի հաներ. (Սաղ. ծա. 11)։ Պահպանէ մեզ որ նորէն չհեռանանք քեզմէ. պահպանէ մեզ մինչև ետքը, Յիսուս Քրիստոսի միջնորդութեամբը՝ որ սիրեց մեզ, և որ կը ճանչնայ մեր ամէն տկարութիւնները. Ամէն։

ԳԼՈՒԽ · ԺԷ ։

ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆ ԵՒ ՓԱՌՔ

ՄԿԴ · Զ · 13 ։

Ինչու որ քուկդ է թագաւորութիւնը և զօրութիւնը ։ ու փառքը ։ յաւիտեանս · ամէն ։

ՄՏԱԾԵՆՔ աս խօսքերը՝ որոնցմով Տէրունական աղօթքը կըմենայ · աս խօսքերը՝ սրբազան յաղթանակ մը ու երկրպագութիւն կըպարունակեն ։ Պէտք է որ աղօթքը միշտ օրհնութեամբ ըմենայ · "Օրհնեցէք Տէրը · օրհնեցէք զանիկայ երկինքէն · օրհնեցէք Տէրը երկիրէն" · Սաղ · ճԾը · 1 , 7 ։

"Քուկդ է թագաւորութիւնը" ։ "Մվ Աստուած , քու աթոռդ յաւիտեանս յաւիտենից է · քու թագաւորութեանդ գաւազանը՝ արդարութեան գաւազան է". Սաղ · խե · 6 ։ Քու բոլոր թշնամիներդ քու առջևդ պիտի խոնարհին · բայց քու սուրբերդ քու հետդ պիտի թագաւորեն ։ Քուն՝ ով Տէր Յիսուս , զանոնք լուացիր քու արիւնովդ , և թագաւորներ ու քահանաներ բրիր Աստուծոյ քու Հօրդ (Յայտ · ա · 5 , 6) ։ Տէր՝ քու Հոգիովդ թագաւորէ մեր սրտերուն մէջը · հոն նստէ քու աթոռիդ վրայ նստելու պէս · զսպէ մեր սրբ-

տին ապականութիւնները , և քու օրհնեալ կամքդ օրէնք և բերկրութիւն ըրէ մեզի ։

"Քուկդ է զօրութիւնը" ։ Ամէն իշխանութիւն քու Հօրմէդ տրուած է քեզի , ով երկրպագելի Փրկիչ մեր , երկինքի մէջ ու երկրի վրայ ։ Խրկէ քու ամենակալ Հոգիդ որ քու Աւետարանիդ պաշտօնեաներուն հետը ըլլայ , որոնք տկար մարդիկ են , տկարութիւններով պաշարուած , որ աս գանձը հողէ ամաններու մէջ ունին . (բ Կորնթ . դ . 7) ։ Ինչ որ կըզրուցեն անոնք տկարութեամբ , Քուն հոգւով և զօրութեամբ հաստատէ ։ Ղրկեցէն շնորհք տուր ան Աւետարանիչներուն որ ամէն աշխարհ կ'երթան և Աւետարանը կըքարոզեն ամէն ստեղծուածներուն ։ Օգնացուր անոնց ամէնն ալ՝ ամէն տեղ ուր որ կըցանկան քու փառքիդ համար աշխատիլ ։ Մխիթարէ ան ամէնը որ աղքատ են , բեկեալ սիրտ մը ունին և կըդողան քու Խօսքէդ ։ Նէ անոնց որ երկչոտ են , թէ "մի վախնաք" ։ Ով Տէր՝ ինչու համար պիտի վախնանք մարդոցմէ և սատանաներէն , թէ որ Քուն մեր Ամէն ես , մեր Պաւէնը , մեր Զատիչը և մեր Մուր Ներդը ։ Կըփափագինք սիրել քեզ՝ ով Տէր , որ մեր Օրութիւնն ես ։

"Քուկդ է փառքը" ։ Աշխարհիս բոլոր պատիւները ստուեր մըն են որ շուտով աներևոյթ կ'ըլլան . ինչու համար կըփափագինք անոնց ։

Ինչու կը քալենք սնոտի երևոյթի մը մէջ, և զուր տեղը անհանգիստ կ'ըլլանք։ Բայց քու սուրբերդ փառաց մէջը կը ցնծան. աս աշխարհիս վրայ Թեզմով կը պարծին ամէն օր, և վերը երկինքին մէջն ալ. Դուն կուտաս անոնց փառաց պսակ մը՝ որ անթառամ է. (ա Պետ. ե. 4)։ Այսու ամենայնիւ՝ ով Տէր Յիսուս, ահա մտքերնիս կը բերենք, թէ մենք՝ իբրև փրկուած մեղաւորներ, ամէն բան Թեզմէ կ'ընդունինք։ Թու Լուսէդ է մեր ամէն պարծանքը։ Մի թողուր որ ուրիշ բանով պարծինք։

Բայց ով ամենակարող Տէր երկնի և երկրի, միթէ կ'ուզե՞ս ընդունիլ մեզի պէս մեղաւորներուն գոհութիւնը։ Հաճելի՞ է քեզի կոտրած սրտի մը հառաչանքները։ Հաւատացեալ մը կրնա՞յ խառնել իր ձայնը՝ Սուրբերուն և Հրեշտակներուն փառաբանութեանը երգերուն հետ։ Տէր, մենք կարող չենք բան մը նուիրել քեզի. ինչու որ ամէն բան Թեզմէ կուգայ. և քու թագաւորութիւնդ քու իշխանութիւնդ և քու փառքդ յաւիտենական են։ Բայց մենք կրփափագինք որ քեզի երկրպագութիւն ընող ծառաներուն թիւը գտնուինք, թէ հոս երկրի վրայ, և թէ ետքը երկինքը՝ յաւիտենական օթևաններուն մէջ։

Եւ հիմա՝ աս թողութեան, խաղաղութեան և կենաց դաշինքովը, որ Յիսուս իր արիւնովը հաստատեց. վերստին կը դնենք մեր կնիքը,

մանաւանդ թէ հաւատացեալ սրտի մը կնիքը՝ ըսելով , Ամէն Ամէն : Լսէ , Տէր , մեր ամէն աղօթքներուն , և ընդունէ մեր գոհութիւնները՝ որն՝ որ կըմատուցանենք քեզի մեր ծայրագոյն Քահանայապետին և Քարեխօսին՝ Յիսուս Քրիստոսի անունովը . թող փառք տրուի Ընոր եկեղեցւոյ մէջ յաւիտեանս յաւիտենից , Ամէն :

ԱՂՕԹՔ

Ով Տէր՝ որ կըտեսնես մեր ծոյլ ըլլալը սրտով , և յամր ըլլալը խօսքով , որ ատեն կ'ուզենք գոհութիւն մատուցանել Քեզի . կ'աղաչենք գութ ունեցիր մեր տկարութեանը վրայ : Կենդանացուր մեզ քու մեծ և անթիւ ողորմութիւններուդ խնդալից յիշատակներովը : Ամեր հոգիները՝ և ան ամէն բաները որ մեր ներսի դին կըգտնուին , թող օրհնեն քու սուրբ Անունդ : Քու մեր վրայ ունեցած խնամքդ , քու ներողամտութիւնդ , մեր մեղքերուն տուած թողութիւնդ և քու շնորհքդ՝ որով փորձութիւններուն մէջէն կ'անցունես մեզ , ամէն բան քու սիրալիր գթութիւնդ և մեծ մարդասիրութիւնդ կըյայտնէ : Օգնէ մեզի՝ որ քեզ օրհնելով անցունենք օրերնիս . ու նոքը արժանի ըրէ մեզ քու յաւիտենական փառաց թագաւորութեանդ , մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի միջնորդութեամբը . Ամէն :

ԳԼՈՒԽ • ԺԸ։

ԱՍՏՈՒԾՈՅ ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԻՒՆԸ

Մատ. Օ. 25—34։

Աղօթ համար կ'ըսեմ ձեզի, Որ կեանքին համար մի՛ մտահոգուիք, թէ՝ ինչ պիտի ուտէք, կամ ինչ պիտի խըմէք. ոչ ալ ձեր մարմիններուն համար թէ՝ ինչ պիտի հագնիք. չէ՞ որ կեանքը կերակուրէն աւելի է, ու մարմինը հագուստէն։ Դիտեցէք երկնքի թռչուններուն, որ ոչ կըցանեն և ոչ կը քաղեն և ոչ ամբարի մէջ կը ժողովեն, ու ձեր երկնաւոր Հայրը կը կերակրէ անոնք. չէ՞ որ դուք անոնցմէ աւելի՞ լաւ էք։ Հիմայ՝ ով կրնայ ձեզմէ իրեն մտահոգելովը իր հասակին վրայ կանգուն մը երկընցուցանել։ Ու հագուստի համար ինչու՞ կը մտահոգուիք. Դիտեցէք լեռանը շուշանն ծաղիկին՝ ինչպէս կը մեծնայ. ոչ կ'աշխատի և ոչ կը մանէ։ Բայց կ'ըսեմ որ Սողոմոն ալ իրեն բոլոր փառաւորութեան մէջը անոնցմէ մէկին պէս չի հագնցաւ։ Ուստի՝ թէ որ լեռան խոտը որ այսօր կայ՝ և վաղը փուռը պիտի ձգուի, Աստուած անանկ կը հագնցուցանէ նէ, հապա՞ օրչափ առաւել ձեզ՝ թերահաւատներ։ Ասկէ ետև մի՛ մտահոգուիք ու ըսէք՝ ի՞նչ պիտի խմենք, կամ ինչ պիտի հագնինք, (Ինչու որ ամէն ատ բաները հեթանոսները կը ենդրեն.) վասն զի ձեր երկնաւոր Հայրը գիտէ թէ՝ ամէն ատ բաները ձեզի պէտք են։ Պինա առաջ Աստուծոյ թագաւորութիւնը խնդրեցէք և անոր արդարութիւնը, ու ամէն ատ բաները ձեզի կ'էվելնայ։ Ասկէ ետև վաղվան համար մի՛ մտահոգուիք՝ ինչու որ վաղվան օրը իրեն բանէրուն համար պիտի մտահոգուայ. Հերիք է օրվան՝ իրեն պատահածը։

Մարդս ներդութիւն կրելու համար ծնած է։ Ընթիւ բաներու կարօտութիւն ունի ան, անթիւ երկիւղներ ունի։ Քրիստոնեայ մը որ

առաւօտուն անկողինէն կ'ելլայ գոհութիւն և փառաբանութիւն մատուցանելով Աստուծոյ, կարելի է որ՝ եթէ աղէկ զգուշութիւն չունի նէ, իրիկուն չեղած աշխարհային բանով մը զբաղի իր միտքը. և ասիկայ երթալով կըշատնայ, անանկ որ՝ խիստ ծանր բեռ մը կ'ելլայ իրեն, որ չկրնար վերցընել։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս՝ աս խօսքերովը կըսորվեցունէ մեզի թէ ինչպէս պիտի բժշկենք աս սրտի նեղութիւնը որ մտմըտալէն յառաջ կուգայ։ Անիկայ Աստուծոյ որդւոցը միտքը կը ձգէ թէ իրենց երկնաւոր Հայրը գիտէ թէ ինչ բաներու հարկաւորութիւն ունին անոնք։ Ասոնց օդային թռչուններուն և դաշտերու ծաղկանց նկարագրութիւնը կ'ընէ ան։ Թռչունները ի՞նչ թեթեւութեամբ կըթռչին. ո՞վ կըկերակրէ զանոնք. ի՞նչ պայծառութիւն մը կ'ունենան դաշտերը գոյնզգոյն ծաղիկներով. ո՞վ կըզարդարէ և ասանկ գեղեցկութիւն մը կուտայ անոնց։ Ամէն մէկ ծաղիկը և ամէն մէկ թռչունը որ կըտեսնենք, մէյմէկ քարոզ կուտան մեզի։ Ասոնց ամէնն ալ կըքարոզեն Աստուծոյ կարողութիւնը՝ իմաստութիւնը և սէրը, որ կըբանայ իր ձեռքը և ամէն բանին կարօտութիւնը կըլեցունէ։ Ասոնց ամէնն ալ յայտնապարարաւ կ'ըսեն մեզի, թէ՝ "Աստուած պիտի հոգայ"։

Բայց դուն անմիջապէս պատասխան կուտաս.

"Թէպէտև երբեմն մէկ օրուան մէջ բաւական ստակ կը շահիմ, այսու ամենայնիւ չեմ կրնար ըսել թէ վաղուան օրը ինչպէս պիտի անցունեմ իմ ընտանեացս հետ"։ Ղէկ. բայց հերիք է մէկ օրուան իրեն հոգը, վաղուան օրը իրեն Բ-ռնէրուն համար պիտի մտմրտայ։ Թէ որ կրտնեն որ Աստուած օգնեց քեզի մէկ օր մը, չե՞ս հաւատար որ անիկայ կարող է անվտանգ անցունել տալու քեզի մէկ ուրիշ օր մը։

Թէ որ քու աշխարհասէր հոգիդ կը մտածէ թէ ինչ պիտի ուտէ և ինչ պիտի խմէ, և շատ տարիներու համար աս մտածմունքը կը-նէ, յայտնի է որ Աստուծոյ հոգողութեանը վրայ տարակոյս ունիս, և հետևարար իրաւունք է որ Աստուած՝ քու հոգողութեանդ ձգէ քեզ։ Հանցանքը քուկդ է թէ որ աս վիճակիս մէջ գտնուիս նէ։ Պտոյդ է որ շատ անգամ պիտի մտմրտանք մեր օրինաւոր կոչմանը վրայով, բայց չէ թէ մտատանջութեամբ պիտի բլլայ աս բանը. աշխատութիւնը և ճարտարութիւնը պարտք մըն է մեզի, և առաջուց մտածելը՝ իմաստութեան մէկ մասն է. բայց չափազանց հոգևորով սիրտ մաշեցնելը մեղք է։

Ահա ես կը ծանուցանեմ քեզի թէ որն է ան մի միայն հարկաւոր բանը՝ որուն համար կրպարտաւորինք մեծ հոգ ունենալ։ Ցերն մեր կը հրամայէ մեզի՝ պինտ առաջ Աստուծոյ թագաւորութիւնը խնդրել և անոր արդարութիւ-

նը։ Մտածէ թէ հոգին որչափ աւելի պատուա-
կան է քան թէ մարմինը։ Տես ինչ արժէք
դրաւ Յիսուս մեր հոգիներուն, ինքը անոնց
համար մեռնելով։ Մի՞թդ բեր թէ ինչպէս
անօթի և ծարաւ էր ան աղքատօրէն ապրելով
աշխարհիս վրայ, և վերջապէս դառն մահուամբ
մեռնելով խաչին վրայ։ Եւ անատենը յիշէ,
թէ ան գորովագութ Փրկիչը աս խոստմունքը
կ'ընէ ամէն մէկ հաւատացեալին. "Քեզ չի
պիտի ձգեմ". Եբր. ԺԳ. Ե։

Կուցէ ըսես. "բայց ինչպէս պիտի չմտա-
ծեմ որ իմ բոլոր գործքերս գէշի երթալու
վրայ են"։ Ասանկ դիպուածներու մէջ՝ գիտ-
նաս որ հաւատքը կը դրդէ մեզ աղօթք ընել
մասնաւոր իմաստութիւն մը առնելու, փոր-
ձութեան ժամանակին համար, որ յոյս ունե-
նանք և աշխատինք թէ վերջը աղէկ պիտի ել-
լայ, աւելի զգուշութիւն ընենք և Աստուծոյ
կամացը յանձնենք ամէն բան։ Ու ինչպէս որ
խրկեց Եղիա մարգարէն Սարեփթայի այրի
կնկանը, անոր պակասը լեցունելու համար, այս-
պէս անակնունելի եղանակաւ մը կրնայ անիկայ
քու պակասութիւնդ ալ լեցունելու. միայն թէ
սրվէ՞ որ ըսես հաւատքով. "Տէրը հովիւս է".
անատենը կրնաս ետքի խօսքն ալ ըսել. "Ոչ
բանի մը չի պիտի կարօտիմ" Սաղմ. իգ. 1։

Սիրելի՛ բարեկամ, կ'աղաչեմ որ քու ամէն
նեղութեանդ մէջ լսես Յիսուսի ձայնը որ կը

հրաւիրէ քեզ ըսելով · Ելէ՛ եկո՛ · մտածէ թէ ինչպէս պատրաստ է ան քու խիստ ծանր բեռդ , այսինքն մեղքերդ , վերցընելու քեզմէ : Հաւատան է որ անոր մօտենաս , անոր ետեւէն երթաս հաւատքով , սիրով և սրբութեամբ : Գեղեցիկները անոր համար կրեարկէ Աստուած՝ որ իր ծառաները իրեն քաշէ : Երբեմն անիկայ պիտի ըսէ քեզի · "Թերահաւատ ինչու երկրայեցար" · Մատ · ԺԴ · 31 : Ընտանեաց պատասխանէ անոր · "Կրհաւատամ Տէր՝ օգնէ իմ անհաւատութեանս" · Մարկ · Թ · 23 :

Հա քու միտքդ կը ձգեմ ան կարճ աղօթքը որ շարունակ կ'ըսենք · "Մեր ամէն աւուր հաց՝ ասօր մեզի տուր" : Որովհետև ասիկա խօսքը · և երանի թէ շնորհք առնէիր Աստուծմէ բոլոր սրտովդ ըսելու · "Իմ անձս ըսաւ , թէ Տէրը իմ բաժինս է , վասնորոյ անոր պիտի յուսամ" Աղբ · Գ · 24 :

ԱՂՕԹՔ

Յաքերաթ Աստուած և Հայր , որ քու աչքերդ արդարներուն վրայ է , և քու ականջներդ բաց են անոնց աղօթքները լսելու : Կ'աղաչենք որ շնորհք տաս մեզի ճշմարտապէս ճանչնալ Քեզ , և անանկ կենդանի հաւատք մը ունենալ քու սիրելի որդւոյդ Յիսուս Քրիստոսի վրայ , որ կարող բլլանք ամէն ատեն

քու ողորմութեանդ ապաւինելու։ Օրհնութիւն տուր մեզի որ առանց տրտունջ կամ երկբայութիւն ունենալու ընդունինք ամէն բան՝ Քեզմէ եկածի պէս։ Մեր ամէն վախերուն և վիշտերուն մէջը շարունակ փառք տանք, և մեր ամէն հոգը քեզի յանձնենք, հաստատ գիտնալով՝ որ Դուն կը հոգաս մեզ։

Տէր, վար նայէ ամէն անոնց վրայ որ նեղութիւն կրկրեն։ Ողորմէ աղքատին և կարօտելոյն, երեսի վրայ մնացածին և նեղութեան մէջ եղողին, որբին և այրիին, տկարին, հիւանդին և մահուան դուռը հասնողին։ Անանուորապէս՝ ողորմէ ազգերին և ամբարշտին. արմնցուր և քաջալերէ զանոնք որ իրենց հոգիները հոգան. և առաջնորդէ անոնց որ Յիսուս Քրիստոսի հաւատալով՝ փրկութիւն փընտրեն։

Ազատէ մեզ՝ Տէր, մարմնաւոր և աշխարհային մտածմունքներէն. քու սուրբ Հոգիովդ լեցուր մեզ, որ կարող ըլլանք հոգևորական բաներու վրայ սէր ունենալ։ Ինչ որ պատահելու ըլլայ մեզի աս աշխարհիս մէջը՝ օգնէ մեզի որ ուրախութիւն ունենանք ան պատուական պարգևներովը, որոնց համար ապահովութիւն և ստուգութիւն տուած ես մեզի, միջնորդութեամբ և բարեխօսութեամբ քու Որդւոյդ՝ մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի. Ամէն։

ԻԼՈՒԽ · ԺԹ ։

ՀՈՒՆՁԻ ՄՇԱԿՆԵՐՈՒՆ ՆՈՒՆԱՁՈՒԹԻՒՆԸ

ՄԱՐԴ · ԹԻ · 36—38 ։

Եւ ժողովուրդները տեսնալով՝ անոնց վրայ խղճաց · ինչու որ հոգնած ու ցիրուցան եղած էին՝ հովիւ չունեցող ոչխարներու պէս ։

Ընտանեաց բաւ իր աշակերտներուն · հունձքերը առատ են , բայց մշակները քիչ ։

Ուստի հունձքերուն Տէրոջը աղաչեցէք , որ մշակ հանէ իր հունձքերուն ։

Թէ որ գիտնայինք թէ ինչ արժողութիւն ունին մեր անմահ հոգիները , ինչպէս որ գիտէր Յիսուս , մենք ալ անոր պէս գութ և կարեկցութիւն կ'ունենայինք այնքան բազմաթիւ մեղաւորներուն վրայ , որոնք ցիրուցան եղած հեռացեր են իրենց բարի Հովիւէն և անոր աղէկ արծելիքէն ։

Երբ որ կը տեսնենք թէ այնքան բազմութիւն մարդկան կիրակի օրերը ասդին անդին կը թափառին , մեղսալից զբօսանքներու և հեշտութիւններու տուած ըլլալնը , հնար է որ չտրտմինք ։ Ընոնք անշուշտ մոլորուեր ու Դրիսոսոսի փարախէն դուրս ելեր են ։ Յիրաւի ամէն անգամ երբ որ կը տեսնենք բազմաթիւ մարդիկ մէկ տեղ հաւաքուած ՝ որ և իցէ պատճառաւ ,

բնականաբար կ'ըսենք թէ . "Հաւանական է որ ասոնց շատերը հովիւ չունեցող ոչխարներու կընմանին" :

Ձե՞նք լսեր նաև թէ հաղարաւոր և միլիոնաւոր անձինք կրգտնուին հեթանոսաց երկիրներուն մէջ՝ որոնք ոչ Աստուածաշունչ ունին, ոչ Աւետարանի պաշտօնեայ , ոչ Քրիստոսի մխիթարիչ խօսքը և ոչ սուրբ և մաքուր պաշտօն մը : Որչափ գութ և կարեկցութիւն պարտինք ունենալ անոնց համար , և ջանք ընել որ անոնք ալ լուսաւորուին :

Նախանձաւոր քրիստոնեաները այնքան խորին զգացում մը կ'ունենան հեռաւոր հեթանոսներուն համար , և ան քրիստոնեաներուն համար ալ՝ որ իրենց վարմունքը հեթանոսներուն վարմունքէն տարբերութիւն մը չունի , որ կ'ըսեն . "Երանի թէ կարող ըլլայինք երթալ և ամէն տեղ Քրիստոսի Աւետարանը քարոզել . երանի թէ հաղար լեզու ունենայինք , իր Անունովը փրկութիւն քարոզելու" :

Բայց որչափ որ կրբաղձանք և նեղութիւն կրկրենք , այսու ամենայնիւ քարոզիչներուն և ուսուցիչներուն թիւը միշտ քիչ է . "Հունձը շատ են , բայց մշակները քիչ" : Կրնայինք որ մէկ տեղ մը հաղարաւոր և բիւրաւոր , ուրիշ տեղ մը միլիոնաւոր մարդիկ կրմեռնին . ասոնց համար պարտինք վախենալ թէ գուցէ չէին ճանչնար զՔրիստոս , գուցէ անյոյս և

անաստուած կ'ապրէին աշխարհիս մէջը։ "Բրդեաք ի՞նչ կրնանք ընել անոնց համար", ցաւալի սրտով կ'ըսեն Քրիստոսի աշակերտները։

Բայց Տէրն մեր արդէն ըսած է մեզի թէ ինչ պիտի ընենք ասանկ պարագայի մը մէջ։ Ընիկայ կը հրամայէ մեզի որ աղաչենք հունձերուն Տէրոջը։ Թէ որ մտադրութեամբ աղօթելու ըլլանք, Աստուծոյ Հոգին կ'առաջնորդէ մեզի ամէն հնարաւոր բաները ընելու մեղաւորները դարձի բերելու համար։ Ընձանձիր և սրտանց աղօթքը՝ մեր առաջին և անհրաժեշտ պարտաւորութիւնն է. նաև մեր արտօնութիւնն է ասիկայ, ինչու որ մեծ քաջալերութիւն մըն է մեզի գիտնալը թէ Յիսուս պիտի լսէ աս աղօթքը՝ որն որ ինքը հրամայեց մեզի որ ընենք։

Ընիկայ կը յորդորէ մեզ Իրեն նայիլ՝ հունձերուն Տէրոջը նայելու պէս, և աղաչել՝ "Որ Ընիկայ մշակ հանէ իր հունձերուն"։ Թէ որ ինքը չհանէ՝ մէկը չերթար. գոնէ անանկ մէկը որ ուզիղ սիրտ ունենայ։ Ինոնք որ կ'երթան առանց Տէրոջմէն խրկուելու, անշուշտ անոնց բոլոր աշխատութիւնը փուճը կ'երթայ։

Յիսուս միայն կարող է գործերու բաւականութիւն տալ ամէն մէկուն։ Աշնտարանի պաշտօնեայ մը թէ իր հայրենեացը մէջ և թէ ուրիշ տեղ աշխատի, պէտք է որ սուրբ ըլլայ Տէրոջը, և Յիսուսէն զատ մէկը չկրնար սուրբ

քնելու զանիկայ։ Քրիստոսի ծառաները՝ երբ որ կոչուած են խօսքը քարոզելու, քաջասրտութիւն պիտի ունենան. և միայն սուրբ Հոգիին օգնութեամբը կրնան անոնք համարձակ բերան բանալ՝ Աւետարանին խորհուրդները ծանուցանելու համար։ Հատ հարկաւոր է անոնց որ գորովասիրտ ըլլան. և աս շնորհքն ալ անկից միայն կ'առնուի որ արցունք և արիւն թափեց մեղաւորներուն համար։ Հարկաւոր է անոնց որ իմաստութիւն ունենան. որն որ միայն Քրիստոսի Հոգին կրնայ տալ անոնց։ Հարկաւոր է որ համբերութիւն ունենան. աս ալ նմանապէս միայն անկից կըսորվուի որ իր խաչը յանձն առաւ, որ համբերից մեղաւորներուն իրեն դէմ հակառակ կենալուն. (Եբր. ժբ. 2, 3)։ Եւ իրենց ամէն աշխատանքէն ետքը՝ ամենեին յաջողութիւն մը չեն ունենար, թէ որ հունձին Տէրը հունձ չտայ նէ անոնց։ Պօղոս կըտնկէ Ապողոս ջուր կուտայ, բայց Աստուած միայն կ'աճեցունէ։ Թէ որ Յիսուս հաճի անոնց աշխատութեանը՝ անատենը իրենց զրուցած խօսքերը ամենեին փուճը չեն երթար։ Թէ որ մենք կըսիրենք Աւետարանին փաստը՝ պարտինք նախանձաւորութեամբ օգնել ամէն հաւատարիմ պաշտօնեաներուն կամ քարոզիչներուն։ Պիտի ցնծանք նաև մտածելով թէ ինչ մեծ փոխարէն պիտի ունենան անոնց աշխատութիւնները. հազարաւոր և բիւրաւոր

անձինք՝ անոնց քարոզութեամբը Փրկչին դառնալով ։

Երանելի՛ են անոնք որ Քրիստոսի համար ասանկ կ՚աշխատին ։ Անոնք շատ փորձառութիւններու կանչուած են . բայց շատ երջանիկ գործ մըն է անոնց ըրածը երկրի վրայ , և մեծ է անոնց վարձքը երկինքի մէջ ։ Ան թէ որ երթային անոնք մէկ խրճիթէն մէկալը , և միայն մէկ աղքատ , մեղաւոր և խղճալի հոգի մը Քրիստոսի բերէին , ան մէկ հոգին բովանդակ աշխարհէս շատ աւելի արժողութիւն կ՚ունենայ ։ "Անոնք որ արցունքով կըցանեն , ցընծութիւնով կըհնձեն ։ Ցանելու սերմը տանելով լալով ելլող երթողը , անշուշտ ցնծութիւնով եւ պիտի դառնայ իր ցորենի խուրձերը բերելով" . Սաղմ . ՃԻԶ . 5 , 6 ։

ԱՊՕԹՔ

Աստուած ամենակալ , որ քու որդւոյդ Յիսուս Քրիստոսի խոստացար՝ հեթանոսները իրեն ժառանգութիւն տալու , և երկրին ծայրերը իրեն ստացուածք (Սաղմ . Բ . 8) , լսէ քու ծառաներուդ աղաչանքը , որ գիշեր ցորեկ կ՚աղաղակեն Քեզի , խնդրելով որ աշխարհս՝ Տէրոջը փառքին գիտութիւնովը լեցուի ։ Շուտով հասցուր ան երանելի ատենը , երբ որ հրէաները և հեթանոսները ամէնքն ալ իրենց Փրը-

կիչ , իրենց Մարգարէ . և իրենց Մեծագոյն պիտի ընդունին զՅիսուս : Ընոր ամէն թշնամիները իր ոտքին տակը դիր . թափէ քու Հոգիդ ամէն մարմինի վրայ , և քու անբաւ ողորմութեամբդ ամէն ազգերը՝ հաւատոյ հնազանդութեան առաջնորդէ :

Ո՛վ Տէր , աւելի մշակներ հանէ քու հունձերուդ . քու Եկեղեցիդ սուրբ Պաշտօնեաներ և Վերակացուներ շնորհէ , որ Քրիստոսի Հոգին ունենան անոնք : Հովիւներ հանէ քու սրտիդ համեմատ . որ աղօթասէր մարդիկ ըլլան , ու քու սուրբ Հոգիդ շնորհքովը՝ գթութեամբ և խոնարհութեամբ , իմաստութեամբ և համբերութեամբ , արթնութեամբ և սիրով զարդարուած : Գուն մաքրէ , տարածէ և հաստատէ քու Եկեղեցիդ , և միշտ պաշտպանէ զանիկայ , որ դժոխքին դրռները չկրնան անոր յաղթելու :

Քու Խօսքիդ ամէն հաւատարիմ քարոզիչները , թէ հոս և թէ ուրիշ երկրի մէջ , օրհնէ Տէր , որ միշտ աւելի յաջողութիւն ունենան և քու շնորհքովդ զարդարուն ըլլայ իրենց հոգին : Մխիթարէ զանոնք իրենց ամէն տառապանքին մէջ . առաջնորդէ անոնց՝ իրենց ամէն տարակուսանքին և նեղութեանը մէջ . օգնէ անոնց՝ իրենց ամէն տկարութեան և փորձութեան ատենը : Ամէն չար գործքէն ազատէ զանոնք : Եւ վերջապէս՝ շատ հոգիներ շնոր-

հելէն եւս անոնց , որ իրենց ուրախութեան պատկ ըլլայ , ընդունէ զանոնք քու յաւիտենական թագաւորութեանդ մէջ , մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի միջնորդութեամբը · Ամէն :

ԳԼՈՒԽ · Ի :

ՅԻՍՈՒՍ ԽԱՉԵՆԱԼ

ՄԱՐԿ · ԻԵ · 26—50 :

Ընտանեաց Յիսուս խարարքան արձրկեց անոնց , և Յիսուսը ծնանելով ձեռքերնին տուաւ՝ որ խաչի ։

Ընտանեաց գաւառարին զինուորները պալատին ներսը առին Յիսուսը , ու բոլոր գինուորներուն գունդը անոր վրայ ժողվեցին · մերկացուցին զերը՝ և կարմիր վերարկու մը հագցուցին անոր ։

Ու փուչերէ թագ մը ոլորելով՝ իր գլուխը դրին , և եղէգ մը իր աջ ձեռքը · և անոր առջեւը ծնկան վրայ գալով՝ ծաղր կ'ընէին ու կ'ըսէին · Ողջ կեցիր Հրէից թագաւոր ։

Ու թքնելով անոր վրայ՝ եղէգը կ'առնէին և անոր գլուխը կը ծեծէին ։

Եւ երբոր ծաղր ըրին անիկա՝ կարմիր վերարկուն վրայէն հանեցին , ու իր լաթերը իրեն հագցուցին , և տարին անիկա խաչը հանելու ։

Եւ դուրս ելան՝ Կիւրենացի մարդ մը գտան Սիմոն անուանով , անիկա բռնեցին՝ որ անոր խաչը վերցուներ ։

Ու եկան Գողգոթա բսած տեղը , որ է՝ գլուխ կարելու տեղ ։

Իրեն գինին տալին լեղիով խառնած՝ որ խըմի , և երբոր համը առաւ , խմել չէր ուզեր ։

Եւ խաչը հանեցին անիկա · անոր լաթերն ալ վիճակով բաժնեցին , որ մարգարէին բսած խօսքը կատարվի · իմ լաթերս իրենց մէջը բաժնեցին , և իմ կապայիս վրայ վիճակ ձգեցին ։

Ու նրատեր անիկա կըպահէին ։

Եւ անոր գլխուն վրան իր յանցանքը գրված՝ գրին , թէ՝ Անիկա է Յիսուս Հրէաներուն թագաւորը ։

Ասատանը անոր հետ երկու գողեր ալ խաչեցին . մէկը անոր ոչ դիէն , և մէկալը՝ ձախ դիէն ։

Եւ անոնք որ կ'անցնէին՝ կըհայհոյէին անոր գլուխին կը շարժէին՝ ու կ'ըսէին ։

Վա՜խ՝ որ տաճարը կըքակէիր , և իրեք օրը կըշինէիր ան . դուն քեզ ապրեցուր . թէ որ Որդի Աստուծոյ ես՝ իջի՛ր ատ խաչէդ ։

Անանկ ալ քահանայապետաները կարդացողներուն և ծերերուն հետ ծաղր կ'ընէին՝ ու կ'ըսէին .

Ուրիշները ապրեցուց , ինքզինքը չի՛ կրնար ապրեցուներ . թէ որ Իսրայէլի թագաւորն է՝ թող իջնայ հիմա խաչէն , և իրեն հաւատանք ։

Թէ որ Աստուծոյ յուսացեր է , հիմայ թող փրկէ ատիկա , ինչու որ ըսաւ թէ՝ Ես Որդի Աստուծոյ եմ ։

Իր հետը խաչված գողերն ալ նոյնպէս կընախատէին անիկա ։

Եւ օրվանը վեց ժամէն մինչև ժամը ինը բոլոր երկրին վրայ խաւար եղաւ ։

Եւ ժամը իններն Յիսուս մեծ ձայնով մը կանչեց՝ ու ըսաւ , Էլի՛ Էլի՛ լամա սաբաքթանի , որ ըսել է թէ՝ Աստուած իմ՝ Աստուած իմ , ինչո՞ւ թողուցիր ։

Անոնցմէ ոմանք՝ որ հոն կայներ էին , երբոր լսեցին՝ կ'ըսէին , Անիկա Եղիան կըկանչէ ։

Եւ շուտ մը անոնցմէ մէկը վազեց սպունգ մը առաւ քացախով լեցուն , ու անցուց եղէգի մը՝ տրվաւ անոր որ խըմէ ։

Ու մէկայնները կ'ըսէին՝ թող տուր նայինք թէ Եղիան կուգայ ատիկա ազատելու ։

Եւ Յիսուս գարձեալ մեծ ձայնով մը կանչեց՝ ու հոգին արձակեց ։

Մեր փրկչին խաչին տակը շատ սորվելու բաներ կան . որոնք հնար չէ որ ուրիշ տեղ անանկ ազէկ սորվինք ։ Խաչին մօտենանք ուրեմն հաւատքով , և աղաչենք որ Քրիստոսի Հոգին մեզի հետ ըլլայ , որ ատեն իր խաչելութիւնը և մահուանը վրայով կըմտածենք ։

Մեղքին դէմ՝ թեանը և դառնութեանը՝ ասկէ մեծ ապացոյց կ'ըլլայ , երբ որ կրնանենք որ մեր Փրկչին ամենապատուական արիւնը թափել կուտայ : Բայց ասով՝ մեծ ապահովութիւն մը տրուած է հաւատացեալ քրիստոնեաներուն , թէ Աստուած՝ ալ պիտի չխնայէ իրենց մեղքը և իրենց անօրէնութիւնը : "Յիսուս Քրիստոսի անոր Որդւոյն արիւնը մեզ ամէն մեղքերէն կը սրբէ" . ա Յհ . ա . 7 : "Ահա Աստուծոյ Գառը , որ աշխարհի մեղքը կը վերցունէ" . Յհ . ա . 29 :

Ո՞հ , ի՞նչ հրաշալի զիջումն կրցուցընէ մեր Փրկիչը , այնչափ խոնարհելով՝ մեզ փրկելու համար . ինչ ցաւ և ինչ տագնապ կրկրէ ան խարազանով ծեծուելէն , փշեայ պսակէն և ան բևեռներէն որ իր ձեռքերը և ոտքերը ծակեցին : Ընիկայ չծածկեց իր երեսը նախատինքէն և թուքէն . անիկայ մարդոց ծաղրը կրեց , և ան որ ամենէն դժուարն էր՝ համբերեց որ իր Հայրը իր երեսը ծածկէ իրմէն : Ընիկայ անէծք եղաւ մեզի համար , ու հեղութեամբ իր գլուխը մեռնելու խոնարհեցուց ըսելով . "Ամէն բան կատարուեցաւ" . Յհ . ժթ . 30 :

Ի՞նչ պիտի հատուցանենք անոր՝ ասոր ըրածին փոխարէն , որով այսքան սիրեց մեզ և ինքզինքը մեզի համար տուաւ :

Մենք չենք կրնար պատուել զանիկայ աւելի յարգութեամբ , եթէ ոչ՝ հաւատքով միայն .

մանաւանդ թէ ան հաւատքովը որ սիրով կը յաջողի . (Գաղ . ե . 6) : Յիսուսի նայելով՝ պիտի զգանք որ մեղքին ծանրութիւնը հեռացեր է մեզմէ . և որովհետև թանկագին ծախուառնուած ենք , պարտինք յօժարակամ ծառայել անոր , մտքերնիս բերելով թէ հիմա մենք մերը չենք . Յիսուս է մեր Փրկիչը և Տէրը :

Մտածէ ինծի հետ՝ սիրելի՛ բարեկամ , մտածենք թէ Քրիստոսի հաւատացողը ինչ կերպով իր սրտի ուխտերը պիտի ընէ խաչին առակը : Պէտք է որ ըսէ ան՝

1 . Ես պարտիմ ծածկել իմ երեսս ամօթով և տրտմութիւնով , յիշելով իմ մեղքերս՝ որոնք իմ Փրկիչս խաչը հանելու պատճառ եղան :

2 . Ես պիտի մերկանամ հին մարդը . հոս իմ ամէն մեղքերս խաչը պիտի հանեմ . իմ սիրելի մեղքս , ան մեղքը՝ որ դիւրաւ կուգայ կըպաշարէ զիս : Պիտի չմնայեմ աջ ձեռք մը կամ աջ կողմի աչք մը . պիտի հագնիմ նոր մարդը . պիտի հագնիմ զՅիսուս Քրիստոս :

3 . Ես տեղս թող մեռնի զգայասիրութիւնը , ամէն անհոգութիւնը , հանգստութեան սէրը և մեղանչական հեշտութիւնները : Ես պիտի մտածեմ ես թէ ինչպէս Յիսուս չուզեց խմել ան քացախը լեղիով խառնած . որն որ տուին իրեն իր զգայութիւնները թմրեցունելու

համար , որպէս զի ցաւ չզգայ ։ Որ՝ինչպէս կը համարձակի ուրեմն ան որ Յիսուսի եռեւեն կ'երթայ , իր մարմինը մեռանչական հաճոյքներով , կամ գէշ ցանկութիւններով պարարել ։

4 . Ես խաչին տակը կ'ուրանամ անձնասիրութիւնը և ինքնահաւանութիւնը . ինչ ողորմելի մարդ մըն եմ ես , որ շատ անգամ աս անձնասիրութեան նեղ տունը կըդառնամ , իմ յատուկ կամքս կըփնտռեմ , իմ յատուկ շահս , իմ յատուկ համարմունքս և իմ յատուկ հաճոյքս ։ Ո՛րչափ տարբեր է իրմէ խաչեալ Փրկիչը . քանզի՝ "Քրիստոս չէ թէ իր անձին հաճոյ եղաւ" . Հռոմ . ԺԵ . 3 . "Նոր դուն մեծութիւններ կըխնդրես քեզի . Մի խնդրեր" . Երէմ . խե . 3 ։

5 . Ես տեղս թող հպարտութիւնը խոնարհի . "Տէր՝ ես ամբարտաւան չեմ մտքով , ես երբէք հպարտ նայուածք մը չունիմ" ։ Ասանկ կ'ըսեմ երբեմն . բայց շատ անգամ այնպէս կ'երևայ ինծի , որ բերնով միայն կըըսուցեմ աս խօսքը ։ Տէր , իմ աչքերս յառեալ պահէ միշտ խաչին վրայ , եթէ ոչ՝ հպարտութիւնը և ունայն փառասիրութիւնը շուտով նորէն կ'ուռոնցընեն իմ սիրտս ։

6 . Հոս տեղս՝ մէկ դի կրձգեմ իմ անձիս արդարութեամբը աղտեղեալ հանդերձները . ու չեմ վստահիր երբէք իմ ըրած կամ ընելու աղէկ գործերուս . այլ յառաջ կըբերեմ մի-

այն՝ Քրիստոսի քաւիչ արիւնը, իր ընդունելի պատարագը, Աստուծոյ գառին Անունը, որ մորթուեցաւ աշխարհի մեղքը վերցուներու համար։

7. Հոս թող մեռնի ամէն բարկութիւն և վրէժխնդրութիւն. թէ որ թշնամիներ, հալածիչներ կամ զրպարտիչներ ունիմ, ահա ես Յիսուսի պէս՝ անոնց համար աղօթք կ'ընեմ Աստուծոյ որ թողութիւն շնորհէ անոնց, և դարձ տայ անոնց սրտին։

8. Հոս թող մեկ դի ձգուի ագահութիւնը։ Ըրլայ որ ես Յուդայի պէս ընեմ. չըրլայ որ Քրիստոսով ստանալու օգուտս ծախեմ աշխարհային շահու մը համար։

9. Հոս թող զսպուի անհամբերութիւնը։ Իմ փրկիչս ձանձրալի գիշեր մը անցուց բանտին մէջը. առտուանց մեկ տեղէն մեկալը քաշկըռտելով տարին զանիկայ. նոյնը խաչափայտով բեռնաւորեցաւ. ապա վեց ժամ խաչին վրայ կախուած մնաց, մեծ չարչարանք կրելով, ու իր Հօրը երեսը իրմէն ծածկուելով. պիտի տրտմի՞մ ուրեմն թէ որ ես նեղութեան մէջ կրգտնուիմ. կամ պիտի ձանձրանամ արդեօք իմ երկնաւոր Հօրս տուած խրատէն, որ իմ օգտիս համար է։

10. Հոս թող լռէ, ալ մէյմէն ալ բերան չբանայ անհաւատութիւնը։ Ա՜հ, ասկից աւելի ի՞նչ կ'ուզէի ես. ի՞նչ աւելի հաստատ

ապացոյց մը ան մեծ սիրոյն Աստուծոյ , որ մեզի պէս ողորմելի մեղաւորներուն ցուցուց : "Ան որ իր Որդւոյն չխնայեց , հապա մեր ամենուս համար մատնեց անիկայ . ալ ինչպէս անոր հետը ամէն բաները մեզի չպարգևեր" : Հռոմ . ը . 32 : Հոս թող շատնայ ուրեմն իմ Հաւատքս , Յիսուս և Աէրս :

11 . Ասիկայ թող ըլայ իմ ամէն պարծանքս : Այս ոյիտի չամչնամ երբէք Յիսուսէ և իր սուրբ խօսքերէն . "Բան լեցի որ պարծենամ . հապա միայն թէ մեր Տէր Յիսուս Քրիստոսի խաչովը . որ անով աշխարհ ինծի խաչը ելած է , ես ալ աշխարհի" . Գաղ . զ . 14 :

12 . Հոս՝ ով Աստուած իմ , հաստատէ իմ սիրտս քու ուխտիդ վրայ . Այս Քրիստոս եմ , չէ թէ բոնի՝ այլ յօժար կամքովս , մանաւանդ թէ երախտագէտ սրտով : Պահէ զիս փրկչին ողորմութեանը և սիրոյն համար , որ ես շարունակ Քրիստոս ըլլամ յաւիտեանս յաւիտենից . Ամէն Ամէն :

ԵՊՕԹՔ

Ով Տէր . Հայր մեր երկնաւոր , որ անանկ սիրեցիր աշխարհը՝ մինչև որ քու միածին Որդիդ Յիսուս Քրիստոս մեռնելու տուիր մեր փրկութեանը համար : Շնորհք տուր մեզի որ

հաստատութեամբ հաւատանք աստուածային աս մեծ խորհուրդին։ Որոշորովին լուա՛ և մաքրէ մեզ՝ մեր անօրէնութիւններէն անոր պատուական արիւնովը։ Օծրացո՛ւր մեզ անոր սիրոյն և ծառայութեանը մէջ, որ փրկեց մեզ իրեն համար. և կարող ըրէ մեզ որ միշտ անոր խաչովը պարծենանք, որն որ մեր միակ յոյսն է։

Տէր բարերար, մեր սրտերը Քեզի հետ միաւորէ Յիսուսի միջնորդութեամբը, և քու Հոգիդ զօրութեամբը, որ հիմա մէկ ըլլանք քեզի հետ, ու ետքը քու յաւիտենական փառաց թագաւորութեանդ մէջ մտնենք, միջնորդութեամբ Տեառն մերոյ Քրիստոսի.

Ամէն։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Ում ՍՍՌ
Ա. Մասիսյանի անվան